

«Այ Փի Էս Սի»

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Sociology is first of all responsibility™



ՓԱՍՏԱԹՈՒՂԹ.

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐ.

ՀՀ-ում կյանքի որակի ցուցանիշի
գնահատում (QL Index)
հետազոտություն մեթոդաբանություն

Աննա Մակարյան,
Անետա Բաբայան, տ.գ.թ.

Նոյեմբեր, 2010թ.

*Մշակված է «Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական
խորհրդատվությունների ինստիտուտի պատրվերով*

27 Azatutyan ave.,
4th floor, s.402,
Yerevan, 0014, Armenia

Ազատության պող.27,
4-րդ հարկ, ս.402
Երևան, 0014, ՀՀ

☎ +374 10 20-4772
☎ +374 10 20-4771

✉ info@ipsc.am
🏠 www.IPSC.am





Meth-1arm/10

19.11.2010թ.

Հայաստանի Հանրապետությունում

Կյանքի որակի ցուցանիշի

(QoL Index) հետազոտություն

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Մշակված է

«Այ Փի Էս Սի» Քաղաքական և սոցիոլոգիական

խորհրդատվությունների ինստիտուտի պատվերով

Հաստատված է

Կ.Տ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ.....	- 3 -
ՄԱՍ ԱՌԱՋԻՆ. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ.....	- 5 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի տեսական հիմքերը	- 5 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի էմպիրիկ-հետազոտական սահմանները: Կյանքի որակի սահմանումը.....	- 11 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի գնահատման մոտեցումները.....	- 25 -
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ	- 30 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի գնահատումը Նոր Զելանդիայում.....	- 30 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի եվրոպական հետազոտություն.....	- 32 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի գնահատումը Նորվեգիայում	- 34 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի հետազոտության Հնդկաստանի փորձը.....	- 35 -
ՄԱՍ ԵՐՐՈՐԴ. ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	- 37 -
<input type="checkbox"/> ՀՀ կյանքի որակի հետազոտությունը	- 37 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի ազգային շրջանակը և մոտեցումը.....	- 38 -
<input type="checkbox"/> Կյանքի որակի հետազոտության մեթոդաբանությունը.....	- 39 -
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Քանակական հետազոտության հարցաթերթ.....	- 61 -
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Փորձագիտական հարցման հարցաթերթ.....	-76-
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	-81-

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բարեկեցիկ հասարակության և բարեկեցիկ կյանքի առանցքային որակների ու բնութագրիչների վերաբերյալ հարցադրումները հարյուրավոր դարերի և տարաբնույթ մշակույթների կերպափոխումներում եղել և մնում են խոշորագույն մտածողների խորհրդածության առարկան ու արգասիքը: Կյանքի որակի վերաբերյալ դատողությունները դարերի խորքն են հասնում: Հնագույն անդրադարձներից մեկը հանդիպում է Արիստոտելի մոտ *εὐδαιμονία* (*eudaimonia*) սահմանմամբ, որն ընդունված է թարգմանել որպես **երջանկություն**: Այս հայեցակարգի շրջանակներում, այսպես կոչված, «լավ կյանքը» ձեռք է բերվում, երբ իրագործվում կամ իրացվում են բնական նպատակներն ամբողջ ներուժի ներդրման արդյունքում (Ackrill, 1975; Barnes, 1982): Հարիս Ռեկխեմը (1926) նշում է, որ *eudaimonia*-ի առավել ճշգրիտ մեկնաբանությունը հենց բարեկեցությունն է, սակայն Նորդենֆելթը (1993, էջ 17) պնդում է, որ այն ոչ թե անձի վիճակ է, այլ՝ գործունեություն, գործողություն: Արիստոտելը երջանկությունը չի նույնականացրել ինչ-որ վիճակի հետ, որն ունի տվյալ անձը տվյալ պահին, և ոչ էլ փորձառության հետ է կապված, այլ՝ ակտիվ կյանքի որոշակի տեսակ է: *Eudaimonia*-ն վերջնանպատակ է, որում ինքնաբավ լինելը գործողության վերջնակետն է: Ի հակադրություն արիստոտելյան հայեցակարգի՝ արևելյան փիլիսոփայությունը շեշտադրում է անձնական ցանկությունների զսպումը և առաջ քաշում մարդկանց միջև ռեսուրսների հավասարաչափ բաշխումը խրախուսող գաղափարախոսությունը:

«Կյանքի որակ» արտահայտության ժամանակակից մեկնաբանությունը երևան եկավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Սկզբնապես նրանում ընգծվում էր այն միտքը, որ «լավ կյանքն ավելին է, քան նյութական լիությունը և բովանդակում է մի շարք գործոններ, ինչպիսիք են զբաղվածությունը, կենցաղը, շրջակա միջավայրը, առողջապահությունը, մշակույթը և այլն» /Յոլմս, 2005, էջ 493/: Ներկայումս «կյանքի որակ», «մարդկային բարեկեցություն» և «կենսամակարդակ» հասկացությունները հաճախ կիրառվում են որպես փոխադարձ փոխարինելի կատեգորիաներ, չնայած նշվածներից յուրաքանչյուրը տարբեր իմաստ և ենթատեքստ է բովանդակում:

Հանրային քաղաքականության մշակման յուրաքանչյուր ասպարեզ և բնակչությանը ծառայությունների մատուցման յուրաքանչյուր բնագավառ ներկայիս աշխարհում առաջնորդվում են կենսամակարդակի բարելավման գերնպատակով: Այս իմաստով տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական հարթություններում կյանքի որակը ծառայությունների մատուցման ցանկալի հետևանքը կամ արդյունքն է՝ արտահայտված կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, ինչպես նաև բոլոր մակարդակներում պետական գործընկերային քաղաքականության ուղղություններով: Կյանքի որակի սահմանումների բազմազանության մեջ որևէ մեկի ընտրությունն ու նպատակադրումը, այսպիսով, կախված է հասարակությանն ուղղորդված քաղաքականության շեշտադրումներից: Մա է հիմնական պատճառը, որ կյանքի որակի կամ հասարակությունների կամ դրանց առանձին խմբերի բարեկեցության չափման ու գնահատման միջազգային փորձերը ծայրահեղ տարբեր են որդեգրված մոտեցման, կիրառվող մեթոդաբանության, խնդիրների ընդգրկվածության, ոլորտների և բնութագրիչների ընտրության, հետազոտության ծավալների և այլ չափանիշներով:

Վերոնշյալից եզրակացությունն այն է, որ կյանքի որակի ցանկացած հետազոտություն պահանջում է նախ և առաջ հասկացության էթիկական, հայեցակարգային ու փիլիսոփայական խորքային էլեմենտների լրջագույն ուսումնասիրություն և հստակեցում: Նշված համատեքստում Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի համերկրյա հետազոտություն իրականացնելու նպատակով նախ և առաջ կատարվել է կյանքի որակի և ընդհանրապես հասարակության ու անհատի

բարեկեցության հասկացությունների էության, տեսական հիմքերի և գործնական կիրառության առանձնահատկությունների, գնահատման մեթոդաբանության և մոտեցումների խորքային ուսումնասիրություն: Սույն աշխատանքի առաջին գլուխը նվիրված է հենց այդ խնդրի լուծմանը: Մրան հաջորդում է կյանքի որակի գնահատման միջազգային փորձի ուսումնասիրությունը՝ ներկայացնելով ընտրված տարբեր երկրներում կատարված հետազոտությունների առանձնահատուկ մոտեցումները: Աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է արդեն Հայաստանում կյանքի որակի հետազոտության ընդհանուր հայեցակարգային մոտեցմանը, ներառված մակարդակների, ոլորտների ու ցուցանիշների ներկայացմանը: Հաջորդ գլուխը բովանդակում է Հայաստանում կյանքի որակի հետազոտության համապարփակ մեթոդաբանությունը՝ ներառյալ հետազոտության ընտրանքը, կյանքի որակի ցուցանիշի բաղադրիչներն ու գնահատման մեթոդը, հետազոտության իրականացման գործիքները (փորձագիտական գնահատումներ, բնակչության հարցումներ) և հարցաթերթը:

Կյանքի որակի և դրա գնահատման վերաբերյալ շրջանառվող սահմանումներն ու մոտեցումները և՛ ակադեմիական, և՛ էմպիրիկ հետազոտական, և՛ քաղաքականության մշակման բնագավառներում բազմաթիվ ու տարբեր են՝ կախված հասկացության սուբյեկտիվ ընկալումից ու դրա առանձին բաղադրիչների միջև առաջնահերթությունների սահմանումից:

□ Կյանքի որակի տեսական հիմքերը

Կյանքի որակի հայեցակարգի ու դրա բնութագրիչների ընկալման համար առանցքային փաստարկն այն է, որ որակի չափման բոլոր ցուցանիշները, այսպես կոչված, մոտարկումներ՝ պրոքսիներ են, անուղղակի բնութագրիչներն այն իրական իրավիճակի, որի մասին փորձ է արվում դատողություններ կատարել: Եթե որակը հնարավոր լիներ քանակական գնահատման ենթարկել, ապա այն կդադարեր որակ լինելուց: Իսկ քանակական ցուցանիշները նպատակահարմար չէ որակել որպես ճիշտ կամ սխալ, այլ անհրաժեշտ է պարզել, թե որքանով են դրանք համարժեք հետազոտողի համար անհասանելի նպատակին հնարավորինս մոտեցնելու առումով: Այսինքն՝ դրանք երբևէ չեն կարող երաշխավորել որոշակի որակ: Պատռնը ժամանակին այլաբանորեն ասել է տապանաքարի մասին, թե հնարավոր չէ երբևէ պատկերացում կազմել ետևում արտացոլված սովերների մասին, հնարավոր չէ որևէ կերպ ուղղակիորեն հասնել ճշմարտությանը, որը սովերներ ստեղծող լույսն է: Հնարավոր չէ դուրս գալ որակի ցանկացած սահմանման այլաբանական բնույթից: Կարող է թվալ, որ միանգամայն անլուծելի իրավիճակ է ձևավորվում, երբ հիմնվում ենք այլաբանության ու անուղղակի չափանիշների վրա: Այլընտրանքային տարբերակը կարող է լինել մարդկանց երջանկության ու բավարարվածության վերաբերյալ իրենց զգացողությունների մասին պարզապես հարցնելը: Նման հետազոտություններ ու հարցումներ իրականացվել են տասնամյակներ շարունակ: Այս մոտեցման առավելությունն այն է, որ կարծես ուղղակիորեն տանում է դեպի որակի խնդիրն առանց պրոքսիներ կիրառելու որևէ անհրաժեշտության: Այդուհանդերձ, հիմնավորված են նաև «սուբյեկտիվ» կամ հարցումների վրա հիմնված ցուցանիշների առումով մատնանշվող կասկածանքները, ըստ որոնց դա կարող է չեզոքացնել որակի օբյեկտիվ չափանիշների կիրառման անհրաժեշտությունը, որոնք հիմնված են դիտարկումների վրա:

Սուբյեկտիվ ցուցանիշները որպես կյանքի որակի համարժեք և պատշաճ բնութագրիչներ դիտարկելը ենթադրում է, որ մարդիկ **գիտակցաբար** են մոտենում խնդրին և ի վիճակի են հստակ ընկալել զգացմունքների նրբությունները, որ անցումային /տրանզիտիվ/ զգացմունքները ներկայացնում են մշտական ու կայուն պայմաններ /իրավիճակներ/, որ զգացմունքները համարժեք են արժեքներին, որ երջանկությունը, բավարարվածությունը կամ այլ զգացմունքներ համարժեքորեն գնահատված իրավիճակների մեկնաբանությունն են, որ զգացմունքները կարող են քանակական գնահատման ենթարկվել բացարձակ մեծություններով: Բացի այդ, չափազանց կարևոր տարբերություն գոյություն ունի, թե ինչ են մարդիկ հայտնում իրենց ցանկությունների մասին և թե ինչ են նրանք իրականում անում: Սա բերում է նրան, որ որոշ հետազոտողներ միանգամայն մերժում են հարցումների վրա հիմնված ցուցանիշների օբյեկտիվությունը: Նույնիսկ այն պարագայում, երբ կյանքի որակի ցուցանիշները, որոնք հիմնված են հաստատված արժեքների

կամ զգացմունքների վրա, չունեն վերոնշյալ թերությունները, արդյունքները կրկին ներկայացնում են որակի անուղղակի ցուցանիշներ: Հարցադրումներն ընդամենը մեթոդ են՝ անհատներին խնդրելու իրենց սեփական արժեքնկալմամբ հետազոտել իրենց իսկ ներքին հոգեբանական «պատերի վրա առկա սովերները»: Մարդիկ չեն կարող դիտարկել իրենց անձնական երջանկությունը կամ բավարարվածությունն ուղղակիորեն: Փաստարկն այն է, որ գործընթացը, որով անհատները ենթադրում կամ ինտուիտիվ կերպով զգում են իրենց զգացմունքների վիճակը, պարզապես թաքնված է հարցազրուցավարից, ուստի վստահելիության աստիճանի ստուգման հնարավորությունը փոքր է: Ուրեմն, ցուցանիշների անուղղակի բնույթը միշտ առկա է:

Կյանքի որակի չափման համար նախևառաջ անհրաժեշտ է ունենալ տեսություն և տեսլական այն մասին, թե ինչից է բաղկացած լավ կյանքը: Մերունդներ շարունակ հասարակագիտության մեջ և հանրային կյանքում արժեքվորման գերակա ուղղությունն **ուտիլիտարիստականն** է եղել: Այսինքն՝ կյանքի որակի ընկալումը ձևավորվել է արժեքների ուտիլիտարիստական հայեցակարգի շրջանակներում, համաձայն որի այն ենթադրում է անհատների ցանկությունների և սպասումների բավարարվածություն, և հասարակության բարեկեցությունը զուգահեռվում է հանրագումարային առավելագույն բավարարվածության հետ, ընդ որում հաշվի առնելով ինչպես զուտ մատերիալիստական կամ սոցիալ-տնտեսական չափորոշիչները, այնպես էլ՝ խիստ սուբյեկտիվ հոգեբանական գործոնները, ասենք, օրինակ՝ ալտրուիզմի դրսևորումների հնարավորությունը: Մտածողության այս համակարգը դիտարկում է նախընտրությունները, ընտրությունները կամ ճաշակը որպես մասնավոր, անհատական, ոչ պայմանական ու վիճարկելի: Նույնիսկ արստրակտ նախընտրությունները, ինչպիսիք են անվտանգության կամ ազատության ցանկությունը, ենթադրվում է, որ ձևավորվում են յուրաքանչյուր անհատի ներսում: Ընդ որում, ուտիլիտարիզմը սահմանափակված չէ սոսկ կոշտ նյութապաշտական կադապարով: Ուտիլիտարիստական հայեցակարգի միանշանակ ու ակնհայտ արտացոլումը կարելի է տեսնել տնտեսական բնագավառում: Տնտեսագիտության դիրքերից բարեկեցությունը անհատների՝ սեփական «օգտակարությունը» մաքսիմալացնելուն ուղղված սպառողական զամբյուղի կամ դրանց համապատասխան արժեքների համալրումն է: Սա մասնավորապես ճիշտ է տնտեսագիտության տրադիցիոն դիտակետից, ինչը սահմանափակված է արտադրության և շուկայական փոխանակության երևույթների հետ դրա նույնականացումից: Այս իմաստով շատ հետազոտողներ հասարակության բարեկեցության գնահատման կամ չափման համար որպես հիմնավորված լավ չափանիշ պարզապես վերցնում էին երկրի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ): Միևնույն ժամանակ այս մոտեցումը՝ ՀՆԱ-ն որպես արժեքների և սոցիալական առաջընթացի ցուցանիշ դիտարկելը, նաև մեծ քննադատության է արժանացել: Այս իմաստով բարեկեցության ձևավորումը ոչ միայն այլևս չի սահմանափակվում սպառողական/գնողունակ զամբյուղի պարունակությամբ, այլև ընդլայնվում է՝ ներառելով ոչ նյութական բարիքներ, ինչպիսիք են հանցագործություններից զերծ համայնքը, մաքուր օդը, և նույնիսկ հարմարավետության այն զգացումը, որը ծնվում է իմացությունից, որ հասարակության մեջ չքավորների թիվը պակասել է: Այլ կերպ ասած, կյանքի որակի հետ կապված և դրանում ներառված պայմանները կարող են հեշտությամբ ընկալվել ուտիլիտարիստական հայեցակարգի շրջանակներում:

Շատ այլ մոտեցումներում, որոնք կյանքի որակի գնահատման տնտեսագիտական դոմինանտության քննադատության իմիտացիոն փորձեր են, այդուհանդերձ կիրառում են ՀՆԱ-ի վրա հիմնված հայեցակարգը՝ այն հարմարեցնելով ոչ շուկայական գործարքներին, սակայն ներառելով մոնետար գնահատման/արժեքվորման համակարգը: Նման մոտեցումներից առաջինը **Տնտեսական բարեկեցության գնահատականն** է կամ SFQ (Measure of Economic Welfare,

Նորդհամուզ, Թոբին, 1972): Իսկ *Կայուն տնտեսական բարեկեցության ցուցանիշը* (USFW, Index of Sustainable Economic Welfare, Daly, Cobb, 1989, 1994) կիրառում է նույն հայեցակարգը՝ ներառելով նաև շրջակա միջավայրի գործոններն ու եկամուտների վերաբաշխումը: *Իրական առաջընթացի ցուցանիշի* պարագայում պահպանվեց նույն մոտեցումը՝ նաև պարզաբանելով, թե ինչպես կարող է մոնետար ուտիլիտարիստական գնահատականն ընդգրկել զուտ սոցիալական գործոններ, ինչպիսիք են, ասենք, ընտանիքում ճգնաժամային իրավիճակի ու թերզբաղվածության ծախքերը (Cobb, Halstead, and Rowe, 1995; Anielski and Rowe 1999; Cobb, Goodman, and Wackernagel 1999): Այլ ցուցանիշները նույնպես կրում են ուտիլիտար հայեցակարգի ազդեցությունները: *Սոցիալական առողջության ցուցանիշը* (Fordham Institute 1998), *շրջակա միջավայրի միտումների ցուցանիշը* (Alperovitz et al. 1995) և նման այլ բաղադրյալ ցուցանիշներ (Annie E. Casey Foundation 1999; Andrews and Fonseca, 1995) փորձեր են՝ հեռանալու տնտեսագիտական ձևաչափերից՝ կառուցելով սոցիալական ու շրջակա միջավայրի պաթոլոգիաները գնահատող ցուցանիշներ, այլ կերպ ասած, կյանքի որակի հակադարձ գնահատականներ: Մինևույն ժամանակ այս ցուցանիշներում պարունակվող մի շարք բաղադրիչներ արտացոլում են ակնհայտ ուտիլիտարիստական նախադրյալները՝ ներառելով անհատների կողմից բավարարվածության կորստի կամ բացասական ելքերի ցուցանիշներ (աղքատություն, աղտոտվածության հետևանքով առողջության վատթարացում, վատ կենցաղային պայմաններ և այլն):

Այլընտրանքային ուղղվածության հիմնադիրներն ու հետևորդները, մերժելով կյանքի որակի գնահատման տնտեսական ռեղուկցիոնիզմի սկզբունքը, առաջ քաշեցին բարեկեցության աստիճանի վերաբերյալ մտածողության մի նոր համակարգ՝ հիմնված մարդու և հասարակության որակյալ ապրելակերպը պայմանավորող սկզբունքորեն տարբեր գործոնների վրա: Առավել մեծ կիրառական նշանակություն ձեռք բերած մոտեցումներից արժե հիշատակել *Ջ. Ռոուլզի արդարության տեսությունը*, որը մի շարք աբստրակտ կանոններ է մշակում հասարակության մեջ օգուտների կամ իրավունքների բաշխումը պայմանագրորեն սահմանելու նպատակով: Ռոուլզը պնդում է, որ եթե մարդիկ հասարակության կանոնների համար բանակցեն՝ առանց գիտենալու իրենց ապագա դիրքը կամ կարգավիճակը, նրանք կընտրեն այնպիսիները, որոնցում հիմնարար ազատությունները պաշտպանված են, իսկ օգուտները բաշխվում են ամենաանբարեկեցիկների կարիքներին համամասնական, այլ ոչ թե այնպես, որ մաքսիմալացվի համընդհանուր երջանկությունը կամ օգտակարությունը: Որակի գաղափարը սահմանվում է ժխտման միջոցով այն սահմանափակումներով, որոնք չեն կիրառվում մարդկանց նկատմամբ: Ռոուլզը մեծ դժվարությամբ է արժեվորում դրական ազատությունները, ինչպիսիք են սովի նկատմամբ ազատությունը կամ ընթերցանության կարողությունը:

Ի տարբերություն Ռոուլզի, Ամարտյա Մենը նման դժկամություն չի ցուցաբերում: Նա պարզորոշ հայտարարում է, որ կյանքի որակի սահմանման ժամանակ անհրաժեշտ է դրական ազատությունները հաշվի առնել: Նա մարտահրավեր է նետում ուտիլիտարիստական ավանդույթի հիմնարար ենթադրությանն առ այն, որ արժեքն ընկած է միմիայն անձնական երջանկության ձեռքբերման մեջ՝ վերադառնալով արիստոտելյան ավանդույթին ու արժեք վերագրելով մարդկային գործողությանը: Այն հասարակությունը, որը հնարավորություն է տալիս իր քաղաքացիներին՝ ձգտել բարձրագույնին, զարգացնել առաքիներություններ ու լոյալության զգացում, դառնալ հմուտ և արտիստիկ, ձեռք բերել իմաստություն, առավել է, քան այն հասարակությունը, որն ընդամենը ցանկությունների բավարարման միջոցներով է ապահովում: Ուրեմն, կյանքի որակն ըստ Մենի սահմանվում է, այսպես կոչված, մարդկային «կարողություններով»՝ յուրաքանչյուրի այն հատկանիշների ամբողջությամբ, որոնք թույլ են տալիս նրան որոշակի գործունեություն

իրականացնել և առաջնորդում ամբողջ կյանքում: Չնայած այդ կարողությունները հնարավոր է, որ համընդհանուր արժեվորված չլինեն մշակութային և այլ տարբերությունների պատճառով, տակավին հնարավոր է խոսել դրանց վերաբերյալ նրանց տիպային նմանությունների համատեքստում: Ուտիլիտարիստական մոտեցման դրույթներից կախված լինելու փոխարեն, այսինքն՝ հակառակ փորձառություն ունենալու գաղափարի, Մենը վստահ է, որ կյանքի որակը բխում է *լինելիության (being)* և *կատարելիության (doing)* հնարավորությունների պայմաններից, որոնք անհատականորեն ու հասարակայնորեն են սահմանվում: Առանց լինելիության հետ կապված կարողությունների, ինչպիսիք են առողջությունը, սոցիալական կապերը, ինքնագնահատանքը, և կատարելու, ասենք, քաղաքական գործունեություն, մտավոր մարտահրավերներ և հետաքրքիր աշխատանք, անհատն ի վիճակի չէ օգուտներ քաղել այն առավելություններից, որոնք ուտիլիտարիստն ընդունում է որպես տրված: Օրինակ՝ ապրանքների գնման կարողությունը ենթադրություն է, սակայն դա ընդամենը բազմաչափ գնահատման մեկ գործոնն է: Ոչ էլ ինքն ապրանքն է արժեքի աղբյուր հանդիսանում: Ավելին, ինչպես Ադամ Սմիթն է ([1776] 1976, vol. 2, bk. 5, ch. 2) նշել, հասարակության մեջ սեփական արժանապատվության պահպանման նպատակով սովորական հագուստի անհրաժեշտությունը, ապրանքների արժեքը բովանդակվում է հասարակական փոխգործակցությանը դրանց օժանդակության մեջ: Ռոուզվի, Մենի և որոշ այլ մտավորականների (Նուսբաում, 1993, Վալցեր, 1983) մոտեցումն անհրաժեշտ է դիտարկել որպես կյանքի որակի սահմանման հիմք հանդիսացող «հիմնարար կարիքների» հայեցակարգի նորովի ձևակերպում: Չնայած մարդկային հիմնական պահանջմունքների ցանկի որոշման և դրանց բավարարման չափի գնահատման ավելի վաղ փորձերը կենտրոնանում էին հիմնականում ֆիզիկական կենսապահանջմունքների վրա, վերջին ժամանակների գրեթե բոլոր մոտեցումները լավ կյանքի անհրաժեշտությունները սահմանում են ավելի համալիր համակարգով: Հիմնական պահանջմունքների ավանդական մոտեցումից տարբերակելու նկատառումներով ավելի ընդարձակ կատեգորիաներն ընդունված է կոչել *«մարդկային զարգացում»*:

Մարդկային զարգացման բոլոր տեսությունները մատնանշում են, օրինակ, որ ազատության կարևորությունը լավ հասարակության ցանկացած սահմանման առանցքային տարրը պետք է լինի: Ուրեմն, տոտալիտար հասարակության բոլոր անդամներին անհրաժեշտ ապրանքներով ապահովելը կնշանակի, որ մարդկային զարգացման ջանքերը ձախողված են: Ի լրումն դրա, նոր տեսությունները հատկապես առաջ են քաշում ինստիտուտների կարևորությունը: Նրանք դատում են հասարակության մասին դրանց քաղաքականությունների, ընթացակարգերի և կառուցվածքների համատեքստում, թե արդյոք դրանք խրախուսում են բարոյական պատասխանատվությունը, ռացիոնալ ընտրությունը և մարդկային լիարժեք զարգացման մնացած բաղադրիչները: Ինստիտուցիոնալ նման հատկանիշների առկայությունը նույնքան կարևոր նպատակներ են, որքան նյութական հարմարավետությունն ու անձնական բավարարվածությունը:

Վերջապես պետք է փաստել նաև, որ մարդկային զարգացման ոլորտի տեսաբանները համակարծիք են, որ գործունեության յուրաքանչյուր ասպարեզ՝ շուկա, քաղաքականություն, հանրային արարողություններ/ ծիսակարգեր, ընտանիք, դպրոց, աշխատանք և այլն, պետք է գնահատվի նորմերի տարբեր համակարգերի միջոցով և դիտարկվի որպես անհամադրելի մյուսների հետ: Մի բնագավառում հաջողությունը չի կարող համարվել որպես մյուսից կախված ուղղակիորեն կամ հակադարձ կապով: Մի ոլորտում հաջողություն ձեռք բերած անհատը չպետք է հնարավորություն ունենա այն օգտագործել մեկ այլ ոլորտում առավելություններ ստանալու համար: Այս հիմնախնդիրը մասնավորապես սուր հնչեղություն ունի Վալցերի մոտ (Walzer, 1983):

Պլուրալիզմի ներկայացված սկզբունքն արդեն իսկ որպես տրված է ընդունվում մի շարք համատեքստերում: Օրինակ՝ նույնիսկ երբ բարեկեցիկ անհատները կարող են գնել «արդարացվածությունը» քրեական դեպքերում, դատական գործընթացում ֆինանսական առավելության ազդեցությունը դիտարկվում է որպես բիծ, զանցանք, բարոյական սահմանների չարաշահում: Քանի դեռ բարոյական խնդիր չի առաջանում հարստությունն ավելի լավ տուն կամ մեքենա ձեռք բերելու համար, շատ ամերիկացիներ անընդունելի և արհամարհելի են համարում այն քաղաքական կամ դատական գործընթացների վրա ազդեցություն տարածելու նպատակով օգտագործելը, իսկ շատերը չեն հավատում, որ փողը կարող է գործոն դառնալ ավելի լավ կրթություն կամ առողջապահություն տրամադրելու գործում: Այս մասնավոր օրինակները հաստատում են մարդկային զարգացման տեսաբանների այն դատողությունները, որ մարդկային մշակույթները բաժանում են հանրային տարածությունը՝ միջավայրը մի շարք ոլորտների, որոնք, ընդունված է ասել, թե տարբեր բարոյական կանոններ ունեն: Մարդկային զարգացման մոտեցման համաձայն առավել բարեկեցիկ հասարակությունը մեկ այլ հասարակությունից գատելու կամ ժամանակի ընթացքում դրա դրական շարժը փաստելու համար անհրաժեշտ է, որ գործող ինստիտուտները նրանում ապրող մարդկանց ավելի մեծ կարողություններով օժտեն՝ ինքնուրույնաբար առավել բարեկեցիկ կյանք կառուցելու համար:

Այս հիմնադրույթների արդյունավետ սինթեզը հիմք հանդիսացավ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) կողմից **«մարդկային զարգացման»** պարադիգմայի ձևակերպման և դրա շրջանակներում **Մարդկային զարգացման ցուցանիշի** մշակման ու **«հազարամյակի մարտահրավերների ու թիրախների»** դեկլարացիայի համար: Վերջինս երկրների կողմից մարդակենտրոն կայուն զարգացման ռազմավարության որդեգրման առանցքը հանդիսացավ, որի շրջանակներում և՛ զարգացած, և՛ զարգացող, և՛ աղքատ պետությունները քաղաքականության գերակայություն են համարում քաղաքացի-անհատի՝ որպես մեծագույն արժեքի արժանապատիվ կենսակերպի ապահովումն ու երաշխավորումը, այդ թվում՝ առողջապահության, կրթության, կենսական անհրաժեշտ պահանջումների առավելագույնս մատչելիությունը, ինքնահաստատման, ազատության, արտահայտվելու և այլ իրավունքների իրացման հնարավորությունը: Մարդկային զարգացման ցուցանիշն (ՄՁՑ) այն առաջին քայլն էր, որով փորձ արվեց գնահատել «կարողությունները» կամ դրական ազատությունները: Յուրաքանչյուր ազգի համար այն «ցույց է տալիս, թե որքան դեռ երկիրը պետք է ջանա որոշակի նախասահմանված թիրախներին կամ նպատակներին հասնելու համար, ասենք, օրինակ՝ կյանքի միջին տևողության 85 տարին, ամենքի համար կրթության մատչելիություն, եկամտի արժանավայել մակարդակը և այլն» (United Nations Development Program, 1995, p. 18): Երեք ոլորտներից յուրաքանչյուրում՝ երկարակեցություն, կրթության մակարդակ, եկամուտ, ՄՁԻ հաշվարկում է յուրաքանչյուր երկրում առկա մակարդակի և թիրախային մակարդակի միջև հեռավորությունը: Ուրեմն, այն իրականում կորուստների կամ վնասների համակարգային ցուցանիշն է, որի դեպքում 1 արժեքը ներկայացնում է լիարժեք ձեռքբերում, իսկ 0-ն՝ լիակատար կորուստ: Բացի միջերկրային համեմատություններ կատարելու հնարավորությունից ՄՁՑ նաև կարելի է կիրառել ներերկրյա ռեգիոնալ կամ խմբային համեմատությունների նպատակով:

Փ. Դասգուպտան (1993) ինքնակառավարման ու ազատությունների սկզբունքի շրջանակներում առաջարկում է ՄՁՑ մեջ որոշակի լրացում ներմուծել, ինչը թույլ կտա մարդկային զարգացման տեսաբանների թեզերի հետ առավել մոտարկել: Նա առաջարկում է ներմուծել ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության հնարավորության չափի և քաղաքացիական ազատությունների մատչելիության ու կիրառելիության գնահատականները,

կամ, այլ կերպ ասած, *«բացասական ազատություններ»*: Չնայած մարդկային զարգացման մոտեցումը մատնանշում է դրական ազատությունները, որոնք առնչվում են մարդկանց՝ իշխանության և արժեքի զգացումով օժտող ինստիտուտներին, շատ կարևոր է նաև ներառել բացասական ազատությունները, քանի որ վերջիններիս կորուստը հնարավոր չէ փոխհատուցել դրական ազատության բնագավառում ձեռքբերումներով:

Դրական և բացասական ազատությունների հանգամանքի վրա այսչափ կենտրոնացումն իր օբյեկտիվ պատճառներն ունի: Օրինակ՝ նշված երկու կատեգորիաների միջև սուր հակասությունն ակնհայտորեն երևում է Չինաստանի պարագայում, որտեղ կառավարությունը բացահայտորեն հայտարարել է, որ սահմանափակում է քաղաքացիական ազատությունները համընդհանուր զարգացման շահերից ելնելով: Հենց սա է, որ ցույց է տալիս այն տիպի զարգացման կատեգորիայի ներհատուկ վտանգը, որը բացառապես ուղղված է ստամոքսը հագեցնելու, իսկ հոգին՝ սովի մատնելու մարտավարությանը:

Մեկ այլ վտանգ կապված է այն հանգամանքի հետ, որ մարդկային զարգացման մոտեցման չափազանց պարզեցված տարբերակը կարող է դառնալ բարեկեցիկ հասարակության իմիտացիան: Կառավարությունների համար հեշտ է հայտարարել առանց բավարար փաստերի, որ նրանց իրականացրած ծրագրերն արդյունավետ են, որովհետև դրանք խթանում են քաղաքացիների կարողությունները: Եթե այդ հայտարարություններն ու պնդումները բավարար են ծրագրերն արդարացնելու համար, ապա միջոցներ չեն լինի տարբերելու որակյալը խոտանից: Յուրաքանչյուր նոր ծառայություն որպես կյանքի որակի բարելավում դիտարկելը պարզապես կլինի վերը քննարկված տեսաբանների գաղափարների աղավաղում: Մենը (A. Sen, 1993), օրինակ՝ պարզ կերպով ընդգծում է, որ նա «գործողությունը» (ինքնուրույն գործելու կարողություն) համարում է նույնքան կարևոր, որքան «բարեկեցությունը»: Այն կառավարությունը, որն ուղղակիորեն տրամադրում է իր քաղաքացիներին այն ամենը, ինչն անհրժեշտ է լավ կյանքի համար, կարող է պարզապես թերարժեվորել պատասխանատվության և նախաձեռնողականության զարգացումը, որոնք «գործողության» առանցքային տարրերն են:

Կարողությունների հայեցակարգի շրջանակներում կառուցված կյանքի որակը պետք է հիմնված լինի տարբեր մասշտաբների և մեթոդաբանությունների վրա: Մարդկային զարգացման մոտեցման կիրառության հետ կապված մեկ այլ կարևորագույն խնդիր է աբստրակտ սկզբունքների առկայությունը: Հիմնարար գաղափարների մեկնաբանությունը հեշտ չէ, և դրանք կարող էին սխալ ներկայացվել կամ սխալ կիրառություն ունենալ գործնական քաղաքականության բնագավառում: Մոցիալական հիմնախնդիրներին ոչ ուտիլիտարիստական մոտեցումների կողմնակիցները ձգտում են չկենտրոնանալ այն մեթոդների վրա, որոնցով նրանց գաղափարները հնարավոր կլինե՞ր կիրառել: Այսպես, որպես միջանկյալ քայլ, հնարավոր է՝ կարիք լինե՞ր մարդկային զարգացման հայեցակարգում որոշ պարզեցումներ կատարել, որով հստակորեն տարբերակում կմտցվե՞ր ուտիլիտարիստական մոտեցումից: Ուտիլիտարիզմի և կարողությունների մոտեցման միջև տարբերությունների մոտարկման ուղիներից մեկը *«ունենալու, լինելու և կատարելու»* միջև տարբերությունների մասին խոսելն է: Կոպիտ ասած, կյանքի որակի ուտիլիտարիստական տեսակետի ուղենիշը «ունենալն» է՝ ունեցվածքն ու փորձառությունը, մինչդեռ մարդկային զարգացման հիմնադրույթը ներառում է նաև «կատարելը»՝ ձեռքբերումներն ու պրոֆեսիոնալիզմը, և «լինելը»՝ բնավորությունը կամ հոգեբանական առողջությունը, այսինքն՝ կյանքի որակը գնահատվում է մարդու համալիր ֆունկցիոնալության հարթությամբ: Իր նեղ շրջանակների պատճառով ուտիլիտարիզմը կարող է առավելագույնս մերձենալ քաղաքականությանն առնչվող հարցադրումներին ճշգրիտ պատասխաններ տալուն: Ոչ ուտիլիտարիստական մոտեցման առավել

ընդգրկումն բնույթն ապահովում է միայն լղոզված, ոչ հստակ պատասխաններ, սակայն որոնք ավելի նյութանսավորված են: «Ունենալու, լինելու, կատարելու» մոտեցումը բացատրում է, թե ինչու այն չի կարող կյանքի որակի գնահատման համար չափողականության համընդհանուր գիծ լինել պլուրալիստիկ արժեքների աշխարհում: Կյանքի որակի և արժեքների վերաբերյալ ուտիլիտարիստական և ոչ ուտիլիտարիստական տեսակետների միջև ակնհայտ տարբերությունների ետևում ընկած է մարդկային լինելիության բնույթի մասին վիճաբանությունը: Ուտիլիտարիստները մարդկանց դիտարկում են որպես առանձին, ինքնուրույն միավորներ՝ յուրաքանչյուրն իր ցանկությունների կամ նախընտրությունների զամբյուղով, ինչը հնարավոր չէ բացատրել: Այդ խիստ անձնական կամ ներքին զգացողությունները բացարձակ անձնային բնույթ ունեն: Դրանք անհատականության կնիքն են: Ահա թե ինչու տնտեսագետներն ու ուտիլիտարիստներն այդքան դեմ են անհատների նախընտրությունների մասին արժեքային դատողություններ կատարելուն: Ի հակադրություն այս մոտեցման՝ ոչ ուտիլիտարիստները մարդկանց դիտարկում են նրանց կենցաղավարման ընդհանուր մշակույթի թաղանթով պատված: Մա նշանակում է, որ արժեքներն ու վարքագիծը ներքին կամ անձնական կատեգորիաներ չեն, այլ բխում են սոցիալական համատեքստից: Ընտրության համակարգը կառուցվում է լեզվամշակութային ու սոցիալական վարքագծային նորմերի միջոցով, որոնք մասամբ տրված են, իսկ մասամբ էլ՝ պարտադրված ենթախմբերի կամ անհատների կողմից: Կյանքի որակը, այսպիսով, անձի սոցիալական մատրիցայի ներսում տեղի ունեցող սիմվոլային փոխգործողությունների արդյունք է: Հետևաբար, առանցքայինն այս պարագայում «լինելն» է՝ այն ճանապարհը, որով մարդիկ կայանում են իրենց շրջապատող միջավայրի ներսում:

Այսպիսով, մարդկային զարգացման տեսաբանները բացատրում են սոցիալական միավորների ներհատուկ արժեքները: Լավ հասարակության նրանց մոդելը ցույց է տալիս և՛ բացասական, և՛ դրական իրավունքների, սովորույթների և սոցիալական հարաբերությունները կառավարող նորմերի կարևորությունը: Այս տարրերից որևէ մեկը համադրելի չէ ուտիլիտարիզմի հետ: Իհարկե, երկու հակամետ մոտեցումներն էլ կարող են կիրառելի լինել՝ հետազոտողի կամ քաղաքականություն մշակողի նպատակներից ու նախընտրություններից ելնելով: Միևնույն ժամանակ երկուսն էլ կարելի է հետագա քննադատության ենթարկել, օրինակ՝ այն տեսակետից, որ դրանցից ոչ մեկը հաշվի չի առնում բնության ներհատուկ որոշակի արժեքը, որը որևէ կերպ չի մասնակցում մարդկային բարեկեցությանը կամ ֆունկցիոնալությանը: Հետևաբար, կյանքի որակի համակողմանի ընկալումը գնահատում է հասարակության և ինստիտուտների արժեքը ոչ միայն մարդկային, այլ նաև կյանքի բոլոր դրսևորումների վրա դրանց ազդեցությանը համապատասխան:

Այս ամենի ենթատեքստն այն է, որ կյանքի որակի գնահատմանը բազմաթիվ տեսակետներից կարելի է մոտենալ: Հասարակության վերաբերյալ ընդհանուր դատողություններ կատարելու միակ «ճշմարիտ» ուղի գոյություն չունի:

□ Կյանքի որակի էմպիրիկ-հետազոտական սահմանները: Կյանքի որակի սահմանումը

Ի լրումն կյանքի որակի հիմնադրույթի էության վերաբերյալ ներկայացված խիստ գիտական մոտեցումների՝ 20-րդ դարի երկրորդ կեսերից լայն թափ ստացան և զարգացան խնդրո առարկայի շուրջ հայեցակարգային և կիրառական մոտեցումները, որոնք տարբերվում են կյանքի որակին վերագրված բովանդակության, դրա գնահատման մոտեցումներով, չափողականության մակարդակներով ու չափորոշիչների ընդգրկվածության, կիրառվող տվյալների բնույթով և այլն:

Մտորն փորձ է կատարվում հանգամանորեն ներկայացնել այն հիմնական մոտեցումներն ու մոդելները, որոնք կյանքի որակի գաղափարի գիտագործնական կայացման անկյունաքարն են հանդիսացել, և որոնց հիմնարար սկզբունքների համադրման արդյունքում էլ ձևավորվել է մեր կողմից Հայաստանում կյանքի որակի գնահատման առանձնահատուկ մոտեցումը:

Տրամաբանական է, որ կյանքի որակի հայեցակարգի առավել կիրառական բնույթը բացահայտելու առաջին քայլը պետք է լինի դրա սահմանումը, ինչպես նաև հստակ ընկալման ձևավորումն այն մասին, որ կյանքի որակը որևէ կերպ չպետք է նույնականացնել կամ շփոթել բարեկեցության հասկացության հետ:

Իրականում կյանքի որակի հայեցակարգը խիստ անորոշ ու բարդ է այն հստակ սահմանելու համար, հատկապես այն պարագայում, երբ առանձին գիտություններ և քաղաքականության կոնկրետ ուղղություններ գաղափարին յուրովի մեկնաբանություն են տալիս՝ հետազոտության նպատակներին համարժեք: Հասկացության բազմիմաստության պատճառներից մեկն այն է, որ այն կիրառվում է տարբեր համատեքստերում ու նպատակներով: Հանրային կյանքում դրա համընդհանուր կիրառության շրջանակները շատ նեղ են և հիմնված են «որակ» բառի դրական մեկնաբանության վրա: Ի հակասություն՝ փորձագետների կողմից դրա կիրառությունը կենտրոնանում է առավելապես դրա երկրորդ իմաստի վրա, այսինքն՝ որևէ երևույթի հիմնական բնույթը, հատկանիշները ներկայացնող հավաքական հասկացություն, ինչը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական (Farquhar, M., 1995, p. 502): Այդուհանդերձ, նույնիսկ փորձագետների շրջանում տերմինի կիրառությունը ծայրահեղ տարբեր է: Արմսթրոնգը և Քոլդուելը հասկացության կարևորությունը դիտարկում են դրա «հոետորական ֆունկցիայի» տեսակետից՝ ընդհանուր հիմք ստեղծելով սոցիալական ու բժշկական տեխնոլոգիական առաջընթացի վերաբերյալ քաղաքական դեբատների համար: Քեյնն ու Շելլոկը պնդում են, որ ԿՈ կարող է կիրառվել երեք ձևով՝ 1. որպես զգայական հասկացություն, որը ուղենիշեր է ձևավորում, 2. որպես սոցիալական համակարգ, և 3. որպես կազմակերպող կամ միավորող հասկացություն: Առողջապահության վերաբերյալ առկա գիտական գրականության ուսումնասիրության արդյունքում Ռեջեսկինն ու Միհալկոն տարբարկում են ԿՈ կիրառությունը որպես հոգեբանական հայեցակարգ և «հովանոցային հասկացություն» տարբեր ցանկալի բժշկական էլքերի համար:

Ըստ Շելլոկի՝ ԿՈ շատ տարբեր սահմանումներն ու մեկնաբանությունները թվով անցնում են 100-ը: Այդ պատճառով մի շարք հետազոտողներ պնդում են, որ ԿՈ հնարավոր չէ ճշգրտորեն սահմանել, ուստի ավելի նպատակահարմար է պարզապես այն ուսումնասիրել տարբեր կողմերի ու մակարդակների շեշտադրմամբ, քան փորձել որևէ կերպ այն սահմանել:

Վերջին տարիներին այս հիմնախնդրի շրջանակներում կոնցեպտուալ պարզություն մտցնելու նպատակով տարբեր հետազոտողներ փորձել են որևէ կերպ տիպաբանության ենթարկել ԿՈ սահմանումներն ու մոտեցումները: Ֆարքուհարն առանձնացնում է ԿՈ սահմանման երեք հիմնական տեսակներ՝ ընդհանուր կամ գլոբալ, ըստ բաղադրիչների կամ չափանիշների, կենտրոնացված կամ նեղ (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ԿՈ սահմանումների տիպաբանություն

N	Տեսակ/անվանում	Նկարագրություն
I	Գլոբալ սահմանումներ	Ամենաընդհանուր տեսակի սահմանումն է, որում քիչ բան է ասվում ԿՈ հնարավոր բաղադրիչների մասին և սովորաբար գործ ունի բավարարվածության կամ երջանկության գաղափարների հետ
II	Ըստ բաղադրիչների սահմանումներ	ԿՈ մասնատում է մի շարք բաղադրիչների, չափումների, տիրույթների կամ սահմանում է ԿՈ ցանկացած գնահատման համար առանցքային բնութագրիչներ
IIa	Ոչ հետազոտական	Սահմանում է ընդհանուր ԿՈ մի շարք չափումներ, սակայն կարող է անհրաժեշտաբար չձածկել ԿՈ բոլոր հնարավոր չափորոշիչները
IIb	Հետազոտական	Խիստ կողմնորոշված է կոնկրետ հետազոտության նպատակներից ելնելով, հետևաբար կարող է անտեսել կամ բացառել ԿՈ որոշակի չափորոշիչներ, որոնք պակաս կարևոր են տվյալ հետազոտության համար
III	Կենտրոնացված սահմանումներ	Վերաբերվում է ԿՈ միայն մեկ կամ փոքրաթիվ չափորոշիչների
IIIa	Ակնհայտ	Կենտրոնանում է ԿՈ փոքրաթիվ չափորոշիչների վրա, որոնք առանցքային են, և կրում է ակնհայտ բնույթ
IIIb	Թաքնված	Կենտրոնանում է ԿՈ հասկացության մեկ կամ երկու չափորոշիչների վրա, սակայն թաքնված կերպով՝ առանց այդ մասին մատնանշելու
IV	Կոմբինացված սահմանումներ	Գլոբալ սահմանումներ են, ինչպես առաջին տեսակը, սակայն նաև մատնանշում են որոշակի չափորոշիչներ, ինչպես երկրորդ տեսակը

Աղբյուրը՝ *Farquhar, M., 1995, p. 503*

ԿՈ մոդելների մեկ այլ համակարգային ուսումնասիրության արդյունքում Թեյլեֆերն առանձնացնում է 3 տեսակ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. ԿՈ սահմանումների՝ Թեյլեֆերի տիպաբանությունը

Տեսակ/անվանում	Նկարագրություն
Կոնցեպտուալ մոդել	Մոդել է, որը սահմանում է ԿՈ չափումներն ու հատկանիշները: Սա ամենապարզ մոդելների շարքին է դասվում
Կոնցեպտուալ կառուցվածք	Մոդել է, որը բնութագրում է, բացատրում կամ կանխատեսում ԿՈ էլեմենտների կամ չափումների միջև կապերի բնույթը
Տեսական կառուցվածք	Մոդել է, որը ներառում է էլեմենտների կառուցվածքն ու դրանց կապերը այն տեսության շրջանակներում, որը բացատրում է այդ հարաբերությունները: Ըստ էության սա ամենաբարդ տեսակի մոդելն է

Աղբյուրը՝ *Taillefer, M. Ch., Dupuis, G., Roberge, M., Lemay, S. (2003), p. 299*

Ֆելան ու Պերրին իրենց հերթին որոշակի նորույթ ներմուծեցին այդ դասակարգման մեջ ԿՈ մոդելների իրենց ստորն բերված գծապատկերի (տե՛ս գծապատկեր 1) միջոցով:


Եվ, վերջապես, վերանայելով ԿՈ ամենատարածված ցուցանիշները Հազերտին և մյուսները բացահայտում են, որ դրանց մեծ մասը տեսության վրա հիմնված չեն: Այլ կերպ ասած, ցուցանիշների մեծ մասը հիմնված չեն ԿՈ ստուգված կոնցեպտուալ մոդելի վրա: Հազերտին առաջարկում է «համակարգերի տեսության» մոտեցման վրա հիմնված ԿՈ մոդելը, որը կապում է հանրային քաղաքականության ցուցանիշները ԿՈ արդյունքներին (տե՛ս գծապատկեր 2):

□ Կյանքի որակի հիմնարար հասկացությունները

Չնայած ԿՈ սահմանումները բավականին տարբեր են, ուղորտի ներկայացուցիչները միակարծիք են այն հարցի շուրջ, որ հասկացության պարզաբանման նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել առնվազն հետևյալ հասկացությունները.


1. ԿՈ օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումներ,
2. ԿՈ՝ որպես միաչափ կամ բազմաչափ երևույթ,
3. կյանքի որակի տիրույթներն ու ցուցանիշները,
4. արժեքային համակարգը՝ որպես կյանքի որակի գործոն,
5. կյանքի որակի գնահատում:

Գծապատկեր 1. Կյանքի որակի հայեցակարգը, Ֆելս և Պերրի



Սղբյուրը՝ Felce, D., Perry, J., 1995, p. 55

Գծապատկեր 2. ԿՈ հայեցակարգի և պատճառների՝ համակարգերի տեսության կառուցվածքը



Աղբյուրը՝ Hagerty, Michael R, Cummins, Robert A, Ferriss, Abbott L, Land, Kenneth, Michalos, Alex C, Peterson, Mark, Sharpe, Andrew, Sirgy, M Joseph, and Vogel, Joachim (2001), p. 80

1. Կյանքի որակի օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումներ: Երբ խոսք է գնում համընդհանուր, այսինքն՝ ողջ բնակչությունը կամ սոցիալական լայն շերտեր ծածկող կյանքի որակի գնահատման մասին, սովորաբար երկու մոտեցում է առանձնացվում՝ *ամերիկյան* և *սկանդինավյան* (Noll, 2000): Վերջիններս տարբերակվում են՝ Քեմբելի այն ձևակերպման նկատմամբ դրանց դիրքորոշումից ելնելով, ըստ որի «կյանքի որակը պետք է դիտարկել ականատեսի աչքերով», այսինքն՝ ըստ սոցիալական բարեկեցության օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների հարաբերական կարևորության: Վաղ ամերիկյան աշխատությունները կենտրոնանում են օբյեկտիվ ցուցանիշների վրա՝ առողջություն, աղքատություն, գործազրկության մակարդակ, որոնք ներկայացնում են սոցիալական փաստերն անկախ անհատական գնահատումներից՝ ի հակադրություն սուբյեկտիվ ցուցանիշների, որոնք հենվում են և մատնանշում սոցիալական իրավիճակների անհատական

ընկալումներն ու գնահատումները (Noll, 2000): Ստորն ներկայացվում է առավել հաճախ կիրառվող օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշների համախմբությունը (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Օբյեկտիվ և սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ

Օբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ	Սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշներ
<ul style="list-style-type: none"> • Կյանքի սպասվող տևողություն • Հանցագործությունների թիվ • Գործազրկության մակարդակ • ՀՆԱ • Աղքատության մակարդակ • Դպրոց հաճախելիություն • Շաբաթական աշխատաժամանակ • Մանկական մահացության տեմպ • Ինքնասպանությունների թիվ 	<ul style="list-style-type: none"> • Համայնքային պատկանելության զգացում • Նյութական ունեցվածք • Ապահովության զգացում • Երջանկություն • Բավարարվածություն կյանքից՝ որպես մի ամբողջ • Հարաբերություններ ընտանիքի հետ • Աշխատանքից բավարարվածություն • Սեռական կյանք • Արդարության ընկալում • Դասակարգային պատկանելություն • Սիրած զբաղմունք/ հետաքրքրություններ և ակումբային պատկանելություն

Աղբյուրը՝ *Rapley, 2003, p. 11*

Լենդն ընդլայնում է Նոլլի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների դիստոմիան՝ առանձնացնելով երեք խումբ՝ **չափանիշային**, **նկարագրական** և **բավարարվածության** (կամ երջանկության), սոցիալական ցուցանիշներ (Land, 2000):

Շատ ցուցանիշներ ուղղակիորեն կապված են սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման շուրջ ծավալվող դատողությունների հետ: Այս կապը կարելի է տեսնել Մակրեի (MacRae's, 1985: 5) կողմից **չափանիշային** սոցիալական ցուցանիշների սահմանման մեջ՝ որպես «այն փոփոխականների չափորոշիչներ, որոնք պետք է ներառվեն հանրային վիճակագրության՝ ավելի ընդարձակ քաղաքականությանն ուղղված համակարգում»: Նման սոցիալական ցուցանիշներն ըստ Լենդի կարելի է այլ կերպ կոչել «թիրախային», «արդյունքային» կամ «ելքային» փոփոխականներ, որոնց փոփոխությանն են ուղղորդված տարբեր հանրային քաղաքականության նախագծեր ու ծրագրեր: Այսինքն՝ սրանք չափանիշներ են, որոնց նկատմամբ կարելի է գնահատել քաղաքականության նախաձեռնությունների հաջողությունը (Ferriss, 1988): Ըստ չափանիշների ցուցանիշները (եկամուտ, կյանքի սպասվող տևողություն, դպրոց հաճախելիություն) նաև անվանում են նորմատիվային բարեկեցության ցուցանիշներ (Land, 1983: 4): Ինչպես Նոլլն է (Noll, 2000) շեշտում, չնայած հասարակությունների ներսում կամ նույնիսկ դրանց միջև հնարավոր է նման ցուցանիշների ընդհանրական կիրառությունը, այն, ինչ համարվում է բարեկեցության նորմատիվային ցուցանիշ, ամենայն հավանականությամբ հարաբերականության մեծ տարբեր է պարունակում մշակութային և նույնիսկ երբեմն ենթամշակութային համատեքստում՝ նախասահմանված քաղաքական կամ գաղափարական նկատառումներով: Օրինակ՝ այն պարագայում, երբ Համաշխարհային բանկը սահմանում է դպրոց հաճախելիության ցուցանիշը՝ ներառելով դպրոցահասակ տղաներին ու աղջիկներին, որպես սոցիալական բարեկեցության որոշակի նորմալ մակարդակի անհրաժեշտ նախապայման, կան հասարակություններ, ասենք, օրինակ՝ իսլամական պետությունները, որոնցում դասարաններում աղջիկների ներկայությունը սոցիալական հանցանք կհամարվի: Նույն տրամաբանությամբ, ըստ չափանիշների ցուցանիշների, ընտրությունը տեղական ընտրության և հարաբերական կշիռների՝ կարևորության հետ կապված

խնդիր է: Շատ երկրներում դպրոց հաճախելիությունը սոցիալական նվազ առաջնահերթություն է վայելում, քան տնտեսական գործունեությունը. այն հասարակություններում, որտեղ դպրոցահասակ երեխաները կարևորագույն աշխատանքային ռեսուրս են, նման չափանիշներն անսխալական կերպով բացահայտում են տիրապետող արժեքների էթնոցենտրիկ համակարգը:

Նկարագրական կամ դեսկրիպտիվ սոցիալական ցուցանիշները «հասարակության վիճակի և դրանում տեղի ունեցող փոփոխությունների ցուցանիշներն են» (Land, 2000): Այս մոտեցումը կենտրոնանում է սոցիալական չափորոշիչների և վերլուծությունների վրա, որոնք նպատակ ունեն հստակեցնել ու խորացնել հասարակության հիմնական հատկանիշների, դրանց փոխազդեցությունների և դրանց փոփոխությունների վերաբերյալ մեր ընկալումները: Չնայած ցուցանիշների այս կատեգորիան շատ ընդհանրություններ ունի չափորոշիչային ցուցանիշների հետ և երբեմն նույնիսկ ներառում է նույն ցուցանիշերը, դրանք արտարակցիայի և ճկունության տարբեր աստիճաններ կարող են դրսևորել: Այսինքն՝ նկարագրական սոցիալական ցուցանիշները կարող են հիմնվել ինչպես վիճակագրական բարդություն չպարունակող նվազագույն տվյալների բազայի, այնպես էլ ավելի կոմպլեքս ցուցանիշների վրա:

Հիմնվելով արևմտյան տեսակետի վրա՝ մարդկային բացարձակ արժեքը և նպատակը «**երջանկությունն**» է, հետևաբար սոցիալական բարիքի բացարձակ չափանիշը պետք է լինի անհատների երջանկության աստիճանը, այսպես կոչված, սուբյեկտիվ սոցիալական ցուցանիշները, որոնք մշակվել են Քեմբելի և Կոնվերսի կողմից (Campbell and Converse, 1972): Այս մոտեցման հայեցակարգային առանցքն այն դիրքորոշման ընդունումն է, որ անհատական հոգեբանական վիճակների (արժեքներ, վերաբերմունք, հավատք, ձգտումներ) չափումը շատ կարևոր է սոցիալական փոփոխություններն ու կյանքի որակը համակողմանիորեն հասկանալու համար: Այդուհանդերձ, այս մոտեցումը կտրուկ մերժվում է սկանդինավյան հայեցակարգի կողմնակիցների կողմից այն հիմքով, որ, օրինակ՝ անհատների հնարավոր նվազ ձգտումների և բարձր ադապտացիայի (հարմարվողականության) գործոնների ազդեցությամբ սոցիալական բարեկեցության ցուցանիշի ճշգրտությունն էականորեն կտուժի: Ավելին, սոցիալական այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են բավարարվածությունը, երջանկությունը և կյանքի ձեռքբերումները, այնքան էլ սոցիալական չեն այն իմաստով, որ գործազրկության մակարդակը, հանցագործությունների ու ինքնասպանությունների թիվը, կյանքի սպասվող տևողությունը և կրթության ընդգրկվածությունը կոնկրետ հասարակության ժողովրդագրական միջիններ են: Այս ցուցանիշները սոցիալական են միայն այն իմաստով, որ դրանք որոշակի անձնական դատողությունների՝ սովորաբար բավարարվածության կամ երջանկության մասին անհատական կարծիքների հավաքածու են: Եվ որպես այդպիսին, նման ցուցանիշների հարաբերակցությունը մինչ այս քննարկված չափորոշիչային և նկարագրական ցուցանիշների նկատմամբ միանշանակ չէ: Չնայած սրան 1970-ականներին մի քանի հեղինակավոր աշխատություններ հրապարակվեցին, որոնց հետազոտության առարկան հանդիսացան կյանքի որակով անհատների բավարարվածության աստիճանը և նրանց կյանքի տիրույթները: Այս հետազոտությունները ծնունդ տվեցին այս խնդիրների շուրջ ուսումնասիրությունների բուռն աճին: Այն գաղափարը, որ կյանքի որակի վերաբերյալ անհատների կարծիքներն ու գնահատականները ոչ միայն շատ կարևոր են ազգերի ու հասարակությունների կյանքի որակը համակողմանիորեն ընկալելու համար, այլև կարող են դիտարկվել որպես բարոյական հրամայական, մեծ ուշադրության արժանացավ:

Ժամանակակից հետազոտական-գիտական շրջանակներում գրեթե փոխհամաձայնություն կա այն առնչությամբ, որ կյանքի որակի օբյեկտիվ և սուբյեկտիվ ասպեկտներն անհրաժեշտ է համակցված ուսումնասիրել՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը: Մի օրինակ կարող է լինել,

այսպես կոչված, EUROMODULE-ը, որը միջերկրային հետազոտական նախաձեռնություն է, ներառում է հետազոտական թիմեր 19 եվրոպական երկրներից: Այն ազգային սոցիոլոգիական հետազոտությունների հիման վրա հավաքում է կյանքի պայմանների, բարեկեցության և կյանքի որակի վերաբերյալ համեմատական տվյալներ՝ հավասար կշիռներ տալով օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշներից՝ դրանք համարելով «նույն մետադադրամի երկու կողմեր»: Բացի այս շատ մոդելներ կան, որոնք միավորում են կյանքի որակի օբյեկտիվ և սուբյեկտիվ դոմենները՝ տիրույթները: Օրինակ՝ Դայները պնդում է, որ *«յուրաքանչյուր գիտություն պետք է փոխ առնի կյանքի որակի վերաբերյալ այլ բնագավառների տված տեղեկությունը: Սուբյեկտիվ բարեկեցության համակողմանի ընկալումը պահանջում է, որպեսզի հաշվի առնվեն այն օբյեկտիվ հանգամանքները կամ պայմանները, միջավայրը, որոնք ազդում են մարդկանց՝ իրենց կյանքը գնահատելու վրա: Նմանապես օբյեկտիվ ցուցանիշների և դրանց ընտրության ձևի լիարժեք ընկալումը պահանջում է, որ խորությամբ ուսումնասիրվեն մարդկանց արժեքները և տեղեկություն ունենան, թե ինչպես են օբյեկտիվ ցուցանիշները ներգործում մարդկանց բարեկեցության վրա»* (Diener and Suh (1997); Keith (2001), p. 51; Cummins (2000), p. 56; Hagerty et al (2001), p. 7; Felce and Perry (1996)): Ավելին, Շելոկը պնդում է, որ միշտ առավել արդյունավետ է մտածել կյանքի որակի մի շարք պոտենցիալ ցուցանիշների մասին, որոնք կարող են գնահատվել կամ սուբյեկտիվ, կամ օբյեկտիվ տեսանկյուններից (Schalock, 1996, p. 133): Չնայած սրան, դեռևս վիճաբանությունները շարունակվում են կյանքի որակի գնահատման ժամանակ սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների հարաբերական կարևորության, ու գերակայության, ինչպես նաև այդ երկուսի միջև հարաբերության շուրջ: Որոշ հեղինակների համար կյանքի որակի սուբյեկտիվ մոտեցումները, որոնցում հիմնական չափորոշիչն անհատի փորձառությունը կամ ընկալումներն են այն մասին, թե որքան լավ է ինքն ապրում, մնում են ամենակենսականը (Meeberg (1993); The WHOQOL Group (1995); Andrews FM and Withey SB (1976), in Cummins (2000), p. 56): Այս տեսակետը հիմնականում խարսխված է իդեալիստական կամ պոստմոդերնիստական տեսակետի վրա, որ չկա օբյեկտիվ «իրականություն» աշխարհի մասին մեր սուբյեկտիվ ընկալումներից դուրս, և որ կյանքի որակն արտացոլում է անհատների սուբյեկտիվ արժեքները: Կումմինսն առաջարկում է, որ օբյեկտիվ և սուբյեկտիվ բաղադրիչների կամ «առանցքների» առանձին գնահատումը կյանքի որակի համար շատ կարևոր է (Cummins, 1997a:7): Նա պնդում է, որ «ժամանակակից գրականությունը միանգամայն վտասահ նշում է, թե երկու առանցքները կազմում են կյանքի որակի կառույցի առանձին մասեր, մինչդեռ ընդհանուր առմամբ այդ երկուսի միջև կոռելացիան շատ թույլ է, օրինակ՝ ֆիզիկական առողջության ու առողջության ընկալման միջև» (Cummins, 1997a:7): Էթիկական ու բարոյական պատճառներից դրդված՝ որոշ հետազոտողներ սուբյեկտիվ և օբյեկտիվ գործոնների միջև թույլ կապը դիտարկում են ոչ որպես օբյեկտիվ պայմաններն անտեսելու հիմք, այլ որպես կարևոր պատճառ՝ դրանք պահպանելու: Եթե վատ հոգեկան առողջություն ունեցող մարդը մենակ է ապրում անբարեկեցիկ պայմաններում և հազվադեպ է տնից դուրս գալիս, սակայն ինքն իրեն գնահատում է որպես լավ կյանքի որակ ունեցող, արդյո՞ք սա պատճառ է նրան դուրս հանելու հետազոտությունից: Կյանքի պայմանների օբյեկտիվ գնահատականը ժխտող կյանքի որակի մոտեցումը, հետևաբար, չի կարող պատշաճ պաշտպանություն լինել խոցելի մարդկանց լավագույն շահերի համար (Felce, Perry, 1995, p. 57): Մյուս կողմից կյանքի օբյեկտիվ պայմանները, որոնք տարբեր երկրներում տարբեր են, ձևավորում են անհատների սպասումները հնարավոր իրադարձությունների վերաբերյալ, ուստի պայմանավորում են իրենց կյանքի սուբյեկտիվ գնահատումը: Օրինակ՝ Ֆելան ու Պերրին պնդում են, որ սուբյեկտիվ կյանքի որակի առնչությամբ անհատների կարծիքները մեծապես կապված են իրենց իսկ նախընտրությունների սանդղակի հետ: Վերջիններս «...ձևավորվում են նրանց փորձառությամբ: Որևէ մեկը չի կարող ենթադրել, որ

անհատի նախընտրությունների սանդղակը կարող է բովանդակել բոլոր հավանական դեպքերը, այն ձևավորվում է դատողության արդյունքում, թե ինչն է հնարավոր և հատուկ տվյալ անհատի համար տվյալ իրավիճակում» (Felce, Perry, 1995, p. 65):

Արդյունքում սոցիալական ցուցանիշների սկանդինավյան մոտեցման կողմնակիցները պնդում են, որ սուբյեկտիվ ցուցանիշները, ասենք, օրինակ՝ կյանքի բավարարվածությունը, արտացոլում են մարդկանց ձգտումները, հետևաբար, դրանք թերևս կյանքի ընթացիկ պայմաններին ադապտացման չափանիշ են, այլ ոչ թե՝ հենց կյանքի պայմանների (Erikson, R, 1993, in Nussbaum, M and Sen, A (eds), pp. 67-87):

Կումմինսը կյանքի որակի հասկացության պարզաբանման օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումների շուրջ բանավեճն օգտագործում է կյանքի որակի իր տեսության մեջ ավելի առաջ գնալու նպատակով: Նա բազմաթիվ ուսումնասիրություններից ստացված արդյունքների հիման վրա առաջ է քաշում այն պոստուլատը, որ ընդհանուր առմամբ օբյեկտիվ և սուբյեկտիվ կյանքի որակները բավականին անկախ են միմյանցից: Ըստ նրա՝ սուբյեկտիվ կյանքի որակը «հոմեոստատիկ վերահսկողության ազդեցության տակ է» և, որպես դրա անմիջական հետևանք անհատները այն դրական զգացողություններն են ձևավորել, ինչը թույլ է տալիս իրենց պահպանել կյանքի որակի որոշակի հաստատուն սուբյեկտիվ մակարդակ մի շարք օբյեկտիվ պայմանների միջավայրում: Միայն այն պարագայում, երբ օբյեկտիվ կյանքի որակը հասնում է ծայրահեղ ցածր մակարդակի, արդեն իսկ հիշատակված հոմեոստատիկ վերահսկողությունը խաթարվում է, և սուբյեկտիվ կյանքի որակն անկում է ապրում: Նման հանգամանքներում օբյեկտիվ և սուբյեկտիվ կյանքի որակները հանդես են գալիս որպես փոխադարձաբար կախված կատեգորիաներ, համենայն դեպս անհատի մակարդակում այդ գործընթացը կրում է մշակութային և անհատական արժեքների ազդեցությունը (Cummins (2000) p. 68; Cummins, Robert A, Eckersley, Richard, Pallant, Julie, Vugt, Jackie van and Misajon, Rose Anne (2003), pp. 195-190):

Նույն իր հերթին առաջ է քաշում այն մոտեցումը, որ պայմանների և անհատական գնահատումների կամ ընկալումների հնարավոր համադրությունները կարելի է ներկայացնել 2X2 հայեցակարգային հետևյալ մատրիցայի միջոցով.

Կյանքի օբյեկտիվ պայմաններ	Սուբյեկտիվ բարեկեցություն	
	Լավ	Վատ
Լավ	Բարեկեցություն	Հակասություն
Վատ	Ադապտացիա	Զրկանք/Կորուստ

Այստեղ **«Հակասությունն»** առնչվում է լավ կենսապայմանների և անբավարարվածության միջև ոչ համարժեք համադրությանը և երբեմն նաև անվանվում է **«անբավարարվածության դիլեմա»**, ինչը ենթադրում է, որ, այսպես կոչված, կյանքում հաջողածները կամ լավ կենսապայմաններ ունեցողները պետք է, որ բավարարված լինեն իրենց ունեցածով: **«Ադապտացիան»** առնչվում է, ընդհակառակը, վատ կենսապայմանների և բավարարվածության հարաբերականորեն բարձր աստիճանի միջև խնդրահարույց համակցությանը, ինչը հաճախ անվանում են **«բավարարվածության պարադոքս»**: Այս քառորդին պատկանող անհատների տեսակի առկայությունը միևնույն ժամանակ հենց այն փաստարկն է, որի համաձայն կյանքի որակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ գնահատումներն անհրաժեշտ է չափել առանձին-առանձին (Rapley, 2003, p. 31):

Այլ հեղինակներ նույնպես, ինչպիսիք են, ասենք, Վիինհոլդենը, Բերգեր-Շմիդտը, Յանկովիչը,

պնդում են, որ անչափ կարևոր է կյանքի որակի և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ դրսևորումների չափումը (Veenhoven (1990, 1996, 1997), Noll (2000) and Berger-Schmitt and Jankowitsch (1999)):

Այս ամենից հետո անհրաժեշտ է նաև նշել, որ խնդիրը դեռևս բաց է քննարկումների համար: Կյանքի որակի սահմանման օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումների ինչպես սկանդինավյան, այնպես էլ ամերիկյան դիրքորոշումների վերաբերյալ համոզիչ ու տրամաբանական փաստարկների, ինչպես նաև բարեկեցիկ կյանքի ցուցանիշներին համարժեք ցուցանիշների դուրսբերումը տակավին հրատապ հարց է ոլորտի հետազոտական մտքի ասպարեզում: Եթե փորձենք ավելի գործնական տեսակետից մոտենալ, ապա ամերիկյան մոտեցման կողմնակիցները և հետազոտողները կարևորագույն դեր են հատկացնում իրենց երջանկության ու բավարարվածության զգացումի վերաբերյալ անհատների գնահատումների համար, ինչն էլ հետագայում հիմք է դառնում բնակչության կենսամակարդակի մասին դատողություններ անելու և որակումներ տալու համար: Այնինչ, սկանդինավյան մոտեցման պարագայում հետազոտողներն արտածում են անհատական բավարարվածությունն ու բարեկեցությունն ընդհանուր բնակչության կյանքի որակի գնահատման արդյունքում:

2. ԿՈ որպես միաչափ կամ բազմաչափ երևույթ: Կյանքի որակի կոնցեպցիայի վերաբերյալ գոյություն ունեցող սահմանումների բազմազանությունն ընդունված է խմբավորել ևս մեկ այլ չափանիշի համաձայն, այն է՝ թե քանի երևույթ է այն չափում: Այլ կերպ ասած, գոյություն ունեն կյանքի որակի միաչափ ու բազմաչափ սահմանումներ: Կյանքի որակի միաչափ գնահատականները սովորաբար առնչվում են առողջապահական հիմնախնդիրների հետ և հաճախ օգտագործվում են նաև որպես մարդկանց առողջական վիճակի գնահատման հոմանիշ հասկացություն: Սակայն ընդհանուր առմամբ կյանքի որակի սահմանումների գերակշիռ մասը բազմաչափ բնույթ են կրում և հատկապես արտացոլվում են կյանքի որակի մի շարք տիրույթներում:

Մյուս կողմից կյանքի որակի միաչափ գնահատական կարելի է դիտարկել նաև կյանքից բավարարվածությունը: Ինչպես Ռեջեսկին և Միհալկոն են փորձում բնութագրել կյանքի որակի «հիմնական հոգեբանական» սահմանումը, այն «անհատի կյանքից գիտակցված ճանաչողական (կոգնիտիվ) բավարարվածությունն է» (Rejeski and Mihalko, 2001, p. 23): Այս հայեցակարգի շրջանակներում կիրառվում է ինչպես միաչափ, այնպես էլ բազմաչափ ցուցանիշների համակարգ, այսինքն՝ բավարարվածություն կյանքից ընդհանուր առմամբ և բավարարվածություն կյանքի որոշակի տիրույթներից կամ դոմեններից (Rejeski and Mihalko, 2001, p. 23):

3. Կյանքի որակի տիրույթներն ու ցուցանիշները: Կյանքի որակի ուսումնասիրությամբ զբաղվողների շրջանում գոյություն ունի համընդհանուր տեսակետ, որ կյանքի որակի առանցքային ասպեկտների կամ տիրույթների ընդգրկվածությամբ պետք է կառուցվի ընդհանրական ու ամբողջական կյանքի որակը (Schalock (1996); Cummins (1997); Felce and Perry (1995); Keith (2001)): Վերջինիս սահմանումներում առանձնացված տիրույթներն, իհարկե, բազմազան են, այդուհանդերձ որոշ հեղինակներ նաև պարզել են, թե դրանց միջև որքան նշանակալի է համընկնելիության աստիճանը (Felce and Perry (1995), p. 59; Keith (2001), p. 53):

Կյանքի որակի տիրույթների մի շարք ուսումնասիրություններ է կատարվել, որոնց հիման վրա փորձ է արվել մշակել ինչ-որ առումով վերջնական ցանկ (Hagerty et al, 2001, p. 74): Այդուհանդերձ, նման վերջնական ցանկի ներառումը կյանքի որակի սահմանման մեջ քննադատության առարկա է հանդիսանում: Օրինակ՝ Քեյթը պնդում է, որ քանի որ կյանքի որակի տիրույթները կարող են տարբերվել մշակույթից մշակույթ, հետևաբար միջմշակութային ընդհանրացումները կյանքի

որակի ոլորտների վերաբերյալ միանգամայն չհիմնավորված են (Keith, 2001, p. 52):

Ստորև բերված աղյուսակում (տե՛ս աղյուսակ 4) ներկայացված են որոշ հեղինակների՝ ուսումնասիրությունների արդյունքում ստացված կյանքի որակի կարևորագույն տիրույթները, որոնք երբեմն բերված են տարբեր բնագավառներից, մասնավորապես.

- ❑ Ֆելսն առաջարկում է կյանքի որակի 6 հնարավոր տիրույթ, ինչը հիմնված է բազմաթիվ կյանքի որակի ուսումնասիրություններում ներառված կյանքի ոլորտների համադրության վրա (Felce (1997), p. 130),
- ❑ Շելլոկը կյանքի որակի իր հայեցակարգային մոդելում ներառում է 8 տիրույթ: Նա ընդգծում է, որ անհատի կյանքի որակի ոլորտում կատարված 16 հետազոտություններում ներգրավված 125 ցուցանիշներից 74,7 տոկոսը վերաբերվում է հենց այդ 8-ին (Schalock (2000), p. 118, Schalock (2004), p. 205),
- ❑ Քեյթը հիմնվում է Շելլոկի մոդելի՝ միջազգային տարբեր կիրառությունների համադրության վրա (Keith, 2001),
- ❑ Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կյանքի որակի գնահատումը բովանդակում է 6 տիրույթ (The WHOQOL Group, 1995),
- ❑ Հագերտին և ուրիշներն առաջարկում են 7 տիրույթ՝ հիմնվելով ողջ աշխարհում ամենատարածված կյանքի որակի ցուցանիշների ուսումնասիրության վրա (Hagerty et al, 2001, p. 75): Դրանք կիրառվում են որպես ելակետ և ընդհանուր են բոլոր երկրների համար, սակայն նաև նախատեսվում է, որ այլ լրացուցիչ տիրույթներ կարող են կյանքի որակի կառույցի մաս կազմել տվյալ հասարակության նախընտրությունների շրջանակներում,
- ❑ Կումմինսն առաջարկում է 7 առանցքային տիրույթ կյանքի որակի 27 սահմանումների հիման վրա և այնպիսի հետազոտությունների արդյունքների հիման վրա, որոնց ժամանակ բնակչության բավականին մեծ խմբերում հարցումներ են արվում մարդկանց կյանքի կարևոր ոլորտների մասին (Cummins, 1997, p. 120):

Այլ հեղինակներ նաև ընդգծում են, որ կյանքի որակի սահմանումներում ներկայացված տիրույթները պետք է լինեն չեզոք, դրական կամ բացասական: Սա չափազանց կարևոր է, որովհետև կյանքի որակի ցուցանիշները նախատեսված են կյանքի ամբողջական փորձառությունը՝ դրական և բացասական, ընդգրկելու համար: Սա նաև կարևոր է, որովհետև կյանքի որակի հայեցակարգային մոդելների մեծ մասը շեշտադրում են հասկացության դինամիկ բնույթը: Օրինակ՝ Ֆելսն ու Պերրին մատնանշում են , որ իրենց մոդելում բոլոր ներառված «տիրույթները ներկայացված են միմյանց հետ դինամիկ փոխգործողության մեջ և մշտապես պոտենցիալ փոխադարձորեն կախված են միմյանցից»: Կյանքի որակի տարբեր տիրույթների միջև հարաբերակցության բնույթը կարող է ներկայացվել հետևյալ կերպ. «բացի միմյանց վրա ներգործելուց տիրույթներից յուրաքանչյուրը կարող է բազմաթիվ արտաքին գործոնների հնարավոր ազդեցության կրողը լինել, որոնք բնութագրում են անհատի կենսաբանական կառուցվածքը, զարգացման ու մշակութային պատմությունը, ներկա միջավայրը: Նման արտաքին ազդեցությունները կարող են ներառել ժառանգական, սոցիալական և նյութական ժառանգություն, տարիքն ու հասունությունը, զարգացումը, զբաղվածությունը, տարեկիցների ազդեցությունը և

կարծիքները, սոցիալական, տնտեսական ու քաղաքական այլ փոփոխականներ: Քանի որ կյանքի որակը սահմանող երեք տարրերն էլ կարող են արտաքին ազդեցության առարկա դառնալ, դրանց գնահատումը խիստ անհրաժեշտ է չափման ցանկացած համակարգում ներառելու համար, քանի որ որևէ մեկի վերաբերյալ իմացությունը տակավին չի կանխորոշում կամ ենթադրում մյուսի բնույթը, ինչպես նաև դրանց միջև հարաբերակցությունը կարող է նույնը չլինել ժամանակի ընթացքում»:

Աղյուսակ 4. Կյանքի որակի կարևորագույն տիրույթները

N	Ֆելա	Շելոկ	ԱՀԿ	Հազերտի և ուրիշներ	Կումինս
1.	Ֆիզիկական բարեկեցություն	Ֆիզիկական բարեկեցություն	Ֆիզիկական	Առողջություն	Առողջություն
2.	Նյութական բարեկեցություն	Նյութական բարեկեցություն	Շրջակա միջավայր	Նյութական բարեկեցություն	Նյութական բարեկեցություն
3.	Սոցիալական բարեկեցություն	Սոցիալական ներգրավվածություն	Սոցիալական հարաբերություններ	Համայնքին պատկանելություն	Համայնքային բարեկեցություն
4.	Արտադրական բարեկեցություն			Աշխատանք և արտադրողական գործունեություն	Աշխատանք և արտադրողական գործունեություն
5.	Զգացական բարեկեցություն	Զգացական բարեկեցություն	Հոգեբանական	Զգացական բարեկեցություն	Զգացական բարեկեցություն
6.	Իրավունքներ և/կամ քաղաքացիական բարեկեցություն	Իրավունքներ			
7.		Միջանձնային հարաբերություններ		Ընտանիքի և ընկերների հետ հարաբերություններ	Սոցիալական/ընտանեկան կապեր
8.		Անձնական զարգացում			
9.		Ինքնաճանաչում	Անկախության աստիճան		
10.			Հոգևոր		
11.				Անձնական անվտանգություն	Անվտանգություն

Աղբյուրը՝ *Scottish executive social research, 2005, p. 26*

Ինչ վերաբերվում է կյանքի որակի վերոնշյալ տիրույթներում ներառված հնարավոր ցուցանիշների համախմբությանը, ապա այս ասպարեզում էլ միանշանակ համակարծություն չկա: Շելլոկն ու Վերդուգոն 8 տիրույթներից յուրաքանչյուրի համար առանձնացնում են *ամենատարածված* 3-ական ցուցանիշներ, որոնք ներկայացված են աղյուսակում (տե՛ս աղյուսակ 5) (Schalock, Robert L and Verdugo, M (2002), in Schalock (2004), p. 206): Ըստ էության՝ Շելլոկի առաջարկած մոտեցումն ամբողջությամբ հիմնված է Բրոնֆենբրենների «էկոլոգիական համակարգերի տեսության վրա» (Bronfenbrenner U., 1979):¹

4. Արժեքային համակարգի կարևորությունը կյանքի որակի գնահատման ժամանակ: Կյանքի որակի սահմանման կամ գնահատման ժամանակ անհատների արժեքների և ձգտումների կարևորությունն ընդգծվում է բազմաթիվ հետազոտողների կողմից (Felce and Perry (1996); Schalock

¹ <http://pt3.nl.edu/paquetteryanwebquest.pdf>

(1996); Day and Jankey (1996); Keith (2001), p. 52): Սակայն այս պարագայում առավել կարևոր հարցադրում պետք է լինի, թե որքանով են անձնական արժեքները կրում կյանքի պայմանների և փորձառության ազդեցությունը: Ֆելսն ու Պերրին առաջարկում են կյանքի որակի յուրահատուկ մոդել, որով փորձ է արվում ինտեգրել կյանքի որակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ գնահատականներն անձնական արժեքների հետ՝ միևնույն ժամանակ մատնանշելով նշված երեք բաղադրիչների միջև դինամիկ հարաբերակցությունը (Felce and Perry, 1995; Felce and Perry, 1996): Նրանք բնորոշում են անձնական արժեքները որպես «կյանքի սովյալ ոլորտում օբյեկտիվ կյանքի պայմանների ու սուբյեկտիվ բարեկեցության նկատմամբ անհատի հարաբերական կարևորություն» (Felce and Perry, 1996, p. 64): Այս մոտեցման սխեմատիկ ներկայացումը տրված է ստորև (տե՛ս գծապատկեր 3):


Աղյուսակ 5. Կյանքի որակի տիրույթների ցուցանիշներն ու բնութագրիչները

Կյանքի որակի տիրույթ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Զգացական բարեկեցություն	<ul style="list-style-type: none"> օ բավարարվածություն օ ինքնագնահատանք օ սթրեսների բացակայություն 	<ul style="list-style-type: none"> օ բավարարվածություն, տրամադրություն, հաճույք օ ինքնություն, ինքնարժեք, ինքնագնահատում օ կանխատեսելիություն, վերահսկողություն
Միջանձնային հարաբերություններ	<ul style="list-style-type: none"> օ շփումներ օ հարաբերություններ օ աջակցություն 	<ul style="list-style-type: none"> օ սոցիալական ցանցեր, սոցիալական կապեր օ ընտանիք, ընկերներ, տարեկիցներ օ զգացական, ֆինանսական, ֆիզիկական
Նյութական բարեկեցություն	<ul style="list-style-type: none"> օ ֆինանսական կարգավիճակ օ զբաղվածություն օ կենցաղ 	<ul style="list-style-type: none"> օ եկամուտներ, օգուտներ օ աշխատանքային կարգավիճակ, միջավայր օ տան տեսակ, սեփականություն
Անձնական զարգացում	<ul style="list-style-type: none"> օ կրթություն օ կարողություններ օ ներկայացում 	<ul style="list-style-type: none"> օ ձեռքբերումներ, կարգավիճակ օ ճանաչողական, սոցիալական, պրակտիկ օ հաջողություն, ձեռքբերում, արտադրողականություն
Ֆիզիկական բարեկեցություն	<ul style="list-style-type: none"> օ առողջություն օ առօրյա գործունեություն օ ժամանց 	<ul style="list-style-type: none"> օ ֆունկցիոնալություն, սիմպտոմներ, մարմնամարզություն, սնունդ օ հոգատարություն, շարժունություն օ հանգիստ, առողջության վերականգնում, սիրած զբաղմունք/ հետաքրքրություն
Ինքնաձանաչում	<ul style="list-style-type: none"> օ անձնական վերահսկողություն օ նպատակներ և անձնական արժեքներ օ ընտրություններ 	<ul style="list-style-type: none"> օ անկախություն օ ցանկություններ, սպասումներ օ հնարավորություններ, այլընտրանքներ, նախընտրություններ
Սոցիալական ներգրավվածություն	<ul style="list-style-type: none"> օ համայնքային ներգրավվածություն ու մասնակցություն օ համայնքային դեր օ սոցիալական աջակցություն 	<ul style="list-style-type: none"> օ աջակից, կամավոր օ աջակցության ցանցեր, ծառայություններ
Իրավունքներ	<ul style="list-style-type: none"> օ մարդու օ իրավական 	<ul style="list-style-type: none"> օ հարգանք, արժանապատվություն, հավասարություն օ քաղաքացիություն, մատչելիություն

□ Կյանքի որակ և սուբյեկտիվ բարեկեցություն: Տարբերություններ ու նմանություններ

Բարեկեցության հասկացության ձևակերպման ու ընկալման ժամանակ սովորաբար հանդիպում են նույն հիմնախնդիրները, ինչ կյանքի որակի դեպքում, երբ փորձ է կատարվում այն սահմանել: Նույնիսկ առանձին գիտությունների համատեքստում բարեկեցության հասկացության սահմանումների բազմազանությունն ու հակասությունն այնքան մեծ է, որ դժվար է որոշակի համակարգված մոտեցում կիրառել խնդրի նկատմամբ: Եվ ինչպես կյանքի որակի պարագայում, այս դեպքում էլ հետազոտողները շատ հաճախ խուսափում են դրա սահմանումից՝ փորձելով պարզապես այն գնահատել կամ չափել: Ընդ որում՝ պետք է ընդգծել, որ բարեկեցության հասկացության լավագույն խորքային հետազոտությունն իրականացվել է տնտեսագիտության դիրքերից:

Գծապատկեր 3. Կյանքի որակի մոդելն ըստ Ֆելսի ու Պերրիի



Աղբյուր՝ *Rapley, 2003, p. 54, from Felce and Perry, 1996*

Երջանկության տնտեսագիտության բնագավառում, որտեղ սուբյեկտիվ բարեկեցության հայեցակարգը սահմանվում է որպես կյանքից բավարարվածություն, այն կարող է լինել միաչափ կամ բազմաչափ: Այլ կերպ ասած, տնտեսագիտության տեսակետից սուբյեկտիվ բարեկեցությունը

կարող է սահմանվել որպես և՛ ընդհանուր առմամբ կյանքից բավարարվածություն (միաշափ), և՛ կյանքի տարբեր ոլորտներից բավարարվածություն (բազմաշափ): Որոշ հետազոտողներ, որոնք բարեկեցությունը դիտարկում են որպես կյանքի որակին համարժեք կոնցեպցիա, երբեմն տարբերակում են մտցնում օբյեկտիվ պայմաններ ներառող բարեկեցությունը և սուբյեկտիվ բարեկեցությունը, որն, ըստ էության, հենց անհատների կողմից գնահատված ու սահմանված բարեկեցությունն է և հավանաբար կարող է ընդգրկել օբյեկտիվ պայմաններին տրված սուբյեկտիվ մոտեցումներ (ընկալումներ): Մյուսները փորձում են տարբերակել երջանկություն և կյանքից բավարարվածություն գաղափարները, ինչպես, օրինակ՝ Հելլիուելն ու Պուտնամը գրում են. «*Ընդհանուր առմամբ երջանկության ինքնագնահատումներն արտացոլում են տրամադրության հարաբերականորեն կարճատև իրավիճակային (աֆեկտիվ) արտահայտությունը, մինչդեռ կյանքից բավարարվածության ինքնագնահատումը չափում է երկարաժամկետ ու առավել կայուն (կոգնիտիվ) ընկալումներ*» (Helliwell and Putnam (2004), p. 1435): Տնտեսագետները կիսում են այն համոզմունքը, որ կյանքից բավարարվածության՝ անհատների գնահատումներն արտացոլում են նրանց ընկալումների տարբեր ասպեկտները, որոնք առավելապես առնչվում են նրանց կյանքի հնարավորություններին և արդյունքներին: Դրանք կարող են լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ կամ ներքին և արտաքին որակներ, և անհատների կողմից դրանց արժեվորումը կարող է տարբեր լինել (Veenhoven R., 1998): Դայներն ու Սուհն առաջարկում են սուբյեկտիվ բարեկեցության մի մոդել, որը պահանջում է երեք գործոնների գնահատում՝ կյանքից բավարարվածություն, հաճելի և ոչ հաճելի աֆեկտներ (Diener and Suh (1997), p. 201):

Կյանքի որակի և բարեկեցության հասկացությունների միջև հարաբերակցության շուրջ կարծիքները տարբեր են, նույնիսկ հակասական: Որոշները հասկացությունները կիրառում են որպես միմյանց փոխարինելի, մինչդեռ մյուսները դիտարկում են բարեկեցությունը որպես կյանքի որակի մի բաղադրիչ (Diener and Suh (1997); Vittersø (2004); Lane, RE (1996), p. 259, in Avner, pp. 256-293, quoted in (Christoph & Noll 2003)), p. 197): Տնտեսագետները հստակ բաժանում են մտցնում բարեկեցության, որն, ըստ նրանց, վերաբերվում է անհատներին, և կյանքի որակի միջև, որը նրանց տեսակետից առնչվում է անհատների միջև բարեկեցության համեմատությանը:

□ Կյանքի որակի գնահատման մոտեցումները

Այս հատվածում ներկայացվում են կյանքի որակի գնահատման տարբեր մոտեցումներն ու դրանց շուրջ ծավալված մեթոդաբանական հակասական տեսակետները: Իրականում կյանքի որակի գնահատման խնդիրն առաջին հերթին առնչվում է հենց կյանքի որակի սահմանմանը, այսինքն՝ թե ինչն է կոնկրետ փորձ արվում գնահատել: Եվ քանի որ արդեն իսկ հստակ ուրվագծվեց այն փաստը, որ սահմանումները, հետևապես նաև գնահատվող օբյեկտներն ու նպատակները բազմաթիվ են ու տարբեր, տրամաբանական է, որ գնահատականները, ինչպես նաև մեթոդաբանական մոտեցումները նույնպես տարբեր են:

Մեթոդաբանական բավականին համակողմանի պատկեր է տալիս Շելոկը (Shallock, 204, p. 207), ինչն ամփոփ կերպով ներկայացված է աղյուսակ 6-ում: Չնայած կոնկրետ պարագայում նրա ուսումնասիրության առարկան մտավոր թերություններ ունեցող անհատներն էին, թերևս սկզբունքները, որոնք նա մշակել է, ավելի ընդլայնված կիրառություն կարող են ունենալ: Շելոկն առաջ է քաշում, այսպես կոչված, պլուրալիզմի մեթոդաբանական մոտեցումը, որի միջոցով միանգամայն արդյունավետորեն հնարավոր է ուսումնասիրել կյանքի որակի բազմաշափ բնույթը, ընդ որում՝ փաստելով, որ կյանքի որակի տարբեր մակարդակներ լավագույնս հնարավոր է

գնահատել մի շարք տեխնիկաների կիրառման ու համադրման միջոցով: Ուրեմն, կյանքի որակը միաժամանակ կարող է հետազոտվել օբյեկտիվ գործոնների ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գնահատման միջոցով: Հետազոտության նույն առարկայի նկատմամբ բազմակի մոտեցումների համադրված կիրառումը, ինչն ընդունված է անվանել «տրիանգուլյացիա» /անգլ. **triangulation**, այսինքն՝ նույն օբյեկտի մի քանի մասերի միավորում մեկ հետազոտության մեջ/, թույլ է տալիս խուսափել հետազոտական առանձին մեթոդների թերություններից ու խնդիրներից՝ ավելի հուսալի արդյունքներ ապահովելով:

Աղյուսակ 6. Կյանքի որակի գնահատման մեթոդաբանական պլուրալիզմը

Համակարգի մակարդակ	Գնահատման խնդիրը	Գնահատման մեթոդ
Միկրո համակարգ	Կյանքի որակի սուբյեկտիվ բնույթ /անհատական գնահատում, ընկալում/	Բավարարվածության հետազոտություն Երջանկության գնահատում
Մեզո համակարգ	Կյանքի որակի օբյեկտիվ բնույթ /ֆունկցիոնալ գնահատում/	Դասակարգման սանդղակներ /ֆունկցիոնալության մակարդակ/ Մասնակիցների գնում Հարցաթերթիկներ Անօրյա գործողություններում մասնակցություն Ինքնորոշում և անձնական վերահսկողություն Դերային կարգավիճակ /կրթություն, աշխատանք, կյանք/
Մակրոհամակարգ	Արտաքին պայմաններ /սոցիալական ցուցանիշներ/	Կենսամակարդակ Զբաղվածության մակարդակ Գրագիտության աստիճան Մահացության տեմպ Կյանքի սպասվող տևողություն

Աղբյուրը՝ Shallock, 204, p. 207

Կյանքի որակի գնահատման կոնկրետ մեթոդի ընտրության ժամանակ ընդհանրապես անհրաժեշտ է լինում նախնառաջ հստակեցնել, որ բնակչության և անհատի կյանքի որակի չափման պարագաներում տարբեր մոտեցումներ են կիրառվում: Այդուհանդերձ, երկու դեպքում էլ գերակա մոտեցումը կարելի է բնութագրել որպես պոզիտիվիստական և հիմնված քանակական մեթոդների վրա: Սովորաբար բնակչության կյանքի որակի հետազոտությունները հիմնվում են սոցիալական ցուցանիշների կիրառման վրա: Սա ներառում է կյանքի որակի մի շարք տիրույթներում ընդգրկվելիք ցուցանիշների ճշգրտում: Շատ հաճախ վերջիններս ագրեգացվում են կյանքի որակի մեկ ցուցանիշ կառուցելու նպատակով, ընդ որում, ցուցանիշները կարող են օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթ ունենալ՝ ստացված սոցիալ-տնտեսական վիճակագրությունից և/կամ հարցումների միջոցով: Նման ցուցանիշներ կառուցելու համար կիրառվող տարածված միջազգային աղբյուրներից կարելի է առանձնացնել ՀԲ Համաշխարհային զարգացման ցուցանիշները (The World Development Indicators), ՄԱԿ-ի Սոցիալական վիճակագրության ու ցուցանիշների ժողովածուն և այլն: Անհատների կյանքի որակի գնահատման ժամանակ, չնայած բազմաթիվ մեթոդներ կան՝ ներառյալ էթնոգրաֆիկ ուսումնասիրությունները և վարքագծի հետազոտությունը, որպես գերակա մոտեցում դեռևս համարվում է հարցաթերթը: Սա կիրառվում է աղյուսակ 6-ում ներկայացված առաջին երկու դեպքերում՝ անհատական ու ֆունկցիոնալ գնահատումներում:

Անկախ նրանից, թե որ մակարդակի համար է իրականացվում կյանքի որակի գնահատում, գոյություն ունեն ստորև թվարկված մի քանի ընդհանրական բնույթի ասպեկտներ, որոնք

անհրաժեշտ է հստակեցնել նախքան որևէ կոնկրետ մեթոդաբանության մշակումը և որոնցից առաջին երեքը մանրամասն արդեն պարզաբանվել են:

- ❑ Չափանիշների/տիրույթների իդենտիֆիկացում. ավելի վաղ արդեն նշվել է, որ չկան որոշակի սահմանված առանցքային կամ հիմնական կյանքի որակի տիրույթներ, սակայն բազմաթիվ հետազոտողների մոտ տիրույթների համընկնումների արդյունքում որոշակի կոնսենսուս է ձևավորվել այս հարցի շուրջ:
- ❑ Տիրույթների ընտրության ժամանակ սուբյեկտիվ դատողությունը միշտ առկա է, ուստի գործնական հետազոտությունների ժամանակ անհրաժեշտ է հնարավորինս հիմնավորել այս կամ այն տիրույթի ներառումը կամ բացառումը:
- ❑ Նախորդ հարցի համատեքստում վտանգավոր սխալներից խուսափելու նպատակով այլընտրանքային մոտեցում կարող է լինել իրենց կյանքի որակի ձևավորմանը նպաստող պայմանների կամ ոլորտների վերաբերյալ հենց անհատների կարծիքների ուսումնասիրությունը և համապատասխան եզրահանգումներ կատարելը:
- ❑ Անհրաժեշտ է հստակեցնել այն ժամանակահատվածը, որի համար իրականացվում է կյանքի որակի գնահատում: Ընդհանրապես հնարավոր է երկու այլընտրանքային մոտեցում: Մի դեպքում դիտարկվում է անհատի կյանքի ոլորտները խիստ որոշակի պահի դրությամբ՝ սովորաբար ներկա ժամանակահատվածում, կամ շատ ընդհանուր դատողություն է կատարվում կյանքի որակի վերաբերյալ անհատի ծննդյան օրվանից ի վեր (Diener, 2006:401):
- ❑ Կյանքի որակի տիրույթների կամ ցուցանիշների կշռման վերաբերյալ որոշումները հսկայական ներգործություն կարող են ունենալ ողջ հետազոտության ելքերի վրա, հետևաբար կշռման մեթոդի ընտրությունը կյանքի որակի գնահատման մեթոդաբանական առանցքային խնդիրներից է: Եվ քանի որ նախորդ թվարկված խնդիրներն արդեն իսկ հանգամանակից ներկայացվել են, ստորև կանդրադառնանք կյանքի որակի տիրույթների ու բնութագրիչների կշռման վերաբերյալ գոյություն ունեցող մոտեցումներին:

Ընդհանրապես կյանքի որակի գնահատման գործում անհատական արժեքների դերը մեծապես կարևորող հետազոտողները համակարծիք են, որ կյանքի որակի տիրույթները պետք է կշռվեն այնպես, որ արտացոլվի յուրաքանչյուր անհատի կողմից սովյալ ոլորտին տրվող կարևորությունը: Մասնավորապես, Ֆելսն ու Պերրին պնդում են, որ արժեքների վրա հիմնված կշիռները պետք է կիրառվեն ն՝ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ գնահատումների դեպքում, մինչդեռ Կումմինսն այն տեսակետն է առաջ քաշում, որ միայն սուբյեկտիվ գնահատականներն է նպատակահարմար կշռել անհատական կարևորության սանդղակով, իսկ օբյեկտիվ գնահատականներն, ըստ էության, պետք է լինեն բարեկեցության նորմատիվ ցուցանիշները, այսինքն՝ ընտրված լինեն հասարակության համար ներկայացուցչական նորմերից: Այս տեսակետից շատ կարևոր է և թերևս առավել հետաքրքիր է նորմերով չափված օբյեկտիվ ցուցանիշների ու արժեքներով կշռված սուբյեկտիվ գնահատականանների համեմատությունը, քան դրանք մեկ ցուցանիշում ներառելը: Այս իմաստով բավականին հետաքրքիր մոտեցում է, այսպես կոչված, «ձեռքվածքի» վերլուծությունը, այսինքն՝ երբ հաշվարկվում է անհատների կամ հասարակության գնահատականների՝ սուբյեկտիվ բարեկեցության և որևէ ընտրված չափանիշի, ասենք, օրինակ՝ աղքատության մակարդակ, մարդկային զարգացման ցուցանիշ և այլն, միջև տարբերությունը:

Ընդհանուր հաշվով կյանքի որակի տիրույթների կամ բնութագրիչների կշռման երկու սկզբունք է հնարավոր կիրառել՝ կշիռներ, որոնք դրվում են հետազոտողի կողմից առկա փորձի կամ էլ

փորձագիտական հարցումների արդյունքների հիման վրա, կամ ստացվում են անմիջականորեն անհատի գնահատումների և կարևորության սանդղակի միջոցով: Կյանքի որակի հետազոտության տեսակետից, հատկապես եթե խոսք է գնում սուբյեկտիվ բարեկեցության չափման մասին, ոլորտի ականավոր ներկայացուցիչները հարում են այն համոզմունքին, որ կյանքի որակի առանցքային ոլորտներն ու դրանց, ինչպես նաև առանձին բնութագրիչների կշիռները, պետք է անհրաժեշտաբար տրվեն հենց անհատի արժևորմամբ: Սակայն այստեղ էլ մոտեցումները տարբեր են: Հիմնականում առանձնացվում է երկու տարբերակ՝ **անհատական կյանքի որակի գնահատման ժամանակացույց և ուղղակի կշռում:**

Անհատական կյանքի որակի գնահատման ժամանակացույց (*The Schedule for the Evaluation of Individual Quality of Life-SEIQoL*) (John P. Browne, Ciaran A. O'Boyle, Hannah M. McGee, Nicholas J. McDonald, C. R.B. Joyce, 1997, pp. 301-309): Սա հարցվող արժեքային համակարգի և նախընտրությունների վրա հիմնված կշռման մեթոդ է, որը ներառում է իրականացման երեք փուլ: Առաջինն, այսպես կոչված, *կիսակառուցվածքավորված հարցազրույցն* է, որի ժամանակ հարցվողներին խնդրվում է մտածել իրենց կյանքի մասին ու առանձնացնել կյանքի հինգ ոլորտ (դոմեն՝ տիրույթ), որոնք նրա կյանքի որակի համար առավելագույն կարևորություն ունեն: Երկրորդ փուլում հարցվողը գնահատում է յուրաքանչյուր առանձնացված ոլորտը 0-100 մմ ուղղահայաց անալոգային սանդղակի վրա, որի երկու ծայրամասերն են «լավագույն հնարավոր» և «վատագույն հնարավոր» տարբերակները: Սրանք, փաստորեն, խարիսխներ են, որոնց նպատակը հարցվողին յուրաքանչյուր ոլորտում իր կարգավիճակի գնահատման ասպարեզում որոշակի ազատության աստիճանով օժտելն է: Ըստ էության՝ այս մոտեցումը չի կենտրոնանում գնահատման որոշակի չափորոշիչների վրա, ինչպիսիք են, ասենք, ֆունկցիոնալ կարգավիճակը կամ բավարարվածությունը, այլ անհատն ինքն է որոշում, թե ինչ չափորոշիչ կիրառի ոլորտի գնահատման համար: Երրորդ փուլում քանակապես գնահատվում է յուրաքանչյուր ոլորտի հարաբերական կարևորությունը կամ կշիռը: Մեթոդի նախասկզբնական տարբերակում այս տեխնիկան հայտնի էր որպես դատողության վերլուծություն: Վերջինս թույլ է տալիս քանակապես հաշվարկել ընդհանուր դատողության վրա ազդող տարբեր գործոններ: Դատողության վերլուծությունը պահանջում է, որ յուրաքանչյուր անհատ իր իսկ տեսանկյունից գնահատի կյանքի հիպեթոտիկ 30 սցենար, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է հինգ ուղղահայաց սյուններից՝ կրկին «լավագույն հնարավորից» մինչև «վատագույն հնարավոր» մասշտաբով: Սյունների արժեքները տարբերվում են սցենարից սցենար՝ ձևավորվելով պատահական վերաբաշխումների արդյունքում, ինչը թույլ կտա դատողության համար ունենալ տեղափոխումների առավելագույն քանակ: Հարցվողները դատողություններ են կատարում ստանդարտ սցենարների վերաբերյալ, որոնք ներկայացված են ստանդարտ հերթականությամբ: Միակ վարիացիան յուրաքանչյուր սյունակի անվանման համար առաջին փուլում հարցվողների կողմից ընտրված ոլորտների կիրառությունն է: Դատողությունները կատարվում են վիզուալ անալոգային մասշտաբի վրա՝ «վատագույն կյանքի պատկերացումից» մինչև «լավագույն կյանքի պատկերացում» երկու ծայրամասերում: 30 սցենարներից 10-ը կրկնություններ են, ինչը թույլ է տալիս գնահատել դատողությունների համապատասխանությունը: Դատողությունների վերլուծության մեթոդաբանության ժամանակ սա ընդունված ընթացակարգ է: Այնուհետև դատողությունները բազմակի ռեգրեսիոն վերլուծության միջոցով ձևավորում են 5 հարաբերական կշիռներ, որոնց գումարը 100 է: Կշիռները ցույց են տալիս հարցվողի կյանքի որակի համար յուրաքանչյուր ոլորտի հարաբերական կարևորությունը: Սա կարող է բազմապատկվել յուրաքանչյուր ոլորտի կարևորության աստիճանի միավորի հետ, և հանրագումարն իրենից կներկայացնի ամբողջական կյանքի որակի ցուցանիշը, որը կարող է

ընկած լինել 0-ից 100 միջակայքում:

Ուղղակի կշռում: Չնայած դատողությունների վերլուծությունը բավականին հեշտացնում է անհատի մակարդակում կյանքի որակի գնահատման ողջ ընթացակարգը, այն միշտ չէ, որ հարմար գործիք է լինում: Պատճառներից մեկը հենց այն է, որ միայն հարցվողի ընթացակարգի բացատրության և այն իրականացնելու նպատակով երկար ժամանակ է պահանջվում՝ 10-ից 60 րոպե: Այնուհետև, հետազոտողի համար կշիռների հաշվարկումը նույնպես ժամանակատար է: Փոխարենը գոյություն ունի ուղղակի կշռման ընթացակարգը, որը կարող է փոխարինել դատողությունների վերլուծությանը: Այն ավելի կարճ է, կշռադատված ու հարցվողի կոգնիտիվության տեսակետից պակաս խստապահանջ է, քան նախորդ տարբերակը: Ուղղակի կշռման ընթացակարգը բաղկացած է մի սկավառակից, որը բաժանված է հինգ միմյանցից հստակ առանձնացված, դեպի կենտրոն ձգված, միմյանց նկատմամբ փակ գունավոր հատվածներից: Վերջիններս անվանակոչված են հարցվողի կողմից ընտրված հինգ ոլորտների անուններով: Մկավառակը կարող է պտտվել ոլորտների նկատմամբ՝ այդպիսով ստեղծելով դինամիկ դիագրամա, որում յուրաքանչյուր հատվածի հարաբերական չափը ցույց է տալիս այն կշիռը, որ հարցվողը վերագրում է կյանքի որակի ոլորտին: Յուրաքանչյուր ոլորտի ներկայացրած դիագրամայի հատվածը կարող է 100 միավորանոց մասշտաբով գնահատվել: Նման ընթացակարգով, փաստորեն, ազատության աստիճանն է նվազեցվում, որը միշտ առկա է, երբ հարցվողն ինքնուրույն փորձում է առանձնացնել դիագրամայի հատվածները. այս դեպքում դիագրամային մնացյալ հատվածը կրճատվում է ոլորտի կշռմանը զուգահեռ: Ընդ որում՝ այս ընթացակարգը տվյալների հետագա ծրագրային վերլուծություն չի պահանջում (John P. Browne, Ciaran A. O'Boyle, Hannah M. McGee, Nicholas J. McDonald, C. R.B. Joyce, 1997, pp. 301-309):



❑ Կյանքի որակի գնահատումը Նոր Զելանդիայում

Նոր Զելանդիայում կյանքի որակի գնահատման նախագիծը նպատակ ունի խորքային ուսումնասիրություն կատարել և գնահատել բարեկեցության մակարդակը Նոր Զելանդիայի 12 խոշոր քաղաքներում: Չնայած երկիրը հարաբերականորեն փոքրաթիվ բնակչություն ունի, այն աշխարհի ամենաբարձր աստիճանի ուրբանիզացված երկրներից մեկն է:

Նախագծի գլխավոր նպատակն այնպիսի տեղեկատվության հավաքագրումն է, որ հնարավորություն կընձեռի համակողմանիորեն հասկանալ սոցիալական, տնտեսական ու շրջակա միջավայրի պայմանները, որոնք էլ իրենց հերթին հիմք կհանդիսանան այդ 12 խոշոր քաղաքային համայնքներում կյանքի որակի քանակական գնահատման համար: 12 քաղաքային վարչական շրջանները ներառում են Ռոդնեյ, Տաուրանգա, Նորթ Շոր, Համիլտոն, Ուայտակեր, Պորիրուա, Օքլենդ, Հատ, Մանուկաու, Վելինգտոն, Քրիսչչրչ, Դունեդին: Սրանք կամ քաղաքային համայնքներ են իրենց բնույթով կամ էլ աճի արագ տեմպեր արձանագրող քաղաքատիպ վայրեր:

Ընտրված ցուցանիշներն ու չափորոշիչները ելնում են կանխորոշված այն նպատակային արդյունքներից, որոնք անհրաժեշտ են նշված քաղաքներում կյանքի առկա որակը պահպանելու և հետագայում բարելավելու համար: Այդ ցուցանիշները նախագծվել են, որպեսզի.

- ❑ քանակապես չափվեն ու մոնիտորինգի ենթարկվեն սոցիալական, տնտեսական ու շրջակա միջավայրի պայմանները,
- ❑ չափվի առաջընթացը նպատակային դոմեններում:

Ցուցանիշներն ու չափորոշիչները դասակարգված են 11 դոմենում՝ ներառելով 68 հիմնական կյանքի որակի չափորոշիչներ և 186 ցուցանիշ: Վերջիններիս համար տեղեկատվական աղբյուր են հանդիսացել հիմնականում.

- ❑ կյանքի որակի հետազոտությունները, որոնք անցկացվում են երկու տարին մեկ և չափում բնակիչների սուբյեկտիվ ընկալումներն իրենց առողջության ու բարեկեցության, հանցագործությունների և անվտանգության, կրթության և աշխատանքի, համայնքի, շրջակա միջավայրի, մշակույթի և նույնականացման, ինքնության հաստատման վերաբերյալ,
- ❑ երկրորդային տվյալներ. ասենք, օրինակ՝ պետական կառավարման մարմիններից ու հասարակական կազմակերպություններից:

Կոնկրետ ցուցանիշների ընտրության համար հիմք են ծառայել որոշակի սկզբունքներ, մասնավորապես.

- ❑ ռելևանտություն /նպատակային քաղաքներում սոցիալական, տնտեսական ու շրջակա միջավայրի նախասահմանված արդյունքների հետ համադրելի/,
- ❑ չափելիություն /առկա տվյալներով քանակապես չափելի/,
- ❑ ֆինանսապես օպտիմալ /հնարավոր է ստանալ ժամանակի և ֆինանսական ռեսուրսների հնարավորինս խելամիտ ծախսով/,
- ❑ համադրելիություն /հնարավոր է ստանդարտացնել և ճշգրտորեն համեմատել նմանատիպ ցուցանիշների հետ/,
- ❑ հասկանալիություն /հնարավոր է ներկայացնել նպատակային լսարանին պարզ ու ընկալելի ձևով/,

- զգայունություն, ճկունություն /կարող է հարմարվել փոփոխվող միջավայրին/,
- ժամանակային /կրկնվող, հնարավոր է միտումներ արձանագրել ժամանակի ընթացքում/,
- հնարավոր է բաժանել ըստ դեմոգրաֆիկ կամ այլ բնութագրիչների/,
- առաջնորդություն /առաջնային ցուցանիշներ է պարունակում նախագուշացնող կամ փոփոխությունը կանխատեսող/,
- լազային /լազ ցույց տվող ցուցանիշներ է ներառում էֆեկտների կամ հետևանքների ներկայացման համար/:

Կյանքի որակի բաղադրյալ գնահատականը կազմող 11 դոմենները և դրանց համապատասխան ցուցանիշներն են.

1. մարդիկ – բնակչության աճ, էթնիկ պատկանելություն, տարիք, ընտանիքներ և տնային տնտեսություն, անաշխատունակություն,
2. առողջություն – կյանքի տևողություն, ցածրաքաշ նորածիններ, մանկական մահացություն, պատանի ծնողներ, հաղորդակցային հիվանություններ, բժիշկների հասանելիություն, հոգեկան առողջություն և զգայական բարեկեցություն, անձնապես գրանցված առողջական կարգավիճակ, մոդիֆիկացված ռիսկի գործոններ, ռեկրեացիա և հանգիստ,
3. գիտելիք և հմտություններ – նախադպրոցական կրթության մատչելիություն և մասնակցություն, դպրոցական հաճախելիություն/ներգրավվածություն, որակավորման աստիճաններ, հմտություններ և աշխատանքի համապատասխանություն, կարիերայի ընթացքում ուսուցում,
4. անվտանգություն/ապահովություն – անվտանգության ընկալումներ, մանկական անվտանգություն, վնասվածքներ, ճանապարհների անվտանգություն, աշխատատեղերի անվտանգություն, հանցագործությունների մակարդակ,
5. կենցաղային պայմաններ – տան սեփականություն, կենցաղային ծախսեր և դրանց մատչելիություն, տան բնակեցվածության խտություն, քաղաքային բնակեցվածության խտություն, պետության/քաղաքային իշխանությունների կողմից բնակության վայրի տրամադրում, բնակարանային մատչելիություն,
6. սոցիալական կապեր – ընդհանուր կյանքի որակ, բազմազանությունը և ինդենտիֆիկացիա, համայնքի առավելություններն ու ոգին, հեռահաղորդակցության միջոցների հասանելիություն, արվեստ և մշակույթ,
7. տնտեսական զարգացում – տնտեսական աճ, զբաղվածություն, հետազոտություններ և զարգացում, տեղական գործարարություն, մանրածախ վաճառք, ոչ ռեզիդենտներին շինարարության թույլտվություն, տուրիզմ, որակավորված միգրանտներ,
8. քաղաքացիական ու քաղաքական իրավունքներ – Ուայտանգի /Waitangi/ համաձայնագիր, խորհրդի որոշումների կայացմանը համայնքի ներգրավվածություն, ընտրություններին մասնակցության աստիճան, որոշումների կայացման տեղական մարմիններում ներկայացվածություն,
9. տնտեսական կենսամակարդակ – եկամուտներ, աշխատանք/հանգիստ հաշվեկշիռ, ծախսումներ, սոցիալական մեկուսացվածություն, զուտ արժեքներ,
10. բնական միջավայր – տեղական շրջակա միջավայրի հիմնախնդիրներ, թափոնների կառավարում և վերամշակում, բիոբազմազանություն, էներգիայի սպառում, օդի մաքրություն,

ավերի և ջրի/լճերի որակ, խմելու ջրի որակ, ջրի սպառում, էկոլոգիական գոտիներ,

11. ներկառուցված միջավայր/ենթակառուցվածքներ – քաղաքի տեսքը, հողօգտագործում, տրանսպորտ և երթևեկություն, հանրային տրանսպորտ:

Մեթոդաբանություն

Կատարվել է հավանական ընտրանք Նոր Զելանդիայի 15 տարեկան և ավելի բնակչությունից: Ընդհանուր ընտրանքը կազմել է n=8155 նորզելանդացի ռեզիդենտներ՝ ընդ որում հետազոտության նպատակային 12 քաղաքներից յուրաքանչյուրից ընդգրկվել են n=500 ռեզիդենտներ և n=1500 ռեզիդենտներ երկրի մնացած մասից: Ընտրանքը կատարվել է 95% վստահության միջակայքով ու սխալի առավելագույն թույլատրելի +/- 4.4% սահմանով:

Կիրառվել է՝ հետևյալ քվոտավորումը.

- ըստ տարիքի.
 - 15-24,
 - 25-49,
 - 50-64,
 - 65 և ավել,
- էթնիկ պատկանելության.
 - մաորի,
 - պասիֆիկ/խաղաղօվկիանոսյան,
 - ասիացի/հնդիկ,
- սեռի.
 - կին,
 - տղամարդ,
- տարածքի.
 - 12 քաղաքներ ու մնացած Նոր Զելանդիան,
 - ըստ առանձին քաղաքների համայնքների:

Հարցումները կատարվել են հեռախոսային եղանակով:

Կյանքի որակի եվրոպական հետազոտություն

Եվրոպական Կյանքի Որակի Հետազոտությունը /ԵԿՈՀ/ մշակվել է որպես գործիք Եվրոպայում սոցիալական քաղաքականության վերաբերյալ քննարկումների և որոշումների ընդունման համար: Եվրամիության անդամ երկրներում եվրոպացիների կայուն ապրելակերպի հիմնական սոցիալական մարտահրավերները մատնանշելու և տարբեր սոցիալ-տնտեսական խմբերի իրավիճակն ավելի լավ հասկանալու իրական պահանջ կա: Եվ այս հետազոտությունն այդ պահանջը բավարարելու գերակա նպատակն ունի:

ԵԿՈՀ մոտեցումը հիմնվում է «Եվրոպայում կյանքի որակի մոնիտորինգ» /Ֆահեյ, Նոլան և Ուելեն, 2003/ աշխատության մեջ ներկայացված հայեցակարգային շրջանակի վրա: Վերջինս սահմանում է մոնիտորինգային գործիքի նպատակներն ու բնութագրիչները, որոնք համահունչ են Կյանքի և աշխատանքային պայմանների բարելավման եվրոպական հիմնադրամի /ԿԱՊԲԵՀ, Eurofound/ առաքելությանը՝ քաղաքականություն մշակողներին ԵՄ մակարդակում կանոնավոր և նպատակային տեղեկատվություն տրամադրելուն:

Կյանքի որակը ներառում է քաղաքական բավականին ընդգրկուն հետաքրքրություններ, որում

հատուկ կարևորություն ունի տարիքի, սեռի, եկամուտների մակարդակի, առողջության, զբաղվածության և տարածաշրջանի հետ կապված տարբերություններն ուրվագծելու և հասկանալու անհրաժեշտությունը: Այս քառամյա աշխատանքային ծրագրով նաև ընդգծվում է կյանքի որակի գնահատականը զբաղվածության, աշխատանք-հանգիստ հաշվեկշռի և սոցիալական համերաշխության փոփոխվող բնույթի, ինչպես նաև սոցիալական հովանավորչության ու սոցիալական բարեկեցության ծառայությունների հետ կապելու անհրաժեշտությունը: Այսպիսով, ԿԱՊԲԵՀ մոտեցումը ընդհանուր առմամբ կենտրոնանում է կյանքի որակի վրա և ոչ միայն դիտարկում կենսապայմանները, այլև կյանքի որակն անմիջականորեն դիտարկվում է անհատների անձնական նպատակների ձեռքբերման համատեքստում: Այս հետազոտությամբ չափվում են ռեսուրսներն ու կենսապայմանները օբյեկտիվ և նկարագրական ցուցանիշների միջոցով, սակայն ներառվում է նաև սուբյեկտիվ տեղեկատվություն, մասնավորապես վերլուծության մի կարևորագույն մաս կենտրոնանում է մի կողմից ներկայացված տեսակետների ու վերաբերմունքի վրա, մյուս կողմից՝ առկա ռեսուրսների ու կենսապայմանների վրա: Առավել ստույգ, հետազոտության առանցքը կազմում են հետևյալ դրամենները՝ զբաղվածություն, տնտեսական ռեսուրսներ, ընտանեկան կյանք, համայնքային կյանք, առողջություն, կենցաղային պայմաններ, տեղական միջավայր: Հետազոտության արդյունքները հիմնականում ծառայում են ըստ երկրի, սեռի, տարիքի և եկամուտների մակարդակների ներկայացված հիմնական դրամեններում տարբերությունների ու նմանությունների հայտնաբերման, ինչպես նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների միջև կապերի բացահայտման և, ամենակարևորը, դրամենների, հատկապես աշխատանքի ու ընտանեկան կյանքի միջև փոխադարձ կապերի վերլուծության համար:

Եվրոպական կյանքի որակի հետազոտությունը ներառել է ԵՄ 27 երկրներ, թեկնածու երեք երկրները, մասնավորապես Մակեդոնիան, Թուրքիան և Խորվաթիան, և Նորվեգիան: Ռեսպոնդենտներն ընտրվել են հետևյալ չափանիշներով.

- 18 տարեկան և բարձր,
- ապրել է տվյալ երկրում վերջին 6 ամսվա ընթացքում,
- կարողանում է խոսել պետական լեզվով այնքան լավ, որ կբավարարի հարցումներին մասնակցելու համար,
- չի ապրում որևէ ինստիտուտում, ասենք, օրինակ՝ ռազմակայաններում, բանտում, հոսպիտալում կամ խնամքի կենտրոններում:

Բոլոր երկրներում կիրառվել է նույն հարցաշարը, որը թարգմանվել է համապատասխան լեզվով և ներառել տեղեկատվության ստացման հնարավորություն մոտ 200 ցուցանիշների վերաբերյալ: Հետազոտությունը մինչ այժմ իրականացվել է երկու անգամ՝ 2004 և 2007 թվականներին, այդպիսով նաև հիմք ապահովելով տարբեր ժամանակահատվածների միջև կյանքի որակի և դրա առանձին բաղադրիչների միջժամանակային համեմատության համար:

ԵԿՈՀ ընտրանքը ներկայացուցչական է չափահաս անձի մակարդակով, որը դաշտային աշխատանքների ընթացքում ապրում է իր անձնական տանը: Երկրների մեծ մասում իրականացվել է բազմամակարդակ ընտրանք, մասնավորապես ստրատիֆիկացված ու կլաստերային սկզբունքով, և վերջին փուլում «random walk» ընթացակարգով տնային տնտեսությունների ընտրություն է կատարվել: Ընտրանքը մշակվել է հետևյալ փուլերով.

1. **առաջնային ընտրանքային միավորների ստրատիֆիկացիա՝ ըստ տարածաշրջանի և ուրբանիզացիայի.** ինչպես որ սովորաբար ընդունված է ուղղակի հարցման դեպքում, հարցումները յուրաքանչյուր երկրում բաժանվել են կլաստերների՝ մի շարք առաջնային

ընտրանքային միավորներով, որոնք տեղաբաշխվել են համապատասխան աշխարհագրական տարածքներով՝ ստրատիֆիկացված ըստ շրջանի և ուրբանիզացիայի աստիճանի: Հետևաբար, յուրաքանչյուր երկրում բնակչության թվաքանակներով աղյուսակը ստորաբաժանվել է ըստ շրջանի և ուրբանիզացման աստիճանի, իսկ առաջնային ընտրանքային միավորները բաշխվել են վանդակներում՝ ըստ յուրաքանչյուր վանդակում բնակչության մասնաբաժնի: Առաջնային ընտրանքային միավորների ընտրությունը /առաջին փուլ/ պատահական է կատարվել, իսկ մի շարք երկրներում համայնքների, առանձին տարածքների, վարչական միավորների կամ տնային տնտեսությունների ցուցակներն օգտագործվել են որպես ընտրանքի հիմք:

2. **յուրաքանչյուր առաջնային ընտրանքային միավորում սկզբնական հասցեի պատահական ընտրություն.** յուրաքանչյուր ստրատայում յուրաքանչյուր առաջնային ընտրանքային միավորի պատահականորեն վերագրվել է մի հասցե, որից էլ «random walk» պետք է սկսվի:
3. **«random walk» ընթացակարգ տնային տնտեսությունների ընտրության համար.** վերագրված հասցեից սկսած հարցազրուցավարը հետևում է ճշգրտորեն սահմանված մի ընթացակարգի, որը կոչվում է «random walk»: Հենց տնային տնտեսությունն ընտրվում է, այն չի փոխարինվում մեկ ուրիշով, քանի դեռ տարբեր ժամերին և օրերին նրա հետ կապվելու փորձը չի ձախողվել: «Random walk»-երը ծրագրվել են օրվա տարբեր ժամերին, որպեսզի հնարավոր լինի կապ ստեղծել հնարավորինս շատ տնային տնտեսությունների հետ հենց սկզբնական երթուղու ժամանակ: Պատահական երթուղու փուլում գործում են ճշգրիտ և վերահսկելի կանոններ, որպեսզի սահմանափակվեն հարցազրուցավարի ազդեցության հնարավորությունները:
4. **տնային տնտեսությունում հարցվողի ընտրություն.** հենց որ տնային տնտեսության հետ հաջողվում է կապ ստեղծել, հարցազրուցավարը հետևում է ստույգ ընթացակարգի: Նախ, հարցազրուցավարը պետք է պարզի, թե քանի չափահաս անձ է ապրում տվյալ տնային տնտեսությունում: Երկրորդ, եթե նշվում են մեկից ավելի չափահասներ, հարցազրուցավարը հարցվողի ընտրության նպատակով օգտագործում է «հաջորդող ծննդյան օրվա կանոնը»: Յուրաքանչյուր տնային տնտեսությունից միայն մեկ անձ է մասնակցում հարցմանը:

Ընտրանքն իրականացվել է պատահական սկզբունքով յուրաքանչյուր նշված փուլում:

Ընտրանքի ծավալը երկրների մեծ մասում ներառել է նպատակային 1000 հարցում, սակայն ավելի մեծ թվով բնակչություն ունեցող երկրներում այն կազմել է 1500՝ Ֆրանսիայում, Իտալիայում, Լեհաստանում և Մեծ Բրիտանիայում, և 2000՝ Գերմանիայում և Թուրքիայում: Հարցումների միջին տևողությունը եղել է 36 րոպե:

Կյանքի որակի գնահատումը Նորվեգիայում

Այս հետազոտության նպատակը Նորվեգիայի բնակչության ներկայացուցչական ընտրանքի հիման վրա ընդհանուր կյանքի որակի վրա ազդող հիմնական նորմերի բացահայտումն է կյանքի որակի սանդղակի միջոցով: Վերջինս հարցաշար է, որի միջոցով գնահատվում է անհատի ամբողջական բավարարվածությունը կյանքից՝ հիմնվելով անհատի կյանքի տարբեր ոլորտների վրա:

Հետազոտության համար ընտրանքը կազմել է 4000 բնակիչ 19-81 տարիքային միջակայքում, որոնք ընտրվել են պատահական սկզբունքով Նորվեգիայի վիճակագրական ծառայության ազգային ռեգիստրից: Ընտրված անձանց փոստով ուղարկվել է հարցաթերթը 2000թ. նոյեմբերին: Այն

անձինք, որոնք չէին վերադարձրել հարցաթերթը 4 շաբաթվա ընթացքում, ստացել են գրավոր հիշեցում, որի հետ նաև կցված է եղել հարցաթերթը: Վերջինս բաղկացած է եղել 4 մասից: Առաջին մասը գնահատում էր դեմոգրաֆիական և առողջության բնութագրիչները, երկրորդն առնչվում էր գլոբալ կյանքի որակի հետ, երրորդը պարզում էր հույսի և հյուսվածության/հոգնածության զգացողությունների առկայությունը, իսկ չորրորդը՝ սթրեսի և ցավի սիմպտոմները: Այս ուսումնասիրությունը ներառում է հարցաշարի առաջին և երկրորդ բաժինները:

Կյանքի որակի գնահատումն իրականացվել է կյանքի որակի սանդղակի նորվեգական տարբերակի միջոցով: Վերջինս 16 ոլորտի վերաբերյալ հարցաթերթ է՝ հիմնված Բուրքհարդտի (Burckhardt et al., 1989, 1992, 1993) աշխատության վրա և կազմված ԱՄՆ-ում, մասնավորապես մարդկանց շրջանում հարցեր են ուղղվել կյանքի որակի վերաբերյալ այնպիսի ասպեկտների շուրջ, ինչպիսիք են ֆիզիկական և նյութական բարեկեցությունը, անձնական աճը, հարաբերություններն այլոց հետ, մասնակցություն սոցիալական, համայնքային և քաղաքացիական գործունեությանը, հանգիստը/ժամանցը: Հարցաշարը մշակվել էր առողջ բնակչության համար, այնուհետև՝ ադապտացվել իրոնիկ հիվանդություններից տառապող անձանց համար: Հիվանդները տալիս են իրենց բավարարվածության չափը վերը նշված գործոններից՝ ըստ 1-7 բալանոց, այսպես կոչված, «հիացած եմ-ահավոր է» սանդղակով: Ընդհանուր միավորը բոլոր գործոնների միավորների հանրագումարն է (նվազագույնը՝ 16, առավելագույնը՝ 112): Որքան բարձր է միավորը, այնքան բարձր է կյանքի որակը: Հարցաթերթի առանցքային հարցադրումներն են.

1. սոցիալ-դեմոգրաֆիական հարցեր - անհատի տարիք, սեռ, ընտանեկան կարգավիճակ, ֆորմալ կրթության մակարդակ, ում հետ է բնակվում, աշխատանքային/ եկամտի աղբյուր:
2. առողջության հարցեր – այստեղ միակ հարցը եղել է. «արդյոք Դուք երկար ժամանակ տառապե՞լ եք երկարաժամկետ հիվանդությամբ (ավելի քան 6 ամիս)»:

Ստացված տվյալները վերլուծվել են այն դեպքում, երբ հարցաշարի նվազագույնը 50 տոկոսը լրացված է եղել (առնվազն 8 հարց), մինչդեռ չլրացված հարցերի արժեքները համալրվել են միանգամայն նույնական հարցվողների պատասխանների միջին արժեքով:

□ Կյանքի որակի հետազոտության Հնդկաստանի փորձը

Այս հետազոտությունը նպատակ ունի գնահատել կյանքի որակը Դիմապուրում և հարակից շրջաններում, որը կարևորագույն և կոսմոպոլիտ առևտրային կենտրոններից մեկն է: Հետազոտությունը ներառել է 231 տնային տնտեսության հարցում:

Կյանքի որակը դիտարկվել է որպես բազմաչափ ցուցանիշ, որի առանձին բաղադրիչներն իրենց հերթին չափելի են: Ընտրվել է կյանքի որակի չորս ոլորտ.

- կենցաղային/բնակարանային պայմաններ՝ 58 փոփոխականով (խոհանոց, ննջասենյակ, առանձնասենյակ, հյուրասենյակ, այլ սենյակներ, պահասենյակ, բոլոր սենյակներ, տնային տնտեսության անդամներ, սեփականություն, շինարարության կառուցվածքը, հողակտորի չափը, հատակի տարածքը, շինությունների միջև հեռավորությունը, հոսող ջուր, ջրի մատակարարման աղբյուրը, ջրամատակարարման ձևը, էլեկտրականություն, հոսանքի անջատումներ, հեռուստացույց, հեռախոս, կահույք և այլն),
- տնտեսական ասպեկտներ՝ 26 փոփոխականով (զբաղվածություն, զբաղվածության տեսակ, ամսական եկամտի չափ, բանկային խնայողություններ, ապահովագրություն, սննդի սպառում, բնակարանի վարձ, երեխայի կրթություն, թերթեր, զվարճանք, հագուստ, բարեգործություն, ծախսեր, դրսում սնվելու հաճախականություն և այլն),

- ❑ ոչ նյութական սպառում՝ 43 փոփոխականով (լրատվություն, հեռուստատեսություն, գրադարան, սիրած զբաղմունք/ հետաքրքրություն, դպրոցական կրթություն, ինստիտուտ, թատրոն, զբոսանք և այլն),
- ❑ շուկայի և աշխատավայրի հասանելիություն՝ 8 փոփոխականով (աշխատանքից հեռավորություն, աշխատանքի հասնելու ժամանակ, տեղափոխման ամսական ծախս և այլն):

Նշվածներից յուրաքանչյուրի համար հաշվարկվել է առանձին կյանքի որակի ցուցանիշ: Իսկ բաղադրյալ ցուցանիշը կազմվել է որպես դրանց կշռված գծային հանրագումար:



□ ՀՀ կյանքի որակի հետազոտությունը

Ընդհանուր առմամբ Հայաստանում առաջին անգամ նախաձեռնված կյանքի որակի հետազոտությունն ուղղված է հասարակության ներկայացուցչական ընդգրկման միջոցով բնակչության տարբեր խմբերի և համերկրյա կյանքի որակի համապարփակ ուսումնասիրությանը: Հետազոտության հիմնական նպատակը երկրում հասարակության ընդհանուր բարեկեցությունը գնահատելու նպատակով բաղադրյալ ցուցանիշի մշակումն ու դուրսբերումն է, որը հնարավորություն կտա համակողմանի և խորքային տեղեկատվություն ունենալ և հասկանալ հասարակության ապրելակերպի և դրա նկատմամբ այդ նույն հասարակության վերաբերմունքի ու գնահատականի վերաբերյալ: Մասնավորապես շեշտադրվում է Հայաստանում բնակչության կյանքի որակը պայմանավորող առանցքային գործոնների բացահայտումը՝ գնահատելով դրանց ազդեցությունը սոցիալ-ժողովրդագրական ու աշխարհագրական տարբեր խմբերի վրա: Սա պետք է հիմք ծառայի հայաստանյան բնակչի կյանքի բազմաբնույթ հարթություններում առկա խնդիրների վեր հանման և դրանց լուծմանն ուղղված հանրային քաղաքականության վերանայման կամ մշակման համար: Եվ քանի որ նպատակադրված է, որ կյանքի որակի հետազոտությունը դինամիկ բնույթ պետք է կրի՝ անց կացվելով յուրաքանչյուր տարին առնվազն մեկ անգամ 4 ամիսների ընթացքում, հետևաբար ենթադրվում է, որ տարեկան կտրվածքով ստացվող արդյունքների համադրման ու համեմատության շնորհիվ հնարավոր կլինի:

- պարբերաբար կատարելագործել կիրառվող մոտեցումն ու մեթոդաբանությունը՝ ներառելով նորանոր ոլորտներ ու ցուցանիշներ,
- բացահայտել և հետևել հասարակության բարեկեցության շարժընթացին՝ համապատասխան եզրակացություններ կատարելով,
- համապատասխան ոլորտներում հանրային քաղաքականության մշակման և/կամ վերանայման համար ներքինից ստացվող ազդանշաններ ունենալ,
- որոշ առումով նաև արդյունքներն օգտագործել նույն քաղաքականությունների ու միջոցառումների հասցեականության, նպատակահարմարության ու արդյունավետության դիտարկման համար:

Հետազոտության բուն նպատակներից ելնելով՝ ձևակերպվել են հետևյալ առանցքային խնդիրները.

- առանձնացնել և գնահատել տարբեր սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքացիական և հոգեբանական գործոնների ազդեցությունը բնակչության սոցիալական զգացողության և կյանքից բավարարվածության վրա,
- գնահատել սոցիալական զգացողության ու կյանքից բավարարվածության արժեքային ենթատեքստը,
- բացահայտել այն պայմանները, որոնց փոփոխության դեպքում բնակչության տարբեր խմբերի համար կյանքի որակի նշանակալի բարձրացման հնարավորություն կձևավորվի,
- բարձրացնել որոշում կայացնողների տեղեկացվածության մակարդակը բնակչության տարբեր խմբերի և համերկրյա կյանքի որակի վերաբերյալ,
- ձևավորել Հայաստանի համար կյանքի որակի առանցքային ոլորտների (տիրույթների), ցուցանիշների և չափանիշների համազգային ցանկ՝ ելնելով կյանքի որակի տեսական-հետազոտական ու միջազգային կիրառական փորձի հետ համադրելիության սկզբունքից,
- և վերջապես, մշակել Հայաստանում կյանքի որակի գնահատման համապարփակ ազգային մեթոդաբանություն կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշ ձևավորելու նպատակով:

Այս իմաստով կյանքի որակ հասկացության տեսական հիմնավորումների, դրա էվոլյուցիայի, էմպիրիկ և բազմաթիվ երկրներում կատարված նմանատիպ հետազոտությունների մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում մեր կողմից մշակվել և առաջարկվել է Հայաստանում կյանքի որակի հետազոտության իրականացման այնպիսի հայեցակարգ, որը ենթադրում է արդյունքում ստանալ *կյանքի որակի բաղադրյալ եռամակարդակ ու բազմաչափ գնահատական՝ ցուցանիշ*: Վերջինս սինթեզում է կյանքի որակի բնագավառում իրականացված հետազոտությունների լավագույն փորձն ու մոտեցումները:

□ Կյանքի որակի ազգային շրջանակը և մոտեցումը

Նախքան Հայաստանում կյանքի որակի գնահատման հետազոտության կիրառական-մեթոդաբանական ասպեկտների ներկայացմանն անդրադառնալը, անհրաժեշտ է ձևակերպել կյանքի որակի սահմանումը և բնութագրել այն հայեցակարգային կառույցը, որոնք կազմել են նշված հետազոտության գաղափարական հենքը:

Հիմք ընդունելով կյանքի որակի բնագավառում առկա համաշխարհային տեսական ու գործնական փորձը և առաջնորդվելով դրա հնարավոր առավելագույն ընդգրկմամբ ու տեղային առանձնահատկությունների հետ համադրման սկզբունքով՝ տրվել են կյանքի որակի հետևյալ աշխատանքային սահմանումները.

- Անհատի մակարդակ. *«Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ անհատի ուղղակի և անուղղակի կենսամիջավայրների համատեքստում որոշակի ֆունկցիոնալության և անհատի արժեհամակարգով ու ընկալումներով պայմանավորված գիտակցված բավարարվածության աստիճանն է»:*
- Բնակչության մակարդակ. *«Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ երկրի օրենսդրական, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի համատեքստում, հասարակության որոշակի ֆունկցիոնալության և հասարակական արժեքներով ու ընկալումներով պայմանավորված, երկրում ապրելուց բավարարվածության աստիճանն է»:*

Նշված սահմանումները հիմք ընդունելով՝ Հայաստանում *կյանքի որակի հետազոտության շրջանակը* ենթադրում է հետազոտության հիմնարար սկզբունքների, հայեցակարգային մոդելի, կյանքի որակի մակարդակների մշակում ու սահմանում: Ընդ որում՝ առանձնակի պետք է ընդգծել, որ ընդհանուր առմամբ նշված հիմնահարցերի վերաբերյալ ազգային շրջանակի մշակումը գերազանցապես հիմնվել է կյանքի որակի՝ Ֆելսի և Պերրիի, Շելտկի, Կումմինսի (տե՛ս սույն աշխատանքում՝ Մաս Առաջին) մոդելների վրա՝ հայաստանյան իրականության և առանձնահատկությունների հետ հնարավորինս ներդաշնակեցմամբ ու լրամշակմամբ:

Այսպես, կյանքի որակի գնահատման ազգային շրջանակի երեք *հիմնարար սկզբունքներն* են.

- կյանքի որակի համակողմանի ցուցանիշ ստանալու նպատակով բոլոր մակարդակներում և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ տեսանկյունների ներառում գնահատման համակարգում,
- գնահատման ժամանակ օբյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների ներկայացում առանձին խմբերով,
- կյանքից բավարարվածության՝ որպես սուբյեկտիվ կյանքի որակի դիտարկում, ընդ որում, դրա գնահատում՝ ըստ անհատների զգացական-ճանաչողական ընկալումների:

Նշված սկզբունքների շրջանակներում կյանքի որակի հայեցակարգային մոդելի *հենքային ուղենիշերը* ձևակերպվել են հետևյալ կերպ.

- կյանքի որակի համակողմանի գնահատումը պետք է ներառի անհատի՝ կյանքից բավարարվածության սուբյեկտիվ գնահատականի ու անհատի կյանքի միջավայրի

- օբյեկտիվ գնահատականի համադրությունը,
- ❑ կյանքի ոլորտների առնչությամբ սուբյեկտիվ բավարարվածությունը գնահատվում է ըստ առանձին ոլորտների,
- ❑ կյանքից անհատների սուբյեկտիվ բավարարվածության գնահատականը համադրվում է անհատի հոգեբանամետրիկ (դրական ու բացասական զգացողությունների) նկարագրի հետ (Kreitler and Kreitler, 2006),
- ❑ անհատի կյանքի միջավայրի օբյեկտիվ գնահատականը ձևավորվում է առողջ մարդու լիարժեք ֆունկցիոնալության ապահովման տեսակետից:

Քանի որ Հայաստանում կյանքի որակի համակողմանի գնահատման նպատակով տվյալ հետազոտությունը շեշտադրում է կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի կառուցման գաղափարը, հայեցակարգային մոդելը հիմնվում է մեթոդաբանական պլուրալիզմի ու համակարգերի սինթեզման՝ Շելլոկի մոտեցման վրա, որը թույլ կտա անհատի կյանքի տարբեր միջավայրերն ու դրանց գնահատման տարբեր տեսանկյուններն արդյունավետորեն միավորել մեկ ցուցանիշում: Մասնավորապես, վերջինս ենթադրում է եռամակարդակ և բազմաչափ կյանքի որակի գնահատականի կառուցում: Այսպիսով, հետազոտությունն ընդգրկում է Հայաստանում մշտական բնակվող անհատի կյանքի հետևյալ երեք մակարդակների ուսումնասիրություն՝ **միկրո մակարդակ, էզո-մեզո մակարդակ, մակրո մակարդակ:**

Ըստ էության՝ բնակչության կյանքի որակի մակարդակների համալիրում ամենաստորին կառուցվածքային միավորը միկրո համակարգն է: Սա նաև այն եզրափակիչ օղակն է, որի միջոցով անհատի կյանքի առանցքային ոլորտների ու ցուցանիշների՝ տարբեր մակարդակների միջև փոխանցման, քանակական ու որակական ձևափոխումների արդյունքում արտաձևվում է անհատի կյանքի որակը՝ միջնորդավորված և գնահատված սուբյեկտիվ ընկալումների ու արժեհամակարգի պրիզմայով:

Այսպիսով, Հայաստանում կյանքի որակի հայեցակարգային մոդելը հնարավոր է պատկերել ստորև ներկայացված գծապատկերի միջոցով (տե՛ս գծապատկեր 5):


❑ Կյանքի որակի հետազոտության մեթոդաբանությունը

Կյանքի որակի մակարդակները, ոլորտներն ու ցուցանիշները

Ինչպես արդեն նկարագրվել է վերևում, Հայաստանում կյանքի որակի գնահատումն իրականացվում է երեք մակարդակում բարեկեցության առանցքային բնութագրիչների սինթեզման արդյունքում: Կարևոր է ընդգծել, որ ոլորտների և ցուցանիշների ընտրության համար հիմք են հանդիսացել կյանքի որակի վերաբերյալ առկա տեսական-գիտական ու էմպիրիկ-գործնական հետազոտությունների և առանձին երկրների ու միջազգային հեղինակավոր կազմակերպությունների կողմից իրականացված նմանատիպ ուսումնասիրությունների արդյունքներն ու փորձը՝ մինևույն ժամանակ հիմքում դնելով առանձին ոլորտների և ցուցանիշների կիրառելիությունը և համարժեքությունը հայաստանյան տնտեսական ու սոցիալ-մշակութային միջավայրի յուրահատկությունների համատեքստում:

Այս հատվածում ներկայացվում է մակրոմակարդակում, էզո-մեզոմակարդակում և միկրոմակարդակում հետազոտության մեջ ընդգրկված համապատասխան ոլորտների և առանձին ցուցանիշների ու բնութագրիչների համակարգը:

Գծապատկեր 5. Կյանքի որակի հայաստանյան մոդելի սխեմատիկ պատկերը



Մակրոմակարդակ

Մակրոմակարդակը ներկայացվում է չորս առանձին ոլորտով, որոնք բնութագրում են անհատի և հասարակության կենսապայմանների, կենսագործունեության և կարողությունների իրացման առկա միջավայրի բազմաչափ ընդհանրական պատկերը: Ընտրված ոլորտներն, ըստ էության, ներկայացնում են Հայաստանում քաղաքացու կյանքի որակի որոշակի մակարդակի ձեռքբերման անհրաժեշտ և բավարար՝ սուբյեկտից դուրս արտաքին կամ օբյեկտիվ միջավայրի ու պայմանների համալիր փոխլրացնող ամբողջություն: Յուրաքանչյուր ոլորտ իր հերթին բաժանվել է առանձին ցուցանիշների և բնութագրիչների: Մակրոմակարդակի և դրանում ներկայացված ոլորտների ու առանձին ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր են հանդիսանում պաշտոնական վիճակագրությունը, միջազգային կառույցների կողմից պաշտոնապես հրապարակված տվյալները և գնահատականները: Ստորև ներկայացվում են հետազոտության շրջանակներում կյանքի որակն ինչ-որ իմաստով պայմանավորող և դրա փոփոխության վրա ազդող մակրո միջավայրի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները (տե՛ս աղյուսակ 7):

Տնտեսական ոլորտը յուրաքանչյուր պետության ու հասարակության բարեկեցության իրացման կարևորագույն միջավայրն է, որի կշիռն, ըստ տարբեր գնահատականների, մասնավորապես

Համաշխարհային տնտեսական ֆորումի և «The Economist Intelligence Unit»-ի համաձայն², կարող է բացատրել մակրոմակարդակի և երկրների միջև կյանքից բավարարվածության մակարդակների միջև տարբերությունների շուրջ 30-60 տոկոսը: Ըստ տարբեր փորձագետների, հետազոտողների և երկրների փորձի՝ տարբեր է նաև այս ոլորտը ներկայացնող ցուցանիշների ընդգրկվածությունը՝ կախված թերևս տվյալ երկրի առանձնահատկություններից և առաջնահերթություններից:

Սոցիալական ոլորտը մի կողմից ուղղակիորեն կախված է տնտեսական ոլորտում ձեռքբերումներից և սոցիալական բնույթի խնդիրների լուծմանը դրանց հասցեականությունից ու արդյունավետությունից, իսկ մյուս կողմից՝ հետադարձ էֆեկտի ազդեցությամբ սոցիալական բարեկեցության փոփոխության արդյունքում հասարակության՝ մնացած ոլորտներում մասնակցության ձևից, ինչը կարող է որակական տրանսֆորմացիաներ առաջ բերել:

Ֆիզիկական ոլորտ և ինստիտուտներ. այս ոլորտում ներկայացված են անհատին ու հասարակությանը շրջապատող ու սպասարկող ենթակառուցվածքներն ու կարևորագույն ինստիտուտները բնութագրող և կյանքի որակի հետ առավելագույն առնչություն ունեցող բնութագրիչներ: Վերջիններիս ընտրության համար հիմք են հանդիսացել միջազգային կառույցների կողմից պարբերաբար տրվող ռեյտինգներում այս բնագավառը ծածկող ցուցանիշները:

Կայունություն և ազատություն. այս ոլորտը առանձնահատուկ կարևորվել է հետազոտության շրջանակներում՝ հիմք ունենալով այն համընդհանուր որդեգրված ճշմարտությունը, որ ժողովրդավարական ճանապարհով որոշումների կայացման մշակույթի ձևավորումը այն կարևորագույն առանցքն է, որի շուրջ կարող են ձևավորվել անհատի, համայնքի ու հասարակության սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի, մշակութային և այլ առումներով բարեկեցության որակական աճի անհրաժեշտ հիմքերը: Արդյունավետ քաղաքացիական ու քաղաքական համակարգերը թույլ են տալիս կառավարումն իրականացնել այնպես, որ խրախուսվում են արդարությունը, ազնվությունը, թափանցիկությունն ու հաշվետվողականությունը՝ երաշխավորելով հասարակության կյանքի որակի բարելավումը:

Աղյուսակ 7. Կյանքի որակի մակրոմակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները

Ոլորտ/ենթաօլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Տնտեսական <ul style="list-style-type: none"> ○ Ներքին տնտեսություն ○ Ֆինանսական հատված ○ Արտաքին տնտեսություն 	<ul style="list-style-type: none"> ○ Զարգացում ○ Կայունություն ○ Ապահովություն, խթաններ 	<ul style="list-style-type: none"> ○ իրական ՀՆԱ-ի աճի տեմպ ○ բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ○ ինֆլյացիայի տարեկան տեմպ ○ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցություն ○ պետական բյուջե/ՀՆԱ հարաբերակցություն ○ համախառն կուտակում ○ փոխարժեքի կայունություն ○ արտահանում/ՀՆԱ հարաբերակցություն ○ օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալ ○ վարկեր/ՀՆԱ, % ○ տոկոսադրույքների սպրեդ

² <http://www.weforum.org/en/index.htm>, http://www.economist.com/media/pdf/quality_of_life.pdf

<p>Սոցիալական</p> <ul style="list-style-type: none"> ○ Կենսամակարդակ ○ Աշխատանք ○ Կրթություն ○ Առողջապահություն 	<ul style="list-style-type: none"> ○ Ապահովություն ○ Անվտանգություն ○ Երաշխիքներ ○ Կարողություններ ○ Հմտություններ ○ Տունկցիոնալություն 	<ul style="list-style-type: none"> ○ սոցիալական ծախսեր/պետությունների ծախսեր,% ○ առողջապահական ծախսեր/ՀՆԱ, % ○ կրթության ծախսեր/ՀՆԱ, % ○ սոցիալական պաշտպանության/ՀՆԱ, % ○ հանգստի, մշակույթի և կրոնի ծախսեր/ՀՆԱ, % ○ աշխատուժի մասնակցության աստիճան, % ○ սոցիալական ապահովության համակարգի որակ ○ զբաղվածության մակարդակ, % ○ եկամուտների համակենտրոնացման գործակից (Ջինիի նդեքսը) ○ դրամական եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խմբերի ○ աղքատության ցուցանիշներ ○ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը ○ աշխատավարձ և արտադրողականություն ○ նվազագույն աշխատավարձի չափ, ՀՀ դրամ ○ անվանական միջին աշխատավարձ, ՀՀ դրամ ○ նշանակված ամսական միջին կենսաթոշակ, ՀՀ դրամ ○ աշխատանքի ընդունում և ազատում ○ վերապատրաստումների տարածվածություն ○ աշխատանքային օրենսդրության խստության ինդեքս ○ գործազրկության նպաստի միջին չափը, ՀՀ դրամ ○ տնային տնտեսությունների սպառողական ծախսեր, % ամբողջի մեջ ○ մյանքի սպասվող տևողություն, տարի ○ մանկական մահացություն, 1000 կենդանի ծնվածի հաշվով ○ ծնելիության և մահացության հարաբերակցություն,% ○ նախադպրոցական հաստատությունների քանակը ○ հանրակրթական դպրոցներում սովորողների թիվ, 1 դպրոցի հաշվով ○ հանրակրթական դպրոցներում 1 ուսուցչին ընկնող աշակերտների թիվ ○ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թվաքանակ, 1 հաստատության հաշվով ○ ԲՈՒՀ-երում սովորողների թվաքանակը, 1 ԲՈՒՀ-ի հաշվով ○ ԲՈՒՀ-երի շրջանավարտների թվաքանակը, 1 000 մարդ ○ պրոֆետորադասախոսական անձնակազմի թվաքանակը ○ կրթական համակարգի որակ ○ գրադարանների ընթերցողների թվաքանակը, 1 000 մարդ ○ թանգարանների քանակ ○ 1 թանգարանի հաշվով տարեկան հաճախումների թիվը ○ թատրոնների քանակը ○ 1 թատրոնի հաշվով տարեկան հաճախումների թիվ ○ բժիշկների թվաքանակը, 10 000 բնակչի հաշվով ○ հիվանդանոցային հիմնարկների քանակը ○ հիվանդանոցային մահճակալների թիվ, 10 000 բնակչի հաշվով ○ 1 մահճակալի տարեկան միջին զբաղվածությունը, օր ○ ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակը ○ ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների հզորությունը (հաճախում մեկ հերթափոխում) ○ 1 բժշկին ընկնող բնակչության թիվ ○ 1 հիվանդի բուժման միջին տևողությունը, օր ○ մթնոլորտ արտանետված վնասակար նյութեր, ○ բնակչության միջին ապահովվածությունը կացարանով մեկ բնակչի հաշվով
--	---	--

<p>Ֆիզիկական ոլորտ և ինստիտուտներ</p> <ul style="list-style-type: none"> ○ Ենթակառուցվածքներ ○ Ինստիտուտներ 	<ul style="list-style-type: none"> ○ Որակ ○ Հասանելիություն ○ Մատչելիություն ○ Ապահովություն 	<ul style="list-style-type: none"> ○ գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների առկայություն, ընդամենը, 1000 ○ սանամաքրման նշանակության մեքենաների քանակական բաշխվածություն, հատ ○ ճանապարհների որակ ○ Էլեկտրաէներգիայի մատակարարման որակ ○ օդային ենթակառուցվածքի որակ ○ երկաթուղու առկայություն/մատչելիություն ○ ֆիքսված կապուղիներ, թիվ 100 բնակչի հաշվով ○ վերգետնյա տրանսպորտային համակարգի որակ ○ շարժական կապ, թիվ 100 բնակչի հաշվով ○ ինտերնետ օգտագործողների թիվ, թիվ 100 բնակչի հաշվով ○ մասնավոր սեփականության իրավունքների պաշտպանություն ○ դատական համակարգի անկախություն ○ կառավարության քաղաքականության թափանցիկություն ○ քաղաքական գործիչների նկատմամբ վստահություն ○ կառավարության կարգավորման բեռ ○ ոստիկանական ծառայությունների հուսալիություն
<p>Կայունություն և քաղաքացիական ազատություններ</p> <ul style="list-style-type: none"> ○ Կայունության աստիճան ○ Քաղաքացիական ազատություններ 	<ul style="list-style-type: none"> ○ Թափանցիկություն ○ Իրազեկում ○ Մասնակցություն 	<ul style="list-style-type: none"> ○ Ազատ և արդար ընտրություններ ○ Քաղաքական և սոցիալական ինտեգրացիա ○ Օրենքի գերակայություն ○ Կազմակերպված հանցագործություններ ○ Արտահայտվելու ազատություն ○ Քաղաքացիական իրավունքներ ○ Կրոնական ազատություններ ○ Քաղաքականության կոորդինացման կարողություն ○ Առաջնահերթությունների ճիշտ սահմանման կարողություն ○ Կառավարության քաղաքականության իրականացման կարողություն ○ Կառավարության կողմից ռեսուրսների ճիշտ կոորդինացում ○ Քաղաքացիական հասարակության մասնակցություն

Էզզո-մեզո մակարդակ

Էզզո-մեզո մակարդակը, ինչպես արդեն նշվել է, բնութագրում է սուբյեկտի կենսամիջավայրը՝ ներառյալ ուղղակի և անուղղակի միջավայրերը: Անուղղակի՝ էզզո միջավայրը սուբյեկտի կենսագործունեության վրա անմիջական ազդեցության արտաքին միջավայրում, այլ կերպ ասած, համայնքում առկա կենսական անհրաժեշտությունների համախմբությունն է, որոնք սպասարկում և/կամ նպաստում են անհատի ֆունկցիոնալության իրացմանը: Ուղղակի՝ մեզո միջավայրը սուբյեկտի անմիջական կենսամիջավայրն է՝ տվյալ տնային տնտեսության պայմանների համախմբությունը: Մույն հետազոտության շրջանակներում էզզո-մեզո մակարդակի ուղղակի և անուղղակի միջավայրերը բաժանվել են 4-ական ոլորտի՝ իրենց ցուցանիշներով ու բնութագրիչներով, որոնք, ըստ էության, բնորոշում են անհատի կյանքի որակի իրացման կամ ֆունկցիոնալության լիարժեք դրսևորման համար անհրաժեշտությունների հասանելիությունը, մատչելիությունը և պայմանները (տե՛ս աղյուսակ 8): Այլ կերպ ասած, նշված միջավայրերը ներառում են գրեթե նույն ոլորտներն ու բնութագրիչներն այն տարբերությամբ, որ մի դեպքում գնահատվում է դրանց առկայությունն ու որակը, իսկ երկրորդ դեպքում՝ հասանելիությունն ու մատչելիությունը:

Աղյուսակ 8. Կյանքի որակի էզզո-մեզո մակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները

Ոլորտ/ենթաօլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Տնտեսական <ul style="list-style-type: none"> ○ Մնուցում ○ Սպառում ○ Բնակարանային/կենցաղային պայմաններ ○ Կոմունալ հարմարություններ ○ Ենթակառուցվածքներ 	<ul style="list-style-type: none"> ○ Առկայություն ○ Հասանելիություն ○ Մատչելիություն ○ Որակ ○ Բազմազանություն 	<ul style="list-style-type: none"> ○ Մննդամթերքի հասանելիություն, մատչելիություն, որակ, բազմազանություն, սնվելու հաճախականություն ○ Սպառման մակարդակ, սպառման կառուցվածք ○ Բնակարանի/կացարանի մեծություն, հարդարման վիճակ, հարմարավետություն, կահավորանք, կենցաղային իրերով ապահովվածություն, կոմունալ հարմարավետություն ○ Կոմունալ ենթակառուցվածքների, հաղորդակցության/կապի, տրանսպորտի, գյուղատնտեսական տեխնիկայի /ոչ Երևանում/, գյուղմթերքի իրացման կետերի /ոչ Երևանում/ առկայություն և որակ
Սոցիալական <ul style="list-style-type: none"> ○ Աշխատանք, զբաղվածություն ○ Եկամուտներ ○ Սեփականություն /ռեսուրսներ ○ Կրթություն/ուսում ○ Առողջություն ○ Հանգիստ/Ժամանց/մշակույթ 	<ul style="list-style-type: none"> ○ Առկայություն ○ Հասանելիություն ○ Մատչելիություն ○ Բազմազանություն ○ Երաշխիքներ ○ Պայմաններ 	<ul style="list-style-type: none"> ○ Աշխատանքի առկայություն, հնարավորություն, գործարար նախաձեռնողականություն, աշխատանքային պայմաններ /օր. աշխատատեղի մոտիկություն, անվտանգություն և այլն/, երաշխիքներ ○ Ֆինանսական կարգավիճակ, եկամտի աղբյուրների բազմազանություն, ֆինանսական կայունություն ○ Սեփականության/ռեսուրսների առկայություն, բազմազանություն, մատչելիություն ○ Մասնագիտության/որակավորման առկայություն ○ Կրթական/ուսումնական հաստատության առկայություն, հասանելիություն, մատչելիություն, պայմաններ ○ Բժշկական հաստատություններ դիմելու/ բժշկական ծառայություններից օգտվելու հաճախականություն, առողջապահական հաստատությունների առկայություն, հասանելիություն, մատչելիություն ○ Հանգստի/Ժամանցի/մշակութային վայրերի առկայություն, հասանելիություն, մատչելիություն, դրանցից օգտվելու հաճախականություն
Շրջակա միջավայր	<ul style="list-style-type: none"> ○ Անվտանգություն ○ Ապահովություն ○ Երաշխիքներ 	<ul style="list-style-type: none"> ○ Էկոլոգիական անվտանգություն, ներքին անվտանգության, ապահովության աստիճան, երաշխիքներ

Միկրոմակարդակ

Ինչպես արդեն ներկայացվել է մոտեցման նկարագրության հատվածում, միկրոմակարդակն առավելապես վերաբերվում է անհատի սուբյեկտիվ գնահատականներին ու վերաբերմունքին իր իսկ կյանքի որակի նկատմամբ:

Աղյուսակ 9. Կյանքի որակի միկրո մակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները

Ոլորտ/ենթաօլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Տնտեսական <ul style="list-style-type: none"> ○ Մնուցում ○ Կենցաղային պայմաններ 	<ul style="list-style-type: none"> ○ Բավարարվածություն ○ Կարևորություն 	<ul style="list-style-type: none"> ○ Մննդամթերքի որակ, թարմություն, սնվելու հաճախականություն ○ Բնակարանի/կացարանի մեծություն, ներքին հարդարման վիճակ, կենցաղային տեխնիկայով/իրերով ապահովվածություն, կահավորում, կոմունալ-կենցաղային հարմարություններ, ջեռուցման պայմաններ, սանհանգույցի վիճակ, խոհանոցային հարմարություններ, բնակարանի/կացարանի հարմարավետություն³

³ Նշում՝ շեղատառով նշված ցուցանիշները չեն ներառվում ցուցանիշների հաշվարկի մեջ:

<p>Սոցիալական</p> <ul style="list-style-type: none"> ○ Աշխատանք⁴ ○ Նյութական ապահովվածություն ○ Ուսում⁵ ○ Առողջություն ○ Հանգիստ/Ժամանց/մշակույթ ○ Հոգևոր կյանք 	<p>○ Բավարարվածություն</p> <p>○ Կարևորություն</p>	<ul style="list-style-type: none"> ○ Ղեկավարության վերաբերմունք, լրացուցիչ արտոնություններ/սոցիալական ապահովության փաթեթ, աշխատանքային հարաբերություններ, անհատի /ընկերության/ արտադրանքի /ծառայության/ որակ, աշխատանքային գրաֆիկ, առաջխաղացման հնարավորություններ, հավելվածար/պարգևավճար, աշխատանքի և անձնական կյանքի համատեղելիություն, աշխատանքային պայմանների հարմարավետություն, մասնագիտական աճի և ուսուցման հնարավորություն, աշխատանքի տեսակ, աշխատավարձ/եկամուտներ, <i>Աշխատանքի/գործունեության կայունության երաշխիքներ</i> ○ Եկամտի աղբյուրի տեսակ, խնայողություններ, սեփականության/ ունեցվածքի մակարդակ, ֆինանսական կայունության աստիճան ○ Դասավանդման որակ, ուսումնական պլանում ներառված առարկաների ցանկ, ուսումնական հաստատության առկա ծառայություններ, գրադարանային ծառայություններ, մասնագիտական աճին նպաստող արտալսարանային գործունեություն, <i>կիրառական գիտելիքներ, որոնք օգտակար են նախընտելի այլ աշխատանքի ընդունվելու համար:</i> ○ Առողջական վիճակ, ֆիզիկական ակտիվություն/ֆունկցիոնալություն ○ Գրադարաններ այցելելու, գրքեր (ոչ մասնագիտական), թերթեր, ամսագրեր ընթերցելու, հեռուստացույց դիտելու, երաժշտություն ունկնդրելու, կինո/թատրոն, համերգներ, սրճարան, ռեստորան այցելելու, պարելու, հոբբիով զբաղվելու, երաժշտական գործիք/գործիքներ նվագելու, սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելու, զբոսնելու/զբոսայգիներ գնալու, հանգստի/ձանապարհորդությունների մեկնելու հնարավորություն, ○ Հոգևոր կյանք
<p>Հարաբերություններ և ձեռքբերումներ</p>	<p>○ Բավարարվածություն</p> <p>○ Կարևորություն</p>	<ul style="list-style-type: none"> ○ Ընտանիքում աջակցության և հոգատարության, փոխըմբռնման մթնոլորտով, ընտանիքի հետ ժամանակ անցկացնելու հնարավորությամբ ○ Ընկերների/բարեկամների հետ ունեցած փոխվստահության, շփման և փոխաջակցության մակարդակ ○ Կյանքում ունեցած ձեռքբերումներ
<p>Քաղաքացիական ազատություն</p>	<p>○ Բավարարվածություն</p> <p>○ Կարևորություն</p>	<ul style="list-style-type: none"> ○ Քաղաքացիական ազատության աստիճան

Միկրոմակարդակն ուսումնասիրվում է անհատի կյանքին առնչվող հնարավոր խնդիրների և հարցադրումների առավելագույնս խելամիտ ու իրատեսական ընդգրկմամբ, ընդ որում, ոլորտների, ցուցանիշների և համապատասխան բնութագրիչների ընտրությունը հնարավորինս համապատասխանեցված է մակրոմակարդակի և էզո-մեզո մակարդակի դեպքում առանձնացվածներին: Այս մակարդակում շեշտադրվում է սուբյեկտի բավարարվածությունը տվյալ ոլորտով ու առանձին բնութագրիչներով, ինչպես նաև անհատի կողմից դրանց տրվող կարևորության աստիճանով (տե՛ս աղյուսակ 9):

Նկարագրված մակարդակների, ոլորտների ու բնութագրիչների ընդգրկմամբ կյանքի որակի բաղադրյալ գնահատականը համակարգային ու համակողմանի դարձնելու նպատակով կյանքի որակի հայաստանյան կառուցվածքը համալրվել է ևս երկու խումբ կարևորագույն բաղադրիչներով, մասնավորապես Հայաստանում ապրելու բավարարվածությամբ ու անհատի արժեքների ու հոգեբանամետրիկ պատկերով:

⁴ Աշխատանքից բավարարվածությունը գնահատելու նպատակով հաշվի են առնվել այն գործոնները, որոնցով պայամանվորված է անհատի մոտ աշխատանքից բավարարվածությունը (Kahn և Juster, 2002թ. հիմնվելով Kahn-ի (1981թ.) և այն “ինչ փնտրում են աշխատակիցները” (Wilf Altman, 2010թ.) Այս որոնվող գործոնները «Mercer» ընկերության կողմից առաջարկվող «ներգրավվածության գործոններն» են (Bowles և այլք, 2009թ.)

⁵ Ուսումից բավարարվածությունը գնահատելու նպատակով հաշվի են առնվել այն գործոնները, որոնք ներկայացվել են Michalos-ի և այլոց (2006թ.) աշխատության մեջ:

Բավարարվածություն Հայաստանում ապրելուց

Այս բաղադրիչի միջոցով ուսումնասիրվում է, թե անհատը որքանով է բավարարված ընդհանուր առմամբ Հայաստանում իր կյանքին առնչվող այն ոլորտներով ու բնութագրիչներով, որոնք. ըստ էության. ներառված են նաև մակրոմակարդակի մեջ: Փաստորեն, այս բաղադրիչի՝ կյանքի որակի համակարգում ներառված են հնարավոր է դառնում բացահայտել անհատի և բնակչության կյանքի ամենավերին շերտի՝ մակրո միջավայրի երկու փոխլրացնող ասպեկտները՝ մի կողմից ընդգրկված ոլորտների ու բնութագրիչների գծով երկրում տիրող փաստացի իրավիճակը, մյուս կողմից՝ անհատի ու հասարակության՝ դրանցից բավարարվածության աստիճանը: Այս բաղադրիչում ներառված բնութագրիչները ներկայացված են աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Բավարարվածություն Հայաստանում ապրելուց

Ոլորտ/էնթալորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Տնտեսական <ul style="list-style-type: none"> Ներքին տնտեսություն Ֆինանսական հատված Արտաքին տնտեսություն 	<ul style="list-style-type: none"> Բավարարվածություն 	<ul style="list-style-type: none"> Տնտեսական զարգացման տեմպերից/աճից Գների մակարդակից Փոխանակման կուրսի կայունության աստիճանից Վարկերի հասանելիությունից Վարկային տոկոսադրույքների մակարդակից Հիփոթեքային (բնակարանի) վարկերի մատչելիությունից
Սոցիալական <ul style="list-style-type: none"> Կենսամակարդակ Աշխատանք Կրթություն Առողջապահություն Հանգիստ/Ժամանց 	<ul style="list-style-type: none"> Բավարարվածություն 	<ul style="list-style-type: none"> Բնակչության ընդհանուր կենսամակարդակից Նվազագույն աշխատավարձի մակարդակից Սննդամթերքի որակից Աշխատաշուկայի պայմաններից Աշխատանքային իրավունքների պաշտպանվածության աստիճանից Երկրում կարիերայի հնարավորություններից Կրթության մակարդակից Առողջապահական ծառայությունների մատչելիությունից Առողջապահական ծառայությունների որակից Հանգստի/Ժամանցի հնարավորություններից բազմազանությունից
Ֆիզիկական ոլորտ և ինստիտուտներ <ul style="list-style-type: none"> Ենթակառուցվածքներ Ինստիտուտներ 	<ul style="list-style-type: none"> Բավարարվածություն 	<ul style="list-style-type: none"> Ճանապարհների որակից Հանրային տրանսպորտի գործունեությունից Հեռահաղորդակցության ոլորտի (կապ, ինտերնետ) գործունեությունից Երկաթուղային տրանսպորտի գործունեությունից Ավիաթիչքների մատչելիությունից Մարդու իրավունքների պաշտպանության մակարդակից Դատական համակարգի գործունեությունից Կառավարության գործունեությունից Տեղական իշխանությունների գործունեությունից Երկրում օրենքների կիրարկելիությունից Սպասարկման ոլորտում մատուցվող ծառայությունների որակից
Կայունություն և ազատություններ <ul style="list-style-type: none"> Կայունության աստիճան Քաղաքացիական ազատություններ 	<ul style="list-style-type: none"> Բավարարվածություն 	<ul style="list-style-type: none"> Ներքին ապահովության և անվտանգության աստիճանից Ընտրական գործընթացներից Քաղաքացիական ազատությունների աստիճանից Սպառողների իրավունքների պաշտպանության մակարդակից Արտաքին անվտանգության աստիճանից

Բավարարվածություն կյանքի սանդղակից կամ ժամանակացույցից

Այս գործիքը (տե՛ս աղյուսակ 11) համարվում է գլոբալ կյանքի գնահատական (ծնված օրվանից ի վեր մինչև որոշակի ժամանակահատված, սովորաբար հարցման պահը): Այն 5 գնահատական-ցուցանիշ պարունակող գործիք է, որը մշակվել է Դայների և այլոց կողմից (1985թ.):

Աղյուսակ 11. Բավարարվածություն կյանքի սանդղակից

N	Գնահատական-ցուցանիշ
1	Մեծամասամբ իմ կյանքը մոտ է իմ իդեալին
2	Իմ կյանքի պայմանները հրաշալի են
3	Ես կյանքից բավարարված եմ
4	Մինչ այժմ ես ձեռք եմ բերել այն, ինչ ցանկացել եմ
5	Եթե ես նորից ապրեի իմ կյանքը, ես գրեթե ոչինչ չէի փոխի

Արժեքներ

Ինչպես արդեն հասկանալի է, կյանքի որակի հայաստանյան հետազոտության առանցքային օբյեկտն անհատն է՝ որպես առանձին և յուրահատուկ սոցիալական համակարգ, որի հարթությամբ մարկրո միջավայրի պայմանների ամբողջությունը վերածվում է Հայաստանում կյանքից բավարարվածությանը, իսկ էզո-մեզո միջավայրի պայմանների ամբողջությունը՝ վերածվում իր իսկ կյանքից բավարարվածությանը, ինչն էլ, ըստ առանձին առանցքային կյանքի ոլորտների դրսևորվում է միկրոմակարդակում: Ըստ էության՝ «փաստացի միջավայր-անհատ-բավարարվածություն» փոխանցման շղթայի վերջնական ելքի վրա էականորեն ներգործում են անհատի արժեքային համակարգը, որն իր հերթին որոշակիորեն արտացոլում է հենց նույն մակրո և էզո-մեզո միջավայրերի ազդեցությունները: Այս իմաստով կյանքի որակի ցանկացած բաղադրյալ գնահատական անհրաժեշտաբար պետք է հաշվի առնի անհատի արժեքային համակարգի շրջանակներում կազմավորված պատկերացումների, կարծիքի ու ընկալումների դերը բավարարվածության դրսևորման վրա: Անհատի արժեքային համակարգի գնահատման համար մշակված դատողությունները տրված են աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Անհատի արժեքային համակարգ⁶

Ոլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
Ընտանիք, ավանդույթներ	<ul style="list-style-type: none"> ○ Կարևորություն 	<ul style="list-style-type: none"> ○ Ընտանիքի սերը մարդու մոտ առաջացնում է լիարժեքության զգացում ○ Ընտանիքի անդամները պետք է ազատ և անկեղծ շփվեն մեկը մյուսի հետ ○ Ընտանիքի անդամները պետք է օգնեն և աջակցեն մեկը մյուսին ○ Ջավակը պետք է հարգի իր ծնողներին և տատիկներին/պապիկներին ○ Ընտանիքի անդամները պետք է պատրաստ լինեն գոհաբերությունների միմյանց համար ○ Ջավակը պետք է օգնի իր ծնողներին, երբ նրանք մեծ տարիքի դառնան ○ Ծնողը պետք է ձգտի լավագույնով ապահովել իր երեխաներին
		<ul style="list-style-type: none"> ○ Փողն ամենակարևոր բանն է, որ պետք է հաշվի առնել աշխատանք ընտրելիս ○ Եթե ես հնարավորություն ունենայի ընտրելու ավելի շատ գումար աշխատելու և հանգստի միջև, ես կընտրեի փող աշխատելը ○ Ֆինանսական ապահովությունն ինձ համար շատ կարևոր է ○ Հարստության ձեռքբերումը մարդու կյանքի կարևորագույն նվաճումն է
Մատերիալիզմի գիտակցում	<ul style="list-style-type: none"> ○ Կարևորություն 	<ul style="list-style-type: none"> ○ Փողն ամենակարևոր բանն է, որ պետք է հաշվի առնել աշխատանք ընտրելիս ○ Եթե ես հնարավորություն ունենայի ընտրելու ավելի շատ գումար աշխատելու և հանգստի միջև, ես կընտրեի փող աշխատելը ○ Ֆինանսական ապահովությունն ինձ համար շատ կարևոր է ○ Հարստության ձեռքբերումը մարդու կյանքի կարևորագույն նվաճումն է

⁶ Ներկայացվող արժեքների ցանկի մեջ հաշվի են առնվել Tan-ի (2006թ.) և այլոց աշխատության մեջ ներկայացված արժեքները:

Հասարակության գիտակցում	օ Կարևորություն	<ul style="list-style-type: none"> օ Ես պատրաստ եմ որպես կամավոր աշխատել կանոնավոր հիմքով օ Ես ցանկանում եմ օգնել մարդկանց, ովքեր զգում են դրա կարիքը
Կարգավիճակի գիտակցում	օ Կարևորություն	<ul style="list-style-type: none"> օ Ինձ համար հաճելի է ունենալ այնպիսի իրեր, որոնք մարդկանց վրա սպասվողություն են թողնում օ Ես հիանում եմ այն մարդկանցով, ովքեր թանկարժեք տներ և մեքենաներ ունեն օ Իմ տնտեսական կարգավիճակն ինձ համար շատ կարևոր է
Ավանդականություն	օ Կարևորություն	<ul style="list-style-type: none"> օ Նախքան ամուսնանալն արտամուսնական հարաբերություններ ունենալը սխալ է օ Ես հետևում եմ ընտանեկան ավանդույթներին և կանոններին օ Ես սիրում եմ նշել տոները ավանդական ձևով օ Ինձ համար ամուսնալուծությունն անընդունելի է օ Հավատքն իմ կյանքի կարևոր մասն է
Կրթության գիտակցում	օ Կարևորություն	<ul style="list-style-type: none"> օ Բարձրագույն կրթությունը լավ աշխատանքի գրավական է օ Յուրաքանչյուր ոք պետք է ձգտի բարձրագույն կրթություն ստանալ օ Բարձր պաշտոն ունենալու համար պետք է կրթական բարձր մակարդակ ունենալ օ Անհատը պետք է անընդհատ կատարելագործվի և նոր գիտելիքներ/ հմտություններ ձեռք բերի

Էմոցիաներ և սուբյեկտիվ բարեկեցություն

Յուրաքանչյուր մարդու դրական ու բացասական էմոցիոնալ դաշտը չափազանց կարևոր դեր է խաղում իր կյանքի սուբյեկտիվ բարեկեցության գործում, որը վերին բաղադրիչն է:

Դրական էմոցիաները լրացուցիչ խթան են կյանքից բավարավածության աստիճանի բարձրացմանն ուղղված քայլերի համար, այնինչ բացասական զգացական հոգեվիճակ ունեցող մարդկանց մոտ ակնկալվում է, որ կնկատվի բավարավածության ցածր մակարդակ: Այդուհանդերձ, հավանական է նաև նշված օրինաչափությունների միանգամայն հակասող պատկերի ձևավորումը, ինչն, իհարկե, հետքրքիր կլինի Հայաստանի պարագայում պարզաբանել անհատի հոգեվիճակի բնութագրությանն ուղղված հարցադրումների միջոցով (տե՛ս աղյուսակ 13):

Ապագայում փորձ կարվի բացահայտելու անհատի արժեհամակարգի և էմոցիաների ու էմոցիոնալ ֆունկցիոնալության ազդեցությունը կյանքի որակի առանձին մակարդակների, ոլորտների և առավել հետաքրքրական ընտրված բնութագրիչների վրա:

Աղյուսակ 13. Դրական և բացասական էմոցիաներ⁷

Զգայություն	Ցուցանիշ	Բնութագրիչ
Դրական	<ul style="list-style-type: none"> ○ Գերիշխում 	<ul style="list-style-type: none"> ○ Սպագայի նկատմամբ հույս ○ Լավ տրամադրություն ○ Ուրախություն
Բացասական	<ul style="list-style-type: none"> ○ Գերիշխում 	<ul style="list-style-type: none"> ○ Անհանգստություն ○ Անորոշություն, խճճվածություն ○ Մենակություն ○ Մեղք, մեղավորություն ○ Զայրույթ, բարկություն ○ Անքնություն ○ Հուսալքվածություն ○ Ինքնվստահության պակաս/ընկճվածություն

Կյանքի որակի մակարդակների և ցուցանիշների գնահատման բնույթն ու տեղեկատվության աղբյուրները

Հիմք ընդունելով կյանքի որակի ոլորտը ներկայացնող անվանի տեսաբանների ու հետազոտողների փորձն ու հիմնավորումներն առ այն, որ կյանքի որակի համապարփակ ու բաղադրյալ գնահատակը հնարավոր է ստանալ՝ մեկ համակարգում միավորելով ինչպես տարբեր մակարդակները, այնպես էլ այդ մակարդակների տարբեր բնույթի գնահատականները, այս հետազոտության մեջ, հիմնվելով նախասահմանված հիմնարար սկզբունքների և հենքային ուղենիշերի վրա. կյանքի որակի համալիր ցուցանիշը սինթեզում է օբյեկտիվ և սուբյեկտիվ գնահատականներ: Ըստ էության՝ օբյեկտիվ գնահատականների միջոցով փորձ է արվում պարզել չափվող պայմանների փաստացի վիճակը պահի դրությամբ, մինչդեռ սուբյեկտիվ գնահատականը ենթադրում է անհատի կողմից սեփական ընկալումների ու կարծիքի միջոցով այդ նույն պայմանների վերաբերյալ սուբյեկտիվ դատողությունների, կարևորությունների սահմանում ու բավարարվածության ձևավորում:

Հետազոտության համար տեղեկատվության աղբյուր են հանդիսանում ինչպես ազգային և միջազգային վիճակագրական ու ռեյտինգավորող կազմակերպությունների պաշտոնական հրապարակված ցուցանիշները որպես երկրորդային տվյալներ, այնպես էլ՝ բնակչության հարցումների արդյունքում հավաքագրված առաջնային տեղեկատվության հիման վրա ստացված ցուցանիշները՝ այսպիսով համադրելով կյանքի որակի վերաբերյալ օբյեկտիվ և սուբյեկտիվ տեղեկատվությունը: Մասնավորապես, մակրոմակարդակի գնահատումն իրագործվում է երկրորդային ցուցանիշների օգնությամբ, իսկ էզո-մեզո և միկրոմակարդակները՝ հարցումների, կամ, այսպես կոչված, փափուկ տվյալների միջոցով:

Կյանքի որակի ցուցանիշի կառուցումն ու գնահատումը

Ընհանրապես բաղադրյալ ցուցանիշները ձևավորվում են, երբ առանձին ցուցանիշներ հաշվարկվում են մեկ ցուցանիշի մեջ՝ հիմքում ունենալով նախապես մշակված հայեցակարգ: Բաղադրյալ ցուցանիշների միջոցով հնարավոր է պարբերական ուսումնասիրությունների միջոցով որոշակի երևույթների կամ փաստերի փոփոխության վարքագծի մոնիտորինգ իրականացնել: Հանրային քաղաքականության մշակման, վերանայման ու վերլուծության տեսակետից նման ցուցանիշներն

⁷ Հիմքում ընկած է Kreitler-ի (2006թ.) և այլոց աշխատությունը:

այն արդյունավետ գործիքն են, որոնց միջոցով ուրվագծվում են միտումներն ու շեշտադրվում առանցքային հիմնահարցերը՝ այդպիսով կանխորոշելով քաղաքականության առաջնահերթությունները: Բաղադրյալ ցուցանիշները սովորաբար չափում են բազմաչափ կոնցեպցիաներ, որոնք այլ կերպ հնարավոր չէ արտահայտել միայն մեկ ցուցանիշի միջոցով: Դրանց տիպիկ օրինակ է հենց կյանքի որակի ցուցանիշը:

Կյանքի որակի չափման կամ գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեք կարևորագույն ասպեկտներ.

1. մակարդակները և ոլորտները, որոնց կարող է բաժանվել կյանքը,
2. չափորոշիչները, որոնք պետք է օգտագործվեն կյանքի տարբեր ոլորտները գնահատելու համար,
3. կշիռները, որոնք պետք է կիրառվեն տարբեր ոլորտների նկատմամբ դրանց մեծ կամ փոքր կարևորությունը մատնանշելու համար:

Հենց այս տեսանկյունից էլ, ըստ էության, մշակվել է սույն հետազոտության կյանքի որակի ցուցանիշի կառուցման ու գնահատման ողջ հայեցակարգը: Քանի որ նախորդ հատվածների միջոցով արդեն իսկ հստակ ու մանրամասն ներկայացվել է Հայաստանում կյանքի որակի հետազոտության մակարդակները, առանցքային ոլորտներն ու համապատասխան բնութագրիչները, տվյալ հատվածում առավելապես կշեշտադրվել ըստ առանձին մակարդակների գնահատման չափորոշիչները, կշիռների ստացման և վերագրման եղանակներն ու, վերջապես, կյանքի որակի ցուցանիշի կառուցման տեխնիկան:

Նախքան կյանքի որակի ցուցանիշի հաշվարկման նկարագրությանն անցնելն այստեղ նպատակահարմար է ընդգծել այն սկզբունքները, որոնք ընդհանրապես հիմք են հանդիսանում կյանքի որակի գնահատման համար (Verdugo et al, 2005; Schalock et al. 2002; Brown et al., 2004) և մասնավորապես նաև կիրառվել են սույն հետազոտության շրջանակներում: Դրանք են.

1. ԿՈ-ի գնահատականը պետք է ներառի մարդկանց կողմից արժևորված անձնական փորձառության աստիճանը,
2. ԿՈ-ի գնահատականը պետք է արտացոլի կյանքի այն ոլորտները, որոնք նպաստում են լիարժեք և միմյանց փոխկապակցված կյանքին,
3. ԿՈ-ի գնահատականը հաշվի է առնում մարդկանց համար կարևոր ֆիզիկական, սոցիալական և մշակութային միջավայրերի բնույթը,
4. ԿՈ-ի գնահատականը ներառում է բոլոր մարդկանց համար և առանձին անհատներին հատուկ կյանքի գնահատված փորձառությունները:

Կյանքի որակի բաղադրյալ ու բազմաչափ ցուցանիշի կառուցվածքում ներառվում է 2 ենթացուցանիշ, որոնք համախմբում են կյանքի որակի հետազոտության երեք մակարդակներն ու որոնցից յուրաքանչյուրն ունի գնահատման ուրույն մեթոդը: Երկու ենթացուցանիշներն են՝ երկրի մակարդակը, որը ներկայացվում է մակրոմակարդակի ենթացուցանիշով, և անհատի մակարդակը, որը չափվում է էզո-մեզո ու միկրոմակարդակի ենթացուցանիշներով: Երկրի ու անհատի մակարդակները կազմավորում են կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի 100 տոկոսը: Այժմ անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

Մակրոմակարդակի ենթացուցանիշ (ՄՄԿԵ): Ինչպես արդեն ընդգծվել է, սա կյանքի որակի վերին հարթությունն է, որն իր հերթին կազմված է երկու բաղադրիչից՝ իրավիճակի օբյեկտիվ

գնահատականից ու սուբյեկտիվ բավարարվածությունից Հայաստանում ապրելուց, ինչն ըստ էության առաջինի հայելային արտացոլումն է հասարակության բարեկեցության զգացողության տեսակետից: Երկու բաղադրիչները կազմավորում են մակրոմակարդակի ենթացուցանիշի 100 տոկոսը: Օբյեկտիվ գնահատականի չափման համար տեղեկատվական հիմք են հանդիսանում կոշտ տվյալները, մասնավորապես Ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Հերիթեյջ Հիմնադրամի թողարկած պաշտոնական տվյալները, գնահատականներն ու վարկանիշերը: Օբյեկտիվ գնահատականում ներառվել է հասարակության կյանքի չորս կարևորագույն ոլորտ (տե՛ս աղյուսակ 7), որոնցից յուրաքանչյուրն իր հերթին գնահատվում է համապատասխան ցուցանիշների միջոցով՝ ընհանուր 90 ցուցանիշ: Օբյեկտիվ գնահատականի չափումը կատարվում է **արժեքների** ու **կշիռների** միջոցով, որոնք ստացվում են փորձագիտական հարցումների օգնությամբ (հարցաշարը կցված է հավելվածում): Ցուցանիշների արժեքը կազմված է փորձագետի կողմից կյանքի որակի տեսակետից տվյալ ցուցանիշին տրված կարևորության աստիճանից, որը գնահատվում է 1-4 սանդղակով, և ցուցանիշի փաստացի վիճակին տրված գնահատականից՝ տրված 1-7 սանդղակով: Բացի ցուցանիշների գնահատումից փորձագիտական հարցումների միջոցով պարզվում է նաև յուրաքանչյուր ենթաոլորտի իրավիճակի գնահատականը, կարևորությունը տվյալ ոլորտում (դասակարգելով ըստ կարևորության), ինչպես նաև՝ յուրաքանչյուր ոլորտի կարևորությունը կյանքի որակի համատեքստում (դասակարգվում է ըստ առաջնահերթության): Արդյունքում ձևավորվում է օբյեկտիվ գնահատականի միջին կշռված արժեքը, ինչն ըստ էության ամփոփում է մակրոմիջավայրը կազմող ընտրված ոլորտների, ենթաոլորտների ու համապատասխան ցուցանիշների կարևորությունը և փաստացի իրավիճակի գնահատումը Հայաստանում անհատի ու հասարակության կյանքի որակի ձևավորման տեսակետից:

Հայաստանում ապրելուց սուբյեկտիվ բավարարվածության չափման տեղեկատվական աղբյուր է բնակչության շրջանում կատարված ներկայացուցչական ընտրանքով հարցումների արդյունքները: Վերջինիս միջոցով, ի լրումն այլ մակարդակների, ոլորտների ու հարցերի (էզզո-մեզո և միկրոմակարդակին առնչվող), տրվում է 32 հարց այն առնչությամբ, թե որքանով է հարցվողը բավարարված Հայաստանում մակրոմիջավայրը ձևավորող տարբեր երևույթներից ու իրողություններից՝ գնահատված 1-4 սանդղակով (ցանկը տե՛ս հավելվածում, հարցաթերթ, հարց 80): Ընդհանուր գնահատականը ձևավորվում է որպես հարցվողների բոլոր պատասխանների միջին արժեքների միջին:

Ընդ որում, մակրոմիջավայրի ենթացուցանիշի կառուցումը երկու բաղադրիչների՝ օբյեկտիվ գնահատականի և սուբյեկտիվ բավարարվածության գնահատականի միջոցով ենթադրում է վերջիններիս կշռված հանրագումար՝ ըստ փորձագիտական հարցման արդյունքում դրանց տրված համապատասխան միջին կշիռների:

Փորձագիտական հարցման նպատակով ընտրվում է 21 փորձագետ, որոնցից 15-ը մասնակցում են ինչպես օբյեկտիվ միջավայրի գնահատմանը, այնպես էլ կյանքի որակի մակարդակների ու ենթացուցանիշների՝ ըստ կարևորության կշռմանն առնչվող հարցմանը, իսկ մյուս 6-ը՝ միայն վերջինին: Փորձագետները ներկայացնում են գիտության և կրթության բնագավառը, հասարակական կազմակերպությունները և խորհրդատվական կառույցները, հանրային կառավարման ինստիտուտները և միջազգային կառույցների տեղական ներկայացուցչությունները: Մասնավորապես, փորձագետների կազմը բաղկացած է տնտեսագետներից, ազգագրագետից,

սոցիոլոգից, հոգեբանից:

Էզզո-մեզո մակարդակի ենթացուցանիշ (ԷՄԵ): Այս մակարդակի ենթացուցանիշը կառուցվում է բնակչության հարցումների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա և առավելապես օբյեկտիվ բնույթ է կրում, այսինքն՝ ուսումնասիրում է անհատի կյանքի որակի վրա ուղղակիորեն (տնային տնտեսություն) և անուղղակիորեն (համայնք) ներգործող միջավայրերի փաստացի առկա պայմանները: Էզզո-մեզո ենթացուցանիշը միկրոմակարդակի հետ միասին կազմավորում են կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի՝ անհատի մակարդակի 100 տոկոսը, որոնցից յուրաքանչյուրի մասնաբաժինը որոշվում է փորձագիտական հարցման միջոցով:

Էզզո-մեզո մակարդակի ենթացուցանիշի արժեքն առանձին ոլորտների (տե՛ս աղյուսակ 8) կշռված հանրագումարն է, իսկ վերջիններիս արժեքը ձևավորվում է որպես յուրաքանչյուր ոլորտում ընդգրկված համապատասխան ցուցանիշների կշռված արժեքների հանրագումար: Ոլորտը կազմող ենթաոլորտների՝ հարցվողների կողմից ըստ կարևորության դասակարգման արդյունքում որոշվում է տվյալ ոլորտի միջին կշիռը ենթացուցանիշում:

Կյանքի որակի էզզո-մեզո մակարդակի ենթացուցանիշի առանձին բաղադրիչների հաշվարկի ժամանակ ողջ ընտրանքի համար կատարվում է ըստ հարցվողների միջինացում կամ ագրեգացում, ինչը թույլ կտա հետագայում տարիների կտրվածքով առանձին ցուցանիշների տրենդներ ուրվագծել:

Միկրոմակարդակի գնահատման եղանակ (ՄԻԿԵ): Միկրոմակարդակի ենթացուցանիշը գնահատում է անհատի կյանքից բավարարվածությունը:

Բավարարվածության գնահատման եղանակներն են՝

1. Բավարարվածություն կյանքի սանդղակից կամ ժամանակացույցից (ծնված օրվանից ի վեր՝ ընդհանուր կյանքի գնահատական կամ զլոբալ գնահատական, Դայներ, 1985թ.)
2. Բավարարվածություն կյանքի ոլորտներից (ժամանակի որոշակի պահին):

Առանձին վերլուծությամբ ներկայացվում է նաև սուբյեկտիվ բարեկեցության գնահատականը:

Ժամանակի հասկացություն

Հաշվի առնելով բավարարվածության գնահատման վերոնշյալ մոտեցումները և բուն հետազոտության նպատակները՝ որպես ժամանակի պահ ընտրվել է հարցումների անցկացման պահը, իսկ վերլուծությունը հիմնված է կոնկրետ պահի դրությամբ ստացված արդյունքների վրա: Այս իմաստով կյանքի որակի ցուցանիշում միկրոմակարդակի ենթացուցանիշի գնահատականը ենթադրում է անհատի կյանքի ոլորտներից բավարարվածության չափումը:

Կյանքի ոլորտներ

Հաշվի առնելով մի շարք ուսումնասիրություններ (Schalock, 2004, Cummins 2005, Rapley, 2003, Hagerty et al, 2001, Verdugo et al, 2005, Cummins et al, 2003, International Wellbeing Group, 2006, Kahn et al, 2001, Wahl et al, 2004)՝ հետազոտողները որպես կյանքի ոլորտներ առաջարկում են հետևյալ հիմնական ցանկը (տե՛ս աղյուսակ 14)՝ ի նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որը գնահատվում է ինչպես ուսանողի, այնպես էլ թոշակառուի կյանքի որակը:

Աղյուսակ՝ 14. Կյանքի ոլորտներ

N	Ոլորտ
1.	Գենցաղային պայմաններ (բնակարան, դրա վիճակը, կահավորում)
2.	Մտուղ/անուցում
3.	Ընտանիք (հարաբերություններ, փոխմրրում, շփում)
4.	Ընկերներ/բարեկամներ (փոխվստահություն, շփում, փոխաջակցություն)
5.	Ձեռքբերումներ
6.	Ելութական ապահովվածություն
7.	Հանգիստ/ժամանց
8.	Ֆիզիկական առողջություն
9.	Հոգևոր ոլորտ
10.	Քաղաքական ազատություն
11.	Աշխատանք
12.	Ուսում/կրթություն

Հիմնական սկզբունք

Ամեն ոլորտում ընդգրկվել են այնպիսի չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր է լավագույնս ներկայացնել և գնահատել տվյալ ոլորտը: Այնինչ, քանի որ անհատն է որոշում տվյալ չափանիշի կարևորությունը, ապա հարցվողը նաև գնահատում է յուրաքանչյուր ոլորտի համար ներկայացված չափանիշի կարևորության աստիճանը: Հարցվողի կյանքի որակի տեսանկյունից կարևոր գնահատվող չափանիշները կներառվեն կյանքի որակի տվյալ ոլորտի գնահատականում: Մյուս կողմից տվյալ ոլորտից բավարարվածության միավորը հաշվարկելիս՝ կներառվեն միայն անհատի (հարցվողի) կողմից կարևորված ցուցանիշները: Հետևապես, որպես տվյալ ոլորտի գնահատական հանդես է գալիս կարևոր համարվող ցուցանիշների միջինն անհատի (հարցվողի) մակարդակով, իսկ որպես ոլորտի ընդհանուր միավոր՝ բոլոր հարցվողների միջինը:

Միկրոմակարդակի գնահատականներ

1. *Կյանքի որակի միկրոմակարդակի ենթացուցանիշ.*

Ցուցանիշի հաշվակի քայլերն են՝

- այս ցուցանիշի միավորի հաշվարկման ժամանակ՝ միայն անհատների (հարցվողների) կողմից կյանքի որակի տեսակետից ամենակարևոր համարվող ոլորտները են հաշվի առնվում (ամենակարևոր մի քանի կյանքի ոլորտ, որոնց քանակը որոշվում հետազոտության միջոցով, և ինչպես ոլորտների քանակը և ցանկը կարող է տարեցտարի փոփոխության ենթարկվել):
- յուրաքանչյուր ոլորտի կշիռ է հանդիսանում տվյալ ոլորտն ամենակարևորը համարող հարցվողների ճշգրտված տոկոսն ընդհանուրի մեջ:
- ընտրված ամենակարևոր համարվող ոլորտների կշռված արժեքների/միավորների հանրագումարը համարվում է ցուցանիշի միավոր:
- ցուցանիշի միավորը բերվում է 0-1 սանդղակի այլ ինդեքսների հետ համադրելիությունը պահպանելու նպատակով:

2. Բավարարվածություն կյանքի բոլոր ոլորտներից

Սա յուրաքանչյուր հարցվողի՝ կյանքի ոլորտների բավարարվածության միավորների միջինն է: Այստեղ ոլորտների քանակը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր հարցվողի համար, քանի որ, եթե յուրաքանչյուր ոլորտում հարցվողը նշած լինի, որ տվյալ ոլորտի ցուցանիշներն իրեն համար կարևոր չեն, ապա այդ ոլորտը բացառվում է հաշվարկից: Ուսանող համարվող հարցվողների մոտ կա

լրացուցիչ մեկ ոլորտ: Աշխատանքի ոլորտը միայն գնահատվում է աշխատողների համար: Միավորը բերվում է 0-1 սանդղակի համադրելիությունն այլ ինդեքսների հետ պահպանելու նպատակով:

3. Սուբյեկտիվ բարեկեցություն

Թեպետ Bruni-ն և Porta-ն (2007թ.)⁸ առաջարկում են ներառել կյանքի զլոբալ գնահատականը սուբյեկտիվ բարեկեցության գնահատականի մեջ՝ հետազոտության նպատակների էլնելով և ժամանակային համապատասխանություն ապահովելու նպատակով հետազոտության մեջ կիրառվող սուբյեկտիվ բարեկեցության գնահատականը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

1. Էմոցիաներ (դրական և բացասական): Բաղկացած է 2 խմբից: Յուրաքանչյուր խմբի միավորը հանդիսանում է տվյալ խմբում ներառված էմոցիաների միջինը, իսկ որպես անհատի էմոցիաների միավոր՝ այդ 2 խմբի միավորների միջինը,
2. բավարարվածություն կյանքի բոլոր ոլորտներից: Յուրաքանչյուր հարցվողի կյանքի ոլորտների բավարարվածության միավորների միջինն է, ինչպես նաև կայացված է վերևում:

Իսկ սուբյեկտիվ բարեկեցության միավորը յուրաքանչյուր հարցվողի կյանքի ոլորտներից բավարարվածության միավորների միջինի և նույն հարցվողի էմոցիաների միջին միավորի հանրագումարների միջինն է: Միավորը բերվում է 0-1 սանդղակի այլ ցուցանիշների հետ համադրելիություն ապահովելու նպատակով:

4. Բավարարվածություն կյանքի սանդղակից

Բոլոր հարցվողների գնահատականների միջինների միջինն է, իսկ միավորը բերվում է 0-1 սանդղակի այլ ինդեքսների հետ համադրելիություն ապահովելու նպատակով:

Հետազոտության ընտրանքը

Ինչպես արդեն ներկայացվել է, Հայաստանում կյանքի որակի գնահատումը, փաստորեն, ենթադրում է երկու տիպի գնահատական՝ սուբյեկտիվ և օբյեկտիվ: Այս մոտեցմամբ, իհարկե, առավելագույնս համալիր պատկերացում կարելի է ստանալ բնակչության կյանքի որակի վերաբերյալ, սակայն որոշակի խնդիր կարող է առաջանալ՝ կապված հարցումների ընթացքում հնարավորինս ճիշտ ընկալված և վերարտադրված պատասխաններ ստանալու հետ: Այսպես, եթե օբյեկտիվ գնահատականի ժամանակ հարցվողները բավականին հեշտությամբ կարող են պատասխանել էզզո-մեզո մակարդակում իրենց ֆունկցիոնալությանը վերաբերվող հարցերին, ապա սուբյեկտիվ, այսինքն՝ սեփական վերաբերմունքի գնահատականը տալու ժամանակ առկա է այն կանխադրույթը, որ հարցվողն արտահայտում է գիտակցված, անձնական արժեքնկալման ու զգացական միջավայրով անցկացված միանգամայն կշռադատված կարծիք: Սա որոշակիորեն դժվարացնում է հարցաթերթիկի հարցերին համարժեք պատասխաններ տալը հատկապես որոշ

⁸ Ըստ Բրունիի և Պորտայի (2007թ., էջ xviii) սուբյեկտիվ բարեկեցությունը ներառում է՝ 1. դրական/լավ էմոցիաներ, 2. բացասական/վատ էմոցիաներ, 3. դատողություններ կյանքի վերաբերյալ ընդհանուր առմամբ՝ կյանքի զլոբալ գնահատական, 4. բավարարվածություն կյանքի ոլորտներից: Ըստ ՄկԳիլլիվրեյի և Քլարկի (2006թ., էջ 4) «Սուբյեկտիվ բարեկեցությունը կյանքի բազմաչափ գնահատական է, որն ներառում է ընկալողական/գիտակցական դատողություններ կյանքից բավարարվածության վերաբերյալ և զգայական/զգացողական գնահատականներ էմոցիաների և տրամադրությունների վերաբերյալ»: «Ռեֆլեկտիվ ընկալողական գնահատականներ՝ ինչպիսիք են կյանքից բավարարվածությունը և աշխատանքից բավարարվածությունը, հետաքրքրությունը և զբաղմունքը, ինչպես նաև էմոցիոնալ արձագանքը կյանքում տեղի ունեցող իրադարձություններին՝ ինչպիսիք են ուրախությունը և տխրությունը» Դայներ (2006թ. էջ 399):

տարեցների մոտ, որոնք նույնիսկ կարող են հարցազրույցի ընթացքում հոգնելով՝ մնացած հարցերին «ոչ ստույգ» պատասխաններ տալ: Այս հանգամանքը հիմք հանդիսացավ, որ կյանքի որակի հետազոտության հարցման մասնակիցների վերին տարիքային շեմը սահմանվի 74, իսկ ստորինը՝ 18 տարեկանը:

Տարիքային բաժանումն իրականացվել է հետևյալ առանձնահատկություններով պայմանավորված՝

1. **18-24 տարեկաններ.** հիմնականում ուսանողների խումբ, որոնք կամ միայն սովորում են, կամ էլ սովորելու հետ զուգահեռ աշխատում են: Այս խումբը կարելի է պայմանականորեն անվանել «**մուտքի փուլ**»
2. **25-34 տարեկաններ.** կարելի է անվանել «**կարիերայի և/կամ ընտանիքի կայացման փուլ**»: Երիտասարդ ընտանիքների կայացման, աշխատանքային բնագավառում կայանալու փուլ (մասնագիտական և կարիերայի կայացման):
3. **35-44 տարեկաններ՝ «հաստատման փուլ».** ընտանիքի անդամներին աջակցություն՝ կայանալու, հաստատվելու շրջան: Ծնողների համար ինքնագնահատական է այն, որ իրենց երեխաների կայացման գործում իրենք արել են ամեն ինչ (իրենց զավակները հաստատվում են այս կյանքում), ինչը նշանակում է՝ իրենք էլ կյանքում հաստատվել և կայացել են որպես ծնող: Ինքնահաստատում կարիերայի ոլորտում՝ ձեռքբերված հմտությունների, գիտելիքների և փորձառության շնորհիվ պատասխանատու պաշտոններ զբաղեցնելու միջոցով:
4. **45-54 տարեկանների խումբ՝ «արդյունքները վայելելու և/կամ կայունության փուլ»:** Ներդրված ջանքերի, ուժերի, կարողությունների, ֆինանսական ռեսուրսների շնորհիվ արդյունքների վայելում՝ երեխաների հաջողություններով ուրախանալու, աշխատանքում դիրքի և այլ շարժառիթներ:
5. **55-64 տարեկանների խումբ՝ «նախապատրաստության փուլ»:** Նախապատրաստություն կյանքի նոր փուլին անցմանը:
6. **65-74 տարեկանների խումբ՝ «հանգստի/թոշակի փուլ»:**

Հարցման նպատակային խմբից դուրս են թողնվել նաև դպրոցականները, քանի որ կյանքի որակի և կյանքից բավարարվածության բաղադրիչներն ու առաջնահերթությունները խիստ տարբեր են չափահասների ու դեռահասների մոտ (օրինակ՝ բավականին շատ ժամանակ սոցիալական կայքերում անցկացնելը, համակարգչային խաղեր խաղալը կարող են անչափահասի նախընտրությունների սանդղակի վերին տեղերում գտնվել): Մյուս կողմից՝ հարցաշարի միայն փոքր հատվածն է, որ կարող է առնչվել նշված խմբին: Ընտրանքը ներառում է ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերը:

Պոպուլյացիա և ստրատիֆիկացում

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հարցման թիրախային պոպուլյացիան կազմում են Հայաստանի Հանրապետության 18-74 տարեկան անձնինք՝ 2,364,221⁹ մարդ առ 01.01.2010թ. (տե՛ս աղյուսակ 15):

Ընտրանքավորման համար կիրառվել է ստրատիֆիկացված-քվոտայի մեթոդը: Իրականացվել է երկաստիճան ընտրանքավորում՝ նախ տարածքային, և, երկրորդ, սեռատարիքային հատկանիշով: Ընտրանքի առաջին աստիճանը բաղկացած է երկու ստրատայից՝ «**Քաղաքաբնակ**» և «**Գյուղաբնակ**», ընդ որում «**Քաղաքաբնակն**» իր հերթին բաժանվում է երկու ենթաստրատայի՝ «**Երևան**» և «**Այլ**»: Պոպուլյացիայի տվյալների հիման վրա ստրատաների բաշխվածությունն ունի

⁹ Աղբյուր՝ ԱՎԾ, 2010թ.

հետևյալ կշիռները (տե՛ս աղյուսակ 16): Ընտրանքի երկրորդ աստիճանն իր հերթին բաղկացած է երկու ստրատայից՝ «Մեռ» և «Տարիք», որում առաջին աստիճանի «Քաղաքաբնակ» և «Գյուղաբնակ» ստրատաները ներկայացվում են որպես մեկ արողջականություն՝ որպես 100 տոկոս:

Աղյուսակ 15. Պոպուլյացիայի նկարագիր

Տարիք	Քաղաքաբնակ				Գյուղաբնակ		ՀՀ			
	Երևան		Այլ		արական	իգական	Քաղաքաբնակ		Գյուղաբնակ	Ընդամենը
	արական	իգական	արական	իգական			Երևան	Այլ		
18-24	66960	66639	69482	67668	90654	86492	133599	137150	177146	447895
25-34	89882	100102	83680	78987	91693	87268	189984	162667	178961	531612
35-44	65893	79141	55124	58539	73034	73780	145034	113663	146814	405511
45-54	76484	94730	70834	83981	87670	85116	171214	154815	172786	498815
54-64	50936	66352	40383	49047	35504	40353	117288	89430	75857	282575
65-74	30982	44679	22973	32344	27394	39441	75661	55317	66835	197813
Ընդամենը	381137	451643	342476	370566	405949	412450	832780	713042	818399	2364221

Աղյուսակ 16. Ընտրանքի առաջին աստիճանի ստրատաները և մասնաբաժինները

Ստրատա	Պոպուլյացիա	Ընտրանք
Երևան	832780	35.2%
Այլքաղաքաբնակ	713042	30.2%
Գյուղաբնակ	818399	34.6%
Ընդամենը	2364221	100%

Ըստ տարածքային հատկանիշի «Այլ» քաղաքաբնակ ենթաստրատան և «Գյուղաբնակ» ստրատան ունեն 10 ենթաստրատաներ ըստ մարզերի, իսկ «Երևան» ստրատայի բաշխումն իրականացվել է ըստ Երևանի համայնքների¹⁰ (տե՛ս աղյուսակ 17):

Աղյուսակ 17. «Երևան» ենթաստրատայի համայնքային բաշխվածությունը

Համայնք	Հազար մարդ	Մասնաբաժինը «Երևան» ենթաստրատայում
Աջափնյակ	108	10%
Ավան	50.9	5%
Արաբկիր	131	12%
Դավիթաշեն	41	4%
Էրեբունի	121.5	11%
Կենտրոն	130.4	12%
Մալաթիա-Մեքաստիա	141.5	13%
Նոր-Նորք	146.4	13%
Նորք-Մարաշ	11.3	1%
Նուբարաշեն	9.6	1%
Շենգավիթ	145.9	13%
Քանաքեռ-Զեյթուն	79.1	7%
Ընդամենը	1116.6	100%

Ընտրանքի հաշվարկ

Ընտրանքի ծավալի հաշվարկի ժամանակ կոնսերվատիվ մոտեցում է ցուցաբերվել: Այսպես՝ երբ $N=2,364,221^{11}$, $\gamma=97\%$ և $\Delta=\pm 2.44$, իսկ 50%՝ պատասխանների բաշխման համար, ապա ընտրանքի ծավալը՝ $n=1,989$: Վերջնական ընտրանքը կազմելիս հաշվի է առնվել նաև հնարավոր խտտանների համար նախատեսված հարցաթերթերի քանակը: Հիմնական ընտրանքը ավելացվել է 1%-ով՝ հնարավոր խտտան հարցաթերթերի և և հարցաթերթերում առկա հնարավոր բացթողումների

¹⁰ Ընտրանքի հաշվարկը կատարվել է այն ենթադրությամբ, որ համայնքներում բնակչության սեռատարիքային բաշխվածությունը նույնն է բոլոր համայնքներում:

¹¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, 23.07.2010թ.

արդյունքում սխալի տոկոսը նվազեցնելու համար: Այսպիսով, վերջնական ընտրանքը՝ $n=2,009$:
 Ընտրանքի բաշխումը ներկայացված է աղյուսակ 18-ում:

Աղյուսակ 18. Ընտրանքի բաշխում

Տարիք	Քաղաքային				Գյուղային		ՀՀ			
	Երևան		Այլ				Քաղաքային		Գյուղային	Ընդամենը
	արական	իգական	արական	իգական	Երևան	Այլ				
18-24	58	56	58	60	77	73	114	118	150	382
25-34	76	85	69	67	78	75	161	136	153	450
35-44	55	70	46	49	62	63	125	95	125	345
45-54	66	80	59	71	74	72	146	130	146	422
55-64	43	55	36	41	31	34	98	77	65	240
65-74	27	37	21	27	24	34	64	48	58	170
Ընդամենը	325	383	289	315	346	351	708	604	697	2009

Ըստ «Սեռ» և «Տարիք» ենթաստրատաների «Երևան» /ըստ համայնքների/, «Այլ քաղաքային» և «Գյուղային» /ըստ մարզային հատկանիշի/ ընտրանքի բաշխվածությունը ներկայացված են համապատասխանաբար աղյուսակ 19-ում և 20-ում:

Աղյուսակ 19. Ընտրանքում Երևանի համայնքային բաշխվածությունն ըստ «Սեռ» և «Տարիք» ենթաստրատաների

Համայնք	Սեռ	Տարիք						Ըդամենը	Ըդամենը
		18-24	25-34	35-44	45-54	55-64	65-74		
Աջափնյակ	արական	6	7	5	6	4	3	31	68
	իգական	5	8	7	8	5	4	37	
Ավան	արական	3	3	3	3	2	1	15	32
	իգական	3	4	3	3	2	2	17	
Արաբկիր	արական	7	9	6	8	5	3	38	83
	իգական	7	10	8	9	7	4	45	
Դավիթբաշեն	արական	2	3	2	2	2	1	12	26
	իգական	2	3	3	3	2	1	14	
Էրեբունի	արական	6	8	6	7	5	3	35	77
	իգական	6	9	8	9	6	4	42	
Կենտրոն	արական	7	9	6	8	5	3	38	83
	իգական	7	10	8	9	7	4	45	
Մալաթիա-Սեբաստիա	արական	7	10	7	8	5	5	42	91
	իգական	7	11	9	10	7	5	49	
Նոր-Նորք	արական	7	10	7	9	6	3	42	91
	իգական	7	11	8	11	7	5	49	
Նորք-Մարաշ	արական	1	1	1	1	0	0	4	8
	իգական	0	1	1	1	1	0	4	
Նուբարաշեն	արական	1	1	1	1	0	0	4	8
	իգական	1	1	1	1	0	0	4	
Շենգավիթ	արական	7	10	7	8	6	3	41	91
	իգական	7	11	9	11	7	5	50	
Քանաքեռ-Զեյթուն	արական	4	5	4	5	3	2	23	50
	իգական	4	6	5	5	4	3	27	
Ընդամենը	արական	58	76	55	66	43	27	325	708
	իգական	56	85	70	80	55	37	383	
Ընդամենը		114	161	125	146	98	64	708	

Աղյուսակ 20. Ընտրանքում մարզային բաշխվածությունն ըստ «Մեռ» և «Տարիք» ենթաստրատաների

Մարզ	Մեռ	Տարիք												Ըղամենք		Ընդամենը
		18-24		25-34		35-44		45-54		55-64		65-74		Ըղամենք	Ընդամենը	
		Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք			
Արագածոտն	արական	7	2	7	2	6	2	7	2	3	1	2	1	32	10	84
	իգական	7	2	7	2	6	2	6	2	3	1	3	1	32	10	
Արարատ	արական	13	5	13	6	10	4	13	5	6	3	4	1	59	24	170
	իգական	12	5	13	6	11	4	13	6	6	3	6	2	61	26	
Արմավիր	արական	12	6	12	7	10	5	12	6	5	4	3	2	54	30	173
	իգական	12	6	12	8	10	5	12	7	5	4	5	3	56	33	
Գեղարքունիք	արական	11	5	11	6	9	4	10	5	4	3	3	2	48	25	144
	իգական	10	5	10	5	9	4	9	6	4	3	4	2	46	25	
Լոռի	արական	7	10	8	12	6	7	7	10	3	6	3	4	34	49	174
	իգական	7	10	7	11	6	9	7	13	4	8	4	5	35	56	
Կոտայք	արական	8	10	9	13	6	7	8	10	3	6	3	3	37	49	176
	իգական	8	10	8	12	7	8	8	12	4	6	3	4	38	52	
Շիրակ	արական	8	10	7	11	6	9	7	10	3	6	2	4	33	50	172
	իգական	7	11	7	11	6	9	7	12	3	8	3	5	33	56	
Սյունիք	արական	3	6	3	7	3	5	3	7	1	4	1	2	14	31	92
	իգական	3	6	3	7	2	5	3	7	1	5	2	3	14	33	
Վայոց Ձոր	արական	3	1	3	1	2	1	2	1	1	1	1	1	12	6	37
	իգական	3	2	3	1	2	1	2	2	1	1	1	0	12	7	
Տավուշ	արական	5	3	5	4	4	2	5	3	2	2	2	1	23	15	79
	իգական	4	3	5	4	4	2	5	4	3	2	3	2	24	17	
Ընդամենը	արական	77	58	78	69	62	46	74	59	31	36	24	21	346	289	1301
	իգական	73	60	75	67	63	49	72	71	34	41	34	27	351	315	
	Ընդամենը	150	118	153	136	125	95	146	130	65	77	58	48	697	604	

Ընտրանքավորում

Հարցվողներն ընտրվում են պատահական սկզբունքով՝ ամեն տնային տնտեսությունից ընդամենը մեկ հոգի: Հարցումներն անց են կացվում «Այ Փի Էս Մի» Քաղաքական և սոցիոլոգիական Խորհրդատվությունների ինստիտուտի կողմից՝ ընկերության կողմից մշակված պատահական ընտրանքավորման սկզբունքով: Եթե տվյալ պատահական ընտրված տնային տնտեսությունում լրացել է որոշ տարիքային խմբերի և/կամ սեռի քվոտաները, տվյալ տնային տնտեսության որևէ անդամի հետ այլևս հարցում չի անցակցվի:

Մարզային ընտրանքավորում

Մարզերում գյուղերի ընտրության ժամանակ գյուղերն ըստ բնակչության թվի բաժանվել են պայմանականորեն 3 տիպի՝

1. փոքր գյուղ՝ մինչև 700 բնակիչ ունեցող գյուղ
2. միջին գյուղ՝ 701-2000 բնակիչ ունեցող գյուղ
3. մեծ գյուղ՝ 2001 և ավել բնակիչ ունեցող գյուղ

Մարզում բնակչության բաշխման լրացուցիչ չափանիշ է կիրառվել նաև ըստ սահմանամերձ¹² և ոչ սահմանամերձ բնակչության վայրի, ինչպես նաև ըստ մարզում առկա էկոլոգիական խնդիրներ ունեցող բնակավայրերի (ասենք, օրինակ, հանքարդյունաբերական ընկերությունների կողմից շահագործվող հանքերին մոտ գտնվող, ատոմակայանին մոտ գտնվող և այլն): Սահմանամերձ բնակավայրերի բնակչության թվաքանակն ընդհանուր մարզի բնակչության թվի մեջ հաշվի է

¹² Սահմանամերձ բնակավայրերի ցանկը ձեռք է բերվել ՀՀ ԱԺ-ի պաշտոնական կայքից: <http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=2410&lang=arm> (2010թ. նոյեմբերի 15-ի դրությամբ)

առնվել տվյալ մարզային ընտրանքի հաշվարկի մեջ:

Գյուղերի ցանկից պատահական սկզբունքով որոշակի քայլի կիրառությամբ ընտրվել են գյուղերը: Իսկ քաղաքային համայնքների դեպքում առաջին հերթին ընտրվել է այդ չափանիշին համապատասխան բնակավայր, այնուհետև՝ այլ քաղաքային համայնքները:

Աղյուսակ 22. Ընտրված գյուղերի ցանկ

Մարզ	Գյուղի տեսակ		
	Փոքր	Միջին	Մեծ
Արագածոտն	գ. Ղազարավան	գ. Բերքառատ	գ. Կարբի
	գ. Սուսեր	գ. Հարթավան	գ. Փարփի
Արարատ		գ. Բերդիկ	գ. Ավշար
		գ. Չանգակատուն*	գ. Գեղանիստ
		գ. Նարեկ	գ. Մխյան
			գ. Ազատավան
			գ. Նոր Կյանք
			գ. Վերին Արտաշատ
Արմավիր		գ. Ղորս	գ. Արմավիր
		գ. Մարգարա*	գ. Գետաշեն
		գ. Վարդանաշեն	գ. Խորոնք
			գ. Սրգաշատ
			գ. Ջանֆիղա
Գեղարքունիք	գ. Լճավան	գ. Թթուջուր*	գ. Երանոս
			գ. Լանջաղբյուր
			գ. Լճաշեն
			գ. Ծովազարդ
			գ. Վաղաշեն
Լոռի	գ. Ծաթեր	գ. Ծաղկաբեր	գ. Գյուլագարակ
		գ. Սարամեջ	գ. Դարպաս
Կոտայք		գ. Զովք	գ. Արգել (Լուսակերտ)
		գ. Նոր Արտամետ	գ. Լեռնանիստ
			գ. Նորգեղ
			գ. Քաղսի
Շիրակ	գ. Լուսաղբյուր	գ. Մարմաշեն	գ. Մեծ Մանթաշ
		գ. Իսահակյան	
		գ. Քարաբերդ	
Սյունիք	գ. Հայիձոր	գ. Կոռնիձոր*	
	գ. Տանձավեր		
Վայոց Ձոր	գ. Արին	գ. Գետափ	
		գ. Չիվա*	
Տավուշ	գ. Լուսահովիտ	գ. Թեղուտ	գ. Աչաջուր*
		գ. Ներքին Կարմիրաղբյուր*	գ. Գետահովիտ

Նշում՝ *սահմանամերձ բնակավայր, ** Էկոլոգիական խնդիր ունեցող համայնք

Գյուղական համայնքների ժամանակ ամեն մարզում ընտրվել է առնվազն 3 գյուղ, որոշ մարզերի դեպքում այս թվաքանակը հասել է 9-ի (տե՛ս աղյուսակ 22): Քաղաքային համայնքների ընտրության ժամանակ առաջին հերթին ըտրվել է մարզկենտրոնը, այնուհետև՝ մինչև 3 քաղաք՝ կախված տվյալ համայնքում բնակչության թվաքանակից (տե՛ս աղյուսակ 23):

Աղյուսակ 23. Ընտրված քաղաքների ցանկ

Մարզ	Քաղաքներ	
	Մարզկենտրոն	Այլ քաղաք
Արագածոտն	ք.Աշտարակ	
Արարատ	ք.Արտաշատ	ք.Արարատ
		ք.Մասիս
Արմավիր	ք.Արմավիր	ք.Վաղարշապատ (Էջմիածին)
		ք.Մեծամոր**
Գեղարքունիք	ք.Գավառ	ք.Ճամբարակ*
		ք.Մարտունի
Լոռի	ք.Վանաձոր	ք.Այվերդի**
		ք.Ստեփանավան
		ք.Տաշիր
Կոտայք	ք.Հրազդան	ք.Արուսյան
		ք.Եղվարդ
		ք.Չարենցավան
Շիրակ	ք. Գյումրի	ք.Արթիկ
		ք.Մարալիկ
Սյունիք	ք. Կապան*	ք. Գորիս*
		ք. Քաջարան***
Վայոց Ձոր	ք.Եղեգնաձոր	
Տավուշ	ք.Իջևան	ք.Բերդ

Նշում՝ *սահմանամերձ բնակավայր, ** Էկոլոգիական խնդիր ունեցող բնակավայր, *** Էկոլոգիական խնդիր ունեցող և սահմանամերձ համարվող բնակավայր

Հետազոտության դաշտային աշխատանքներից հետո, հարցաթերթում առկա թերությունները շտկելու նպատակով իրականացվել է ընտրանքի համալրում (oversampling) և ընտրանքում ներգրավվել է Արագածոտնի մարզի Թալին քաղաքը (15 հարցում) և կից Լեռնարոտ գյուղը (9 հարցում), որոնք համարվում են սողանքային շրջաններ: Այս բնակավայրերում իրականացվել է լրացուցիչ 24 հարցում, որի հետևանքով ընտրանքի ծավալը կազմել է 2033: Արագածոտն մարզի բաշխումը ներկայացված է աղյուսակ 24-ում:

Աղյուսակ 24. Ընտրանքում Արագածոտն մարզի բաշխումն ըստ համայնքների

Մարզ	Սեռ	Տարիք												Ըղամենք		Ընդամենը
		18-24		25-34		35-44		45-54		55-64		65-74				
		Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղաք	
Արագածոտն	արական	8	4	8	4	7	3	8	3	3	2	2	2	36	18	108
	իգական	8	3	8	4	7	3	7	3	4	2	3	2	37	17	

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Քանակական հետազոտության հարցաթերթ

Հարցազրուցավարի կողմ

Մուտքագրման համար

Բնակավայրի կողմ

Ամսաթիվ ____/11/10 Հարցման ժամեր ____:____/____:____

Հարցաթերթ № _____ ԿՈՆ-(1)

Հայաստանում կյանքի որակի ցուցանիշ

Բարի օր/երեկո: Իմ անունն է _____: Ես ներկայացնում եմ «Այ Փի Էս Մի» Քաղաքական և սոցիոլոգիական խորհրդատվությունների ինստիտուտը: Մեր ընկերությունը տարբեր թեմաներով հետազոտություններ է անցկացնում: Այսօր մեզ առավելապես հետաքրքրում է Ձեր կարծիքը Հայաստանում կյանքի որակի (կենսակերպի) վերաբերյալ: Ձեր մասնակցությունն այս հետազոտությանը և Ձեր պատասխանները շատ կարևոր են մեզ համար, այդ իսկ պատճառով խնդրում ենք տրամադրել ժամանակ և լինել անկեղծ: Հարցազրույցը կունֆիդենցիալ է: Ձեր անունը ոչ մի տեղ չի նշվելու: Հետազոտության արդյունքները ներկայացվելու են միայն ընդհանրացված տեսքով: Նախապես շնորհակալություն ենք հայտնում Ձեզ ժամանակ տրամադրելու և անկեղծության համար:

Բաժին Ա. Սոցիալ-ժողովրդագրական հարցեր

N	D1	D2	D3	D4	D5
	SS անդամներ	Մեռ	Տարիք	Կրթություն	Զբաղվածություն
	<ol style="list-style-type: none"> Հարցվող Ամուսին/կին Դուստր/որդի Մայր/հայր Քույր/եղբայր Տատ/պապ Հարս/վեեսա Թոռ Սկեսուր/սկեսուրայր Զոքան/աներ Հարցվողի այլ ազգական Հարցվողի հետ ազգակցական կապ չունեցող անձիք 	<ol style="list-style-type: none"> Ար Բզ 		<ol style="list-style-type: none"> Կրթություն չունի Թերի միջնակարգ (էթե կիսատ է թողել ուսումը դպրոցում, կամ ներկայումս սովորում է 1-9 դասարաններում) Միջնակարգ (10-12 դասարաններում ներկայումս սովորողներ, կամ արդեն ավարտած մարդիկ) Միջին մասնագիտական Թերի բարձրագույն (մինչև 2-րդ կուրս ներառյալ) Բակալավրիատ Մագիստրատուրա և 5-ամյա բարձրագույն Ասպիրանտուրա 	<ol style="list-style-type: none"> Պետական հատված-դեկավար Պետական հատված-ծառայող մասնագետ Պետական հատված-սպասարկող անձնակազմ Մասնավոր հատված-դեկավար Մասնավոր հատված-ծառայող մասնագետ Մասնավոր հատված-սպասարկող անձնակազմ Մասնագիտական ծառայություններ մատուցող ՀԿ/ՄԿ Ինքնազբաղված/ձեռնարկատեր Շինարար/բանվոր Ֆերմեր/գյուղատնտես Արտագնա աշխատող Տնային տնտեսուհի Ուսանող Դպրոցական Մանկապարտեզի սան Թոշակառու Գործազուրկ Զինծառայող Այլ
1	1				
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					
13					
14					
15					

Բաժին Բ. Տնտեսական ոլորտ

- Q1.(E) [Ցույց տալ **ՔԱՐՏ 1-ը**] Ասացե՛ք, խնդրեմ, որտեղի՞ց եք **Դուք/Ձեր** ընտանիքի անդամները սովորաբար **ձեռք բերում հետևյալ ապրանքատեսակները** (1. համայնքից, 2. այլ համայնքից, 3. մարզկենտրոնից, 4. Երևանից/այլ քաղաքից, 5. արտերկրից, 6. ծանոթից, 7. ընտանիքն է պատրաստում): *77. ձեռք չեմ բերում (Q5.(E), Q7.(I), Q8.(S) հարցերը չկարդայ), 99. դ. պ. (չկարդայ)*
- Q2.(E) **Որքա՞ն հաճախ են լինում հետևյալ ապրանքատեսակները Ձեր բնակավայրի վաճառակետերում** (1. երբեք, 2. հազվադեպ, 3. հաճախ, 4. միշտ): *99. դ. պ. (չկարդայ)*
- Q3.(M) **Նշեք, խնդրեմ, որքանո՞վ են Ձեզ/ Ձեր ընտանիքի համար մատչելի այդ ապրանքատեսակներից յուրաքանչյուրը Ձեր համայնքում** (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է): *99. դ. պ. (չկարդայ)*
- Q4.(E) [Ցույց տալ **ՔԱՐՏ 2-ը**] **Սովորաբար ի՞նչ թարմության են լինում հետևյալ ապրանքատեսակները Ձեր բնակավայրի վաճառակետերում** (1. բոլորովին ոչ թարմ, ոչ պիտանի, 2. ժամկետանց, մեկ շաբաթից ավել, 3. ժամկետանց մինչև մեկ շաբաթ, 4. հիմնականում պիտանելիության ժամկետում, 5. շատ թարմ): *99. դ. պ. (չկարդայ)*
- Q5.(E) [Ցույց տալ **ՔԱՐՏ 3-ը**] **Ի՞նչ հաճախականությամբ եք Դուք/ Ձեր ընտանիքը օգտագործում հետևյալ ապրանքատեսակները մեկ ամսվա ընթացքում** (1. ամեն օր, 2. շաբաթական մի քանի անգամ, 3. շաբաթը մեկ, 4. երկու շաբաթը մեկ, 5. երեք շաբաթը մեկ, 6. ամիսը մեկ, 7. անկանոն, 8. չենք օգտագործում): *99.դ.պ.(չկարդայ)*
- Q6.(S) **Որքանո՞վ է Ձեզ գոհացնում նշված ապրանքների տեսականու բազմազանությունը Ձեր բնակավայրի վաճառակետերում** (1. բոլորովին չի գոհացնում, 2. ավելի շուտ չի գոհացնում, 3. ավելի շուտ գոհացնում է, 4. լիովին գոհացնում է): *99.դ.պ.(չկարդայ)*
- Q7.(I) **Գնահատե՛ք, խնդրեմ, հետևյալ ապրանքատեսակների կարևորությունը Ձեզ համար** (1. բոլորովին կարևոր չէ (**Q8.(S) չկարդայ**), 2. ավելի շուտ կարևոր չէ (**Q8.(S) չկարդայ**), 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է): *99.դ.պ.(չկարդայ)*
- Q8.(S) **Իսկ որքանո՞վ է Ձեզ գոհացնում Ձեր կողմից սպառվող/օգտագործվող ապրանքատեսակների որակը** (1. բոլորովին չի գոհացնում, 2. ավելի շուտ չի գոհացնում, 3. ավելի շուտ գոհացնում է, 4. լիովին գոհացնում է): *99.դ.պ.(չկարդայ)*

N	Ապրանքատեսակ	Q1.(E)	Q2.(E)	Q3.(M)	Q4.(E)	Q5.(E)	Q6.(S)	Q7.(I)	Q8.(S)
1	Հաց, հացամթերք								
2	Միս								
3	Թռչնամիս								
4	Մսամթերք								
5	Ձկներեն/ծովամթերք								
6	Միրգ, բանջարեղեն								
7	Կաթնամթերք								
8	Ձու								
9	Հրուշակեղեն, քաղցրավենիք								
10	Մակարոնեղեն/հատիկավոր								
11	Ընդեղեն (չարագ)								
12	Շոկոլադ								
13	Թեյ, սուրճ								
14	Ալկոհոլային խմիչքներ								
15	Ծխախոտ								
16	Ոչ-ալկոհոլային խմիչքներ								
17	Տնտեսական ապրանքներ								
18	Հիգիենայի, կոսմետիկ պարագաներ								

Q9.(I) [Ցույց տալ **ՔԱՐՏ 4-ը**] **Դասակարգե՛ք, խնդրեմ, նշված գործոնները Ձեզ համար դրանց կարևորության տեսանկյունից** (1. ամենակարևոր, 5. ամենաքիչ կարևոր):

Q10.(S) **Նշե՛ք, խնդրեմ, թե որքանով եք Դուք բավարարված...** (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. լիովին բավարարված եմ)

N	Բավարարվածություն սննդամթերքից	Q9.(I)	Q10.(S)				
1	Ձեր սնվելու հաճախականություն	99	1	2	3	4	99
2	Ձեր կողմից օգտագործվող սննդամթերքի թարմություն	99	1	2	3	4	99
3	Ձեր կողմից սվորաբար գնվող սննդամթերքի հասանելիություն	99	1	2	3	4	99
4	Ձեր կողմից սվորաբար սպառվող սննդամթերքի մատչելիություն	99	1	2	3	4	99
5	Ձեր կողմից սվորաբար սպառվող սննդամթերքի որակ	99	1	2	3	4	99

Q11.(E) [Ցույց տալ **ՔԱՐՏ 5-ը**] **Ասացե՛ք, խնդրեմ, որքանով է ապահովված Ձեր համայնքը հետևյալ պայմաններով** (1. բոլորովին ապահովված չէ, 2. ապահովված է, սակայն չի գործում, 3. մասամբ ապահովված է, սակայն որակյալ չէ, 4. մասամբ ապահովված է և որակյալ է, 5. լիովին ապահովված է, սակայն որակյալ չէ, 6. լիովին ապահովված է և որակյալ է):

99.դ.պ.(չկարդայ)

N	Ենթակառուցվածք/պայմաններ	Q11.(E)
1	Էլեկտրականություն	99
2	Գազամատակարարում	99
3	Խմելու ջուր	99
4	Ոռոգման ջուր	99
5	Կապ/հեռախոս	99
6	Բջջային կապ	99
7	Ինտերնետ	99
8	Գլխավոր/այլ քաղաքի հետ կապող ճանապարհներ	99
9	Գյուղամիջյան ճանապարհներ/փողոցներ	99
10	Հասարակական ներհամայնքային/քաղաքային տրանսպորտ	99
11	Հասարակական միջհամայնքային /միջքաղաքային տրանսպորտ	99
12	Հեռուստահեռարձակում	99
13	Աղբահանություն	99
14	Ճանապարհային լուսավորություն	99
15	Գյուղատնտեսական տեխնիկա (Երևանում չկարդայ)	99
16	Գյուղմթերքի իրացման կետեր (Երևանում չկարդայ)	99
17	Պարարտանյութերի տրամադրում (Երևանում չկարդայ)	99

Q12.(E) **Նշե՛ք, խնդրեմ, որքա՞ն հաճախ է Ձեր համայնքում աղբահանություն իրականացվում:**

- | | |
|------------------------------|-------------------------------|
| 1. Ընդհանրապես չի կատարվում | 4. Երկու շաբաթը մեկ |
| 2. Շատ անկանոն | 5. Շաբաթը մեկ կամ երկու անգամ |
| 3. Ամիսը մեկ կամ երկու անգամ | 6. Ամեն օր |

99.դ.պ.(չկարդայ)

Q13.(M) [Հարցազրուցավարին] **Նշե՛ք բնակարանի տեսակը: Հարցնե՛լ միայն անհրաժեշտության դեպքում:**

1. Բնակարան բազմահարկ շենքում (6 և ավելի հարկանի)
2. Բնակարան 5 և ավելի ցածրահարկ շենքում
3. Մեկ և ավել հարկանի սեփական տուն, որտեղ մեկ ընտանիք է բնակվում
4. Մեկ և ավել հարկանի սեփական տուն, որտեղ երկու և ավել ընտանիք է բնակվում
5. Հանրակացարան
6. Տնակ/կացարան (домик)

Q14.(M) **Նշե՛ք, խնդրեմ, թե քանի բնակելի սենյակ ունի Ձեր բնակարանը/կացարանը (բնակելի սենյակներ են համարվում ճաշասենյակը և ննջասենյակը):** _____

Q15.(M) **Նշե՛ք, խնդրեմ, թե գույքի և/կամ կենցաղային տեխնիկայի նշված տեսակներից որոնք Դուք ունեք ներկայումս:**
99.դ.պ.(չկարդայ)

Q16.(E) [Ցույց տալ **ՔԱՄՏ 1-ը**] Ասացե՛ք, խնդրեմ, որտեղի՞ց եք **Դուք/Ձեր** ընտանիքը **ձեռք բերում/ձեռք կրերեք** հետևյալ գույքը **և/կամ կենցաղային իրերն անհրաժեշտության դեպքում**: (1. համայնքից, 2. այլ համայնքից, 3. մարզկենտրոնից, 4. Երևանից/այլ քաղաքից, 5. արտերկրից, 6. ծանոթից, 7. ընտանիքն է պատրաստում) *77. ձեռք չեմ բերել և չեմ պատրաստվում, 99. դ. պ. (չկարդայ)*

Q17.(M) (Հարցնել Q15 (M)-ում նշված տարբերակների համար) **Նշե՛ք, խնդրեմ, ե՞րբ եք վերջին անգամ ձեռք բերել գույքի նշված տեսակները**: (1. վերջին մեկ տարվա ընթացքում, 2. նախորդ հինգ տարիների ընթացքում, 3. նախորդ 6-10 տարվա ընթացքում, 4. տասը և ավել տարի առաջ) *99. դ. պ. (չկարդայ)*

Q18.(M) **Իսկ Ձեզ/Ձեր** ընտանիքի համար **որքանո՞վ են մատչելի գույքի նշված տեսակներից յուրաքանչյուրը** (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է) *99. դ. պ. (չկարդայ)*

Q19.(I) **Գնահատե՛ք, խնդրեմ, թե որքանով է կարևոր Ձեզ համար գույքի հետևյալ տեսակների առկայությունը** (1. բոլորովին կարևոր չէ (**Q20.(S) չկարդայ**), 2. ավելի շուտ կարևոր չէ (**Q20.(S) չկարդայ**), 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է): *99. դ. պ. (չկարդայ) (Հարցնել բոլոր տարբերակների համար)*

Q20.(S) (Հարցնել Q15 (M)-ում նշված տարբերակների համար) **Իսկ որքանո՞վ է Ձեզ գոհացնում Ձեր ունեցած գույքի և/կամ կենցաղային տեխնիկայի որակը** (1. բոլորովին չի գոհացնում, 2. ավելի շուտ չի գոհացնում, 3. ավելի շուտ գոհացնում է, 4. լիովին գոհացնում է):

N	Գույք/կենցաղային տեխնիկա	Առկա է	Առկա չէ	Q16.(M)	Q17.(M)	Q18.(M)	Q19.(I)	Q20.(S)
1	Շեռուստացույց	1	2	77 / 99				
2	Սառնարան	1	2	77 / 99				
3	Լվացքի մեքենա	1	2	77 / 99				
4	Փոշեկուլ	1	2	77 / 99				
5	Աուդիո-վիդեո սարքավորումներ	1	2	77 / 99				
6	Ջեռուցման կաթսա	1	2	77 / 99				
7	Օդորակիչ	1	2	77 / 99				
8	Խոհանոցային սարքեր (էլեկտրական)	1	2	77 / 99				
9	Համակարգիչ	1	2	77 / 99				
10	Բջջային հեռախոս	1	2	77 / 99				
11	Կոշտ կահույք (օր. պահարան)	1	2	77 / 99				
12	Փափուկ կահույք (օր. բազմոց)	1	2	77 / 99				
13	Ավտոմեքենա	1	2	77 / 99				

Q21.(M) **Ասացե՛ք, խնդրեմ, թե երբ եք վերջին անգամ վերանորոգել Ձեր բնակարանը**: (Նշել տարեթիվը) *77. չի վերանորոգվել, 99. դ. պ. (չկարդայ) (Կարդայ բոլոր տարբերակները)*

N	Վերանորոգում	Տարեթիվ	
1	Կապիտալ վերանորոգում	77	99
2	Կոսմետիկ վերանորոգում	77	99
3	Մասնակի վերանորոգում	77	99

Q22.(I) **Որքանո՞վ է Ձեզ համար կարևոր Ձեր կացարանի հետևյալ պայմաններից յուրաքանչյուրը** (1. բոլորովին կարևոր չէ (**Q23.(S) չկարդայ**), 2. ավելի շուտ կարևոր չէ (**Q23.(S) չկարդայ**), 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է): *99. դ. պ. (չկարդայ)*

Q23.(S) **Նշեք, խնդրեմ, թե որքանով եք Դուք բավարարված...** (1.բոլորովին բավարարված չեմ, 2.ավելի շուտ բավարարված չեմ, 3.ավելի շուտ բավարարված եմ, 4.լիովին բավարարված եմ): *99.դ.պ.(չկարդայ)*

N	Բավարարվածություն բնակարանային պայմաններով	Q22.(I)	Q23.(S)				
1	Ձեր բնակարանի/կացարանի մեծություն	99	1	2	3	4	99
2	Ձեր բնակարանի/կացարանի հարմարավետություն (комфорт)	99	1	2	3	4	99
3	Ձեր բնակարանի ֆիզիկական ներքին հարդարման վիճակ	99	1	2	3	4	99
4	Ձեր բնակարանի/կացարանի սանհանգույցի վիճակ	99	1	2	3	4	99
5	Ձեր բնակարանի/կացարանի խոհանոցային հարմարություններ	99	1	2	3	4	99
6	Ձեր բնակարանի/կացարանի ջեռուցման պայմաններ	99	1	2	3	4	99
7	Ձեր բնակարանի/կացարանի կոմունալ-կենցաղային հարմարություններ	99	1	2	3	4	99
8	Կենցաղային տեխնիկայով և իրերով հագեցվածություն	99	1	2	3	4	99
9	Բնակարանի կահավորում	99	1	2	3	4	99

Q24.(M) Միջինում որքա՞ն գումար է տրամադրում Ձեր ընտանիքը հետևյալ ծախսերին (միջակայքային պատասխան ստանալիս նշել ավելի մեծ թիվը): 88. հր. պ. (չկարդայ) 99. դ. պ. (չկարդայ)

Ամսական

N	Ծախսեր	Q24.(M)	
1	Սնունդ	_____ դր.	88 99
2	Խմիչք	_____ դր.	88 99
3	Տրանսպորտ (նաև մեքենայի ծախս)	_____ դր.	88 99
4	Հիգիենայի/կոսմետիկայի պարագաներ	_____ դր.	88 99
5	Արդուզարդ/թանկարժեք իրեր	_____ դր.	88 99
6	Տնտեսական ապրանքներ	_____ դր.	88 99
7	Կոմունալ ծառայություններ	_____ դր.	88 99
8	Բնակարանի վարձ/հողի հարկ	_____ դր.	88 99
9	Հանգիստ, ժամանց	_____ դր.	88 99
10	Այլ ծառայություններ (վարսավիրանոց, մարզասրահ, այլ)	_____ դր.	88 99

Տարեկան

11	Բնակարանի/կացարանի վերանորոգում (կապիտալ կառուցումներ)	_____ դր.	88 99
12	Գյուղատնտեսական ծախսեր (Երևանի համար չկարդայ)	_____ դր.	88 99
13	Կրթություն	_____ դր.	88 99
14	Հագուստ, կոշիկ	_____ դր.	88 99
15	Նվերներ	_____ դր.	88 99
16	Ընտանեկան միջոցառումներ	_____ դր.	88 99

Բաժին Գ. Սոցիալական ոլորտ

Գ1.Զբաղվածություն

Q25.(D) Ասացե՛ք, ինչպե՞ս, ներկայումս Դուք որևէ վճարովի/եկամուտ բերող գործունեություն իրականացնում եք:

1. Այո՝ (անցում Q28.(D)-ին) 2. Ո՛չ

Q26.(E) Իսկ որքա՞ն ժամանակ է, որ աշխատանք չունեք:

_____թ.-ից (նշել տարեթիվը) 77. աշխատանք երբևէ չեմ ունեցել (Q29.(D) չկարդայ)

Q27.(E) [Ցույց տալ ԲԱՐՏ 6-ը] Նշված դաստորություններից ո՞րն է առավել համապատասխանում Ձեր ներկայիս կարգավիճակին.

1. Չեմ աշխատում և աշխատանք եմ փնտրում
2. Աշխատելու ցանկություն ունեմ, սակայն աշխատանք չեմ փնտրում
3. Չեմ աշխատում և աշխատանք չեմ փնտրում
4. Չեմ աշխատում՝ առողջական խնդիրներից ելնելով
5. Այլ (նշել) _____ 99. դ. պ. (չկարդայ)

Q28.(D) Նշե՛ք, ինչպե՞ս, թե ինչ մասնագիտություն (որակավորում) ունեք:

_____ 77. ոչ մի, (Q30.(E)-ը չկարդայ)

Q29.(D) Քանի՞ տարվա աշխատանքային փորձ ունեք: (նշել տարիների քանակը)

1. Ձեր մասնագիտությամբ _____
2. Այլ մասնագիտությամբ _____ 99. դ. պ. (չկարդայ)

Q30.(E) Ըստ Ձեզ՝ որքա՞ն հեշտությամբ է հնարավոր Ձեր մասնագիտությամբ աշխատանք գտնել Ձեր համայնքում (Երևանում համայնքը նշանակում է ամբողջ Երևանը):

Q31.(E) Ընդհանուր առմամբ, որքա՞ն հեշտությամբ է հնարավոր աշխատանք գտնել Ձեր համայնքում:

Q	Աշխատել	Բոլորովին հնարավոր չէ	Ավելի շուտ հնարավոր չէ	Ավելի շուտ հնարավոր է	Լիովին հնարավոր է
Q30	Մասնագիտությամբ	1	2	3	4
Q31	Ընդհանուր առմամբ	1	2	3	4

Q32.(E) Ասացե՛ք, խնդրեմ, երբևէ փորձե՛լ էք գործարար նախաձեռնություն իրականացնել:

1. Չեմ փորձել (*անցում Q34.(M)-ն*)
2. Փորձել եմ, դեռ արդյունքներ չկան (*անցում Q34.(M)-ն*)
3. Փորձել եմ և նախաձեռնությունը ձախողվել է (չի հաջողվել)
4. Փորձել եմ և նախաձեռնությունը հաջողվել է (*անցում Q34.(M)-ն*)
5. Ցանկություն ունեմ գործ դնելու (*անցում Q34.(M)-ն*)

99. դ. պ. (չկարդայ)

Q33.(E) Իսկ որո՞նք են անհաջողության պատճառները: _____

99. դ. պ. (չկարդայ)

Q34.(M)-Q38.(S) հարցերը կարդայ միայն նրանց համար, ովքեր Q25.(D)-ում նշել են «1. Այո՛» (եկամտաբեր գործունեություն են իրականացնում)

Q34.(M) [Ցույց տալ **ՔՄՄՏ7-ը**] Նշե՛ք, խնդրեմ, Ձեր հիմնական գործունեության բնագավառը.

99. դ. պ. (չկարդայ)

Q35.(M) Որտե՞ղ է գտնվում Ձեր հիմնական աշխատավայրը:

1. Ձեր համայնքում
2. Մոտակա այլ համայնքում
3. Հեռավոր այլ համայնքում
4. Սարգկենտրոնում
5. Երևանում/այլ քաղաքում
6. Արտերկրում

Q36.(M) Իսկ ի՞նչ բնույթի է Ձեր աշխատանքը:

1. Գրասենյակային աշխատող (հիմնական աշխատատեղով)
2. (Մասնագիտական) ծառայություններ մատուցող (ազատ գրաֆիկով)
3. Գործատու, ԱԶ (բիզնես, առևտուր, արվեստագետ/արհեստավոր և այլն)

Q37.(I) Գնահատե՛ք, խնդրեմ, թե որքանով է կարևոր Ձեր աշխատանքի համար հետևյալ գործոններից յուրաքանչյուրը

(1. բոլորովին կարևոր չէ (*Q38.(S) չկարդայ*), 2. ավելի շուտ կարևոր չէ (*Q38.(S) չկարդայ*), 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է: 99. դ. պ. (չկարդայ)

Q38.(S) Նշե՛ք, խնդրեմ, թե որքանով եք Դուք բավարարված... (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. լիովին բավարարված եմ):

N	1.Գրասենյակային աշխատանք (կարդայ, եթե Q36.(M)-ում նշվել է 1)	Q37.(I)	Q38.(S)
1	Ձեր նկատմամբ ղեկավարության վերաբերմունք	99	99
2	Աշխատավայրում Ձեզ բնօրինակ լրացուցիչ արտոնություններ/սոցալ փաթեթ	99	99
3	Աշխատակիցների հետ հարաբերություններ	99	99
4	Աշխատանքի ժամային գրաֆիկ	99	99
5	Առաջխաղացման հնարավորություններ	99	99
6	Հավելավճար/պարգևավճար (бонус)	99	99
7	Աշխատանքային պայմանների հարմարավետություն (ֆիզ. միջավայր, անվտանգություն, հարմարավետություն)	99	99
8	Աշխատանքի և անձնական կյանքի համատեղելիություն	99	99
9	Մասնագիտական աճի և ուսուցման հնարավորություններ (միայն մասն. ունեցողներին)	99	99
10	Ձեր/րնկերության արտադրանքի/ծառայության որակ	99	99
11	Ձեր կատարած աշխատանքի տեսակ	99	99
12	Հիմնական աշխատավարձ/եկամուտներ	99	99
13	Աշխատանքի/գործունեության կայունության երաշխիքներ	99	99
N	2.Մասնագիտական ծառայությունների մատուցող (կարդայ, եթե Q36.(M)-ում նշվել է 2)	Q37.(I)	Q38.(S)
1	Աշխատավարձ/եկամուտներ	99	99
2	Ձեր արտադրանքի/ծառայության որակ	99	99
3	Ձեր կատարած աշխատանքի տեսակ	99	99
4	Մասնագիտական աճի հնարավորություն (միայն մասն. ունեցողներին)	99	99
5	Աշխատանքի կայունության երաշխիքներ	99	99
N	3.Գործատու/ԱԶ (կարդայ, եթե Q36.(M)-ում նշվել է 3)	Q37.(I)	Q38.(S)
1	Աշխատավարձ/եկամուտ	99	99
2	Ձեր կատարած աշխատանքի տեսակ	99	99
3	Ձեր/րնկերության արտադրանքի/ծառայության որակ	99	99
4	Գործունեության կայունության երաշխիքներ	99	99

Q39.(E) [Յույց տալ **ՔԱՐՏ 8-ը**] Նշվածներից ո՞րն է ավելի շատ բնութագրում Ձեր ընտանիքի ֆինանսական վիճակը:

1. Մենք բավարար գումար չունենք նույնիսկ սննդի համար
 2. Մենք բավարար գումար ունենք միայն սննդի համար
 3. Մենք բավարար գումար ունենք սննդի համար և կարող ենք վճարել կոմունալ ծառայությունների համար
 4. Մենք կարող ենք գնել միջին որակի իրեր (կենցաղային պարագաներ, հագուստ, կոշիկ) և օգտվել որոշակի լրացուցիչ ծառայություններից (մարզասրահ, լվացքատուն և այլն)
 5. Մենք բավարար գումար ունենք կենցաղային տեխնիկա և գույք ձեռքբերելու համար
 6. Մենք կարող ենք ձեռքբերել գրեթե ամեն ինչ, ինչ ցանկանանք
88. հր. պատ. (չկարդայ), 99. դ. պ. (չկարդայ)

Q40.(E) [Յույց տալ **ՔԱՐՏ 9-ը**] Ասացե՛ք, ինչդեմ, որո՞նք են ընտանիքի եկամտի հիմնական աղբյուրները:

Q41.(E) [Յույց տալ **ՔԱՐՏ 9-ը**] Դասակարգե՛ք, ինչդեմ, Ձեր նշած աղբյուրներն՝ ըստ կարևորության նվազման (սկսած ամենաշատ կարևորից մինչև քիչ կարևորը): 88. հր. պատ., 99. դ. պ. (չկարդայ)

N	Եկամտի աղբյուրներ	Q40.(E)	Q41.(E)
1	Հիմնական աշխատավարձ	1	
2	Վճարովի այլ աշխատանք	2	
3	Պարտք/վարկ/գրավատուն	3	
4	Արժեթղթեր/բաժնետոմսեր	4	
5	Դրամական փոխանցումներ/տրանսֆերներ արտասահմանից	5	
6	Առևտուր	6	
7	Սեփականության վարձակալություն	7	
8	Թոշակ/նպաստ	8	
9	Խաղարկություններ/շահումներ	9	
10	Գույքների, այլ արժանքների վաճառք	10	
11	Այլ աղբյուրներ	11	
88	Հր. պատ (չկարդայ)	88	88
99	Դ. պ. (չկարդայ)	99	99

Q42.(E) Գնահատե՛ք, ինչդեմ, Ձեր ընտանիքի եկամուտների փոփոխությունը վերջին 3 տարիների ընթացքում:

1. Կտրուկ նվազել են
 2. Նվազել են
 3. Մնացել են նույնը
 4. Կայուն աճել են
 5. Կտրուկ աճել են
88. հր. պատ. (չկարդայ), 99. դ. պ. (չկարդայ)

Q43.(E) [Յույց տալ **ՔԱՐՏ 10-ը**] Նշե՛ք, ինչդեմ, թե ինչպիսի ռեսուրսներ/սեփականություն ունեք Դուք/Ձեր ընտանիքը:

Q44.(M) Իսկ որքանո՞վ են մատչելի գույքի նշված տեսակները Ձեզ/Ձեր ընտանիքի համար (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է)

N	Ռեսուրսներ	Q43.(E)	Q44.(M)
1	Անձնական դրամական խնայողություն	1	
2	Նվիրատվություն/ժառանգություն	2	
3	Բիզնես (խանութ, ակումբ, արտադրություն և այլն)	3	
4	Վարձակալությամբ տրված սեփականություն	4	
5	Տեխնիկա (հաստոցներ, մեքենա-սարքավորումներ, գործիքներ, գյուղ տեխնիկա և այլն)	5	
6	Արտադրական տարածք/պահեստ սեփական կիրառության համար	6	
7	Անասնազվիաբանակ (հարցնել միայն գյուղերում)	7	
8	Գոմ/ամբար (հարցնել միայն գյուղերում)	8	
9	Բնակարան	9	
10	Կացարան/տնակ/սենյակ	10	
11	Ամառանոց	11	
12	Հողատարածք	12	
13	Ավտոտնակ	13	
14	Այլ (նշել) _____	14	
77	Ոչ մի (չկարդայ)	77	77
88	Հր. պատ (չկարդայ)	88	88
99	Դ. պ. (չկարդայ)	99	99

Q45.(I) **Գնահատե՛ք, խնդրեմ, թե որքանով են հետևյալ ֆինանսական հնարավորությունները կարևոր Ձեզ համար** (1. բոլորովին կարևոր չէ *(Q46.(S) չկարդայ)*, 2. ավելի շուտ կարևոր չէ *(Q46.(S) չկարդայ)*, 3. ավելի շուտ կարևոր է 4. շատ կարևոր է) *99. դ. պ. (չկարդայ)*

Q46.(S) **Նշե՛ք, խնդրեմ, թե որքանով եք Դուք բավարարված...** (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. լիովին բավարարված եմ) *99. դ. պ. (չկարդայ)*

N	Ֆինանսական հնարավորություններ	Q45.(I)	Q46.(S)
1	Եկամտի աղբյուրի տեսակ <i>(անհրաժեշտության դեպքում հղել Q41 հարցին)</i>	99	99
2	Ձեր ունեցած ֆինանսական խնայողություններ	99	99
3	Ձեր սեփականության/ունեցվածքի մակարդակ	99	99
4	Ձեր վարկ (նաև ապառիկ) վերցնելու հնարավորություն	99	99
5	Ֆինանսական կայունության աստիճան	99	99

Գ2. Կրթություն

Q47.(E) **Ասացե՛ք, խնդրեմ, հաճախում եք Դուք/Ձեր ընտանիքի անդամները որևէ ուսումնական հաստատություն:**

1. Այո՛ *2.Ո՛չ (անցում Գ3. Արողջասպասնություն)*

Q48.(M) **[Ցույց տալ ԲԱՄՏ 11-ը] Իսկ նշվածներից ո՞ր ուսումնական հաստատությունն եք Դուք/Ձեր ընտանիքի անդամները հաճախում:** *(նշել բոլոր հնարավոր տարբերակները)*

Q49.(E) **[Ցույց տալ ԲԱՄՏ 1-ը] (Կարդալ միայն Q48.(M)-ում նշված տարբերակների համար) Որտե՞ղ է գտնվում այն ուսումնական հաստատությունը, որտեղ հաճախում եք Դուք/Ձեր ընտանիքի անդամները** (1. համայնքում, 2. այլ համայնքում, 3. մարզկենտրոնում/այլ քաղաքում, 4. Երևանում *(Երևանում չկարդայ)*, 5. արտերկրում):

Q50.(M) **(Կարդալ միայն Q48.(M)-ում նշված տարբերակների համար) Ասացե՛ք, խնդրեմ, որքանով է մատչելի Ձեզ/Ձեր ընտանիքի համար նշված կրթական հաստատություններ հաճախելը:** (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է)

Q51.(M) **[Ցույց տալ ԲԱՄՏ -ը] Իսկ ինչպե՞ս եք վճարում Ձեր/Ձեր ընտանիքի անդամների ուսման համար:** (1. չենք վճարում, անվճար է, 2. սովորողի կրթաթոշակ/բարեգործական հիմնադրամից/գործատուի կողմից, 3. ընտանիքի եկամտից, 4. ազգականների/ընկերների անվերադարձ օգնությամբ, 5. պարտք վերցնելով, 6. վարկի միջոցով, 66. այլ)

N	Ուսումնական հաստատություններ	Q48.(M)	Q49.(E)			Q50.(M)			Q51.(M)		
			1	2	3	1	2	3	1	2	3
1	Պետական մանկապարտեզ	1									
2	Մասնավոր մանկապարտեզ	2									
3	Հիմնական դպրոց (1-9 դասարաններ)	3									
4	Հանրակրթական ավագ դպրոց (10-12 դասարաններ)	4									
5	Միջնակարգ դպրոց	5									
6	Միջին մասնագիտական հաստատություն/ուսումնարան	6									
7	Մասնավոր դպրոց	7									
8	Հատուկ դպրոց (հատուկ կարիքներով երեխաների համար)	8									
9	Քոլեջ, վարժարան	9									
10	Մասնագիտական ուսուցման/վերապատրաստման կենտրոն	10									
11	Պետական ԲՈՒՀ	11									
12	Մասնավոր ԲՈՒՀ	12									
13	Այլ (նշել)	13									

Q52.(E) Ինչպե՞ս կգնահատեք այն ուսումնական հաստատության պայմանները, որտեղ հաճախում եք Դուք/Ձեր ընտանիքի անդամները: (1. վատ, 2. բավարար, 3. լավ, 4. գերազանց) 77. նշված պայմանը բացակայում է

N	Ուսումնական հաստատության պայմաններ	Q52.(E) [նշել Q48.(M) աղյուսակում նշված կողերը]			
1	Բնակավայրին մոտ լինելը				
2	Կադրային ապահովվածությունը				
3	Մասնագետների պատրաստվածությունը				
4	Շենքային պայմանները				
5	Մարզադահլի (հաղարահի) առկայությունը				
6	Դասագրքերով ապահովվածությունը/ուսումնական և խաղային նյութեր				
7	Ճաշարանի առկայությունը				
8	Մատուցվող սննդի որակը				
9	Մատչելի վարձավճարը				
10	Տեխնիկական հագեցվածությունը (մանկապարտեզի համար չկարդայ)				
11	Համակարգչային սրահով ապահովվածությունը/հասանելիությունը (մանկապարտեզի համար չկարդայ)				
12	Գրադարանը (մանկապարտեզի համար չկարդայ)				
13	Այլ (նշել)				

Q53.(I) -Q54.(S) կարդալ միայն հարցվող ուսանողների համար

Q53.(I) Գնահատե՛ք, ինդրե՛մ, թե որքանով է Ձեզ համար կարևոր... (1. բոլորովին կարևոր չէ (Q54.(S)-ը չկարդայ) 2. ավելի շուտ կարևոր չէ (Q54.(S)-ը չկարդայ) 3. ավելի շուտ կարևոր է 4. շատ կարևոր է) 99. դ. պ. (չկարդայ)

Q54.(S) Որքանո՞վ եք Դուք բավարարված... (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. իովին բավարարված եմ)

N	Ուսումնական հաստատության առավելությունները	Q53.(I)	Q54.(S)
1	Դասավանդման որակ		
2	Ուսումնական պլանում ներառված առարկաների ցանկ		
3	Ուսումնական հաստատության առկա ծառայություններ (համակարգչային սրահներ, և այլն)		
4	Գրադարանային ծառայություններ		
5	Մասնագիտական աճին նպաստող արտալսարանային գործունեություն		
6	Կրթական հաստատության մատչելիություն		
7	Կիրառական գիտելիքներ, որոնք օգտակար են նախընտրած աշխատանքի ընդունվելու համար		
8	Կիրառական գիտելիքներ, որոնք օգտակար են ցանկացած աշխատանքի ընդունվելու համար		

Q3.Առողջապահություն

Q55.(M) Ասացե՛ք, ինդրե՛մ, հետևյալ նպատակներով Դուք /Ձեր ընտանիքի անդամները որքա՞ն հաճախ եք դիմում բժշկական հաստատությունների վերջին երեք տարիների ընթացքում:

N	Նպատակ	Ընդհանրապես չենք դիմում	Միայն խիստ անհրաժեշտության դեպքում	Տարին մեկ անգամ	Տարին 2-3 անգամ	Ամեն ամիս	Ամեն շաբաթ	Մշտական հաշվառման մեջ ենք
1	Ընդհանուր բուժում	1	2	3	4	5	6	7
2	Խորհրդատվություն	1	2	3	4	5	6	7
3	Հետազոտություն	1	2	3	4	5	6	7
4	Ախտորոշում	1	2	3	4	5	6	7
5	Հղիության վերահսկում	1	2	3	4	5	6	7

- Q56.(M) [Ցույց տալ **ՔԱՐՏ 12-ը**] Որքա՞ն հաճախ եք օգտվում մարմնի խնամքի հետևյալ տեսակներից: (1. երբեք, 2. ոչ կանոնավոր, ցանկության/անհրաժեշտության դեպքում, 3. պարբերաբար, տարին մի քանի անգամ, 4. պարբերաբար, ամիսը մեկ-երկու անգամ, 5. պարբերաբար, ամեն շաբաթ, 6. պարբերաբար, ամեն օր)
- Q57.(I) Որքա՞նով եք կարևորում մարմնի խնամքի հետևյալ տեսակները: (1. բոլորովին կարևոր չէ, 2. ավելի շուտ կարևոր չէ, 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է) *99. դ. պ. (չկարդայ)*

N	Մարմնի խնամքի տեսակներ	Q56.(M)	Q57.(I)
1	Մարզադաս (ֆիթնես ակումբ, լողավազան, յոգա և այլն)	99	99
2	Մատնահարդարում, պեդիկյուր	99	99
3	Ատամնաբուժություն	99	99
4	Դիմահարդարում (կոսմետոլոգիա)	99	99
5	Վարսավիրանոց	99	99
6	Սպա սրահ (մերսումներ)	99	99
7	Ինքնախնամք (մարմնամարզություն)	99	99

- Q58.(M) [Ցույց տալ **ՔԱՐՏ 1-ը**] Ասացե՛ք, խնդրեմ, թե անհրաժեշտության դեպքում հետևյալ բժշկական հաստատություններից որին եք դիմել վերջին 1 տարվա ընթացքում Դուք/Ձեր ընտանիքի անդամները և որտեղ: (1. համայնք, 2. այլ համայնք, 3. մարզկենտրոն, 4. Երևան/այլ քաղաք, 5. արտերկիր) *77. չենք դիմում (չկարդայ)*
(Q60.(M)-ը չկարդայ) (նշել մեկ պատասխան յուրաքանչյուր տողում)
- Q59.(M) (Հարցը կարդայ բոլոր տարբերակների համար) Իսկ որքա՞նով է մատչելի, ըստ Ձեզ, բուժումն այդ հաստատություններում: (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է) *99. դ. պ. (չկարդայ)*
- Q60.(M) Նշե՛ք, խնդրեմ, որքան ՀՀ դրամ եք ծախսել Դուք/Ձեր ընտանիքի անդամները բուժման և/կամ ծառայության վրա վերջին մեկ տարվա ընթացքում: (նշել բոլոր պատասխանները) *99. դ. պ. (չկարդայ)*

N	Բժշկական հաստատություններ	Q58.(M)	Q59.(M)	Q60.(M)
1	Բուժկետ/ամբուլատորիա/պոլիկլինիկա			
2	Ծննդատուն			
3	Մասնագիտացված կենտրոն			
4	Կոսմետիկ/պլաստիկ վիրաբուժական կենտրոն			
5	Ատամնաբուժարան			
6	Ոչ ավանդական/ժողովրդական բժշկության կենտրոն/մասնագետ			
7	Ընտանեկան բժիշկ			

- Q61.(E) Եթե դեղորայք և/կամ այլ բժշկական պարագաներ ձեռք բերելու անհրաժեշտություն է առաջանում, որտեղի՞ց եք դրանք գնում:
1. Համայնքի դեղատնից, որն աշխատում է շուրջօրյա
 2. Համայնքի դեղատնից, որն աշխատում է միայն որոշակի ժամերի
 3. Հարևան համայնքի դեղատնից
 4. Մարզկենտրոնից/այլ քաղաքից
 5. Երևանից
 6. Արտերկրից
 7. Այլ _____

Q62.(E) Կա՞ր արդյոք Ձեր համայնքում հետևյալ կենդանիների սպառնալիքը: («Ո՛չ»-ի դեպքում Q63.(M)-ի համապատասխան տողը չկարդայ)

Q63.(M) Երբևէ Դուք/Ձեր ընտանիքի անդամները որևէ կերպ տուժե՞լ եք Ձեր համայնքում առկա վտանգավոր կենդանիներից/միջատներից:

N	Վտանգավոր կենդանիներ, միջատներ	Q62.(E)			Q63.(M)	
		Այո՛	Ո՛չ	դ.պ.	Այո՛	Ո՛չ՛
1	Գիշատիչ կենդանիներ (գայլ, առջ) (Երևանում չկարդայ)	1	2	99	1	2
2	Օձ, այլ սողուններ	1	2	99	1	2
3	Կարիճ, թունավոր միջատներ	1	2	99	1	2
4	Փողոցային շներ, կատուներ	1	2	99	1	2
5	Առնետներ	1	2	99	1	2
6	Այլ (նշել) _____	1	2	99	1	2

Q64.(I) **Գնահատե՛ք, ինդրե՛մ, որքանով են կարևոր Ձեզ համար...** (1. բոլորովին կարևոր չէ (Q65.(S) չկարդայ), 2. ավելի շուտ կարևոր չէ (Q65.(S) չկարդայ), 3. ավելի շուտ կարևոր է 4. շատ կարևոր է) 99. դ. պ. (չկարդայ)

Q65.(S) **Որքանո՞վ եք բավարարված...** (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. լիովին բավարարված եմ) 99. դ. պ. (չկարդայ)

N	Առողջություն	Q64.(I)	Q65.(S)
1	Ձեր առողջական վիճակ		
2	Ձեր ֆիզիկական ակտիվություն		
3	Ձեզ մատուցվող առողջապահական ծառայությունների որակ		
4	Ձեզ մատուցվող առողջապահական ծառայությունների հասանելիություն		
5	Ձեզ մատուցվող առողջապահական ծառայությունների մատչելիություն		
6	Բժշկական ծառայությունների բավարար բազմազանություն		
7	Վաճառվող դեղորայքի մատչելիություն		
8	Վաճառվող դեղորայքի հասանելիություն		

Գ4. Հանգիստ, ժամանց, մշակույթ

Q66.(M) **Ասացե՛ք, ինդրե՛մ, վերջին 5 տարիների ընթացքում քանի անգամ եք մեկնել այլ քաղաք/մարզ/երկիր նշված նպատակներով:** (Նշել քանակը) 0-ոչ մի անգամ

N	Մեկնելու նպատակ	Q66.(M)
1	Ուսումնական այցելություն/գիտայց (թրեյնինգ, գիտաժողով, վերապատրաստում և այլն)	
2	Ծովային հանգիստ	
3	Պատմամշակութային արշավ/առաքելություն, ուխտագնացություն	
4	Արկածային/էքստրեմալ տուրիզմ	
5	Բուժում	
6	Գնումներ	
7	Գործնական գործուղումներ	
8	Այլ(նշել)	

Q67.(E) [Ցույց տալ **ՔԱՐՏ 1-ը**] **Որտե՞ղ եք սովորաբար անցկացնում Ձեր ազատ ժամանակը** (1. համայնքում, 2. այլ համայնքում, 3. մարզկենտրոնում/այլ քաղաքում, 4. Երևանում (Երևանում չկարդայ), 5. արտերկրում): 77. չի այցելում (չկարդայ), 99. դ. պ. (չկարդայ)

Q68.(M) **Իսկ որքա՞ն մատչելի է հանգստի հետևյալ ձևերից յուրաքանչյուրը Ձեզ համար:** (1. բոլորովին մատչելի չէ, 2. ավելի շուտ մատչելի չէ, 3. ավելի շուտ մատչելի է, 4. շատ մատչելի է) 99. դ. պ. (չկարդայ)

N	Ժամանցի ձևեր	Q67.(E)	Q68.(M)
1	Թատրոն և կինո		
2	Երաժշտական ներկայացումներ, համերգներ		
3	Սպորտային միջոցառումներ		
4	Ռեստորաններ և նմանատիպ վայրեր		

Q69.(I) **Գնահատե՛ք, ինդրե՛մ, թե որքանո՞վ է կարևոր Ձեզ համար հանգստին/ժամանցին վերաբերող հետևյալ գործոններից յուրաքանչյուրը** (1. բոլորովին կարևոր չէ (Q70.(S)-ը չկարդայ), 2. ավելի շուտ կարևոր չէ (Q70.(S)-ը չկարդայ), 3. ավելի շուտ կարևոր է, 4. շատ կարևոր է) 99. դ. պ. (չկարդայ)

Q70.(S) **Նշե՛ք, ինդրե՛մ, թե որքանով եք հույս բավարարված...** (1. բոլորովին բավարարված չեմ, 2. ավելի շուտ բավարարված չեմ, 3. ավելի շուտ բավարարված եմ, 4. լիովին բավարարված եմ) 99. դ. պ. (չկարդայ)

N	Ժամանց, հանգիստ, մշակույթ	Q69.(I)	Q70.(S)
1	Գրադարաններ այցելելու հնարավորություն		
2	Գրքեր (ոչ մասնագիտական) ընթերցելու հնարավորություն		
3	Թերթեր, ամսագրեր ընթերցելու հնարավորություն		
4	Հեռուստացույց դիտելու հնարավորություն		
5	Երաժշտություն ունկնդրելու հնարավորություն		
6	Կինո/թատրոն հաճախելու հնարավորություն		
7	Սրճարան, ռեստորան այցելելու հնարավորություն		
8	Պարելու հնարավորություն		
9	Երաժշտական գործիքի/գործիքների վրա նվագելու հնարավորություն		
10	Համերգներ գնալու հնարավորություն		
11	Միրաժ գրադուրն/ հետաքրքրությամբ զբաղվելու (ձեռագործ, կար, նկարչություն) հնարավորություն		
12	Սպորտով/մարմնամարզությամբ զբաղվելու հնարավորություն		
13	Զբոսնելու/զբոսալիներ այցելելու հնարավորություն		
14	Ճանապարհորդությունների/հանգստի հնարավորություն		

Բաժին Դ. Շրջակա միջավայր

Q71.(M) Նշված հնարգիական խնդիրներից որո՞նք են առկա Ձեր բնակավայրում: (1. առկա է, 2. առկա չէ (Q72.(M)-ը չկարդայ))

Q72.(M) Իսկ որքանո՞վ են վտանգավոր դրանք Ձեր ընտանիքի համար: (1. շատ վտանգավոր են, 2. մասամբ վտանգավոր են, 3. գրեթե վտանգավոր չեն, 4. ընդհանրապես վտանգավոր չեն) 99. դ. պ. (չկարդայ)

N	Շրջակա միջավայր	Q71.(M)		Q72.(M)				
		Առկա է	Առկա չէ					
1	Սողանքներ	1	2	1	2	3	4	99
2	Վարարումներ/ջրհեղեղներ	1	2	1	2	3	4	99
3	Օդի աղտոտվածություն	1	2	1	2	3	4	99
